

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Պապի Այցելութենէն Ետք

Հոռմի Ֆրանչիսկոս Պապի Հայաստան կատարած այցելութիւնը ու այս առթիւ Բահանայապետի ունեցած հայանպաստ ելոյթները, ոչ միայն ոգեւորութիւն յառաջացուցին համայն Հայութեան մօտ, այլ նաեւ յաղթանակ մըն էր Հայաստանի պետութեան համար:

Պապի այցելութեան առթիւ միջազգային մամուլը իր ուշադրութիւնը սեւերած էր Հայաստանի վրայ ու ընդհանրապէս դրական կերպով կ'անդրադառնար մեր երկրի մասին: Հայկական ցեղասպանութեան նամազման հարցը դարձեալ արժարժուեցաւ միջազգային թատերաբեմի վրայ: Լեոնային Ղարաբաղի հարցով հայկական կողմը առիթ ունեցաւ ներկայացնելու իր խաղաղասիրական տեսակետները:

Պապի պատմական այցելութիւնը ու այս առթիւ ձեռնարկած յաջողութիւնները, պէտք է անիթ դառնան, որ Հայաստանի դեկավարները գլուխն ինչ կակուղ քարձի վրայ դնելով, վերադառնան իրենց նախկին գործելաոճին: Ինչպէս Պապի այցելութենէն առաջ, նոյնպէս այլ այցելութենէն ետք, երկրի դիմագրաւած ընկերային, տնտեսական ու Բաղաճական հարցերը կը մնան նոյնը: Ատրպէյճանի թշնամական նկրտումները կը մնան նոյնը: Ժողովուրդի դժգոհութիւնը չէ վերացած: Ընդդիմադրութիւնը չէ ընդգրկուած երկրի Բաղաճական կեանքը դասաւորելու գործընթացներուն մէջ: Կուրուպցիայի եւ մեծաշնորհներու դէմ պայքարելու գծով եւրոպական կառոյցներուն տրուած խոստումները կը մնան անկատար: Տակաւին կարելի է շարքեր երկարել:

Մօտ օրէն պիտի սկսին Հայաստանի անկախութեան 25-ամեակի տօնակատարութիւնները ու այս առթիւ եւս, պիտի ներկայացուին քարձի-որակ հանդիսութիւններ ու ժողովուրդը ուրախ ու գուարք պիտի գայլցնելու Հանրապետութեան հրապարակը ու ակամատես ըլլալու մեծաճախ համերգներու եւ անոնց յաջորդող հրավառ-ութեան: Ժողովուրդի տրամադրութիւնը քարձի պահելը կարեւորագոյն ըլլալով հանդերձ, կարելի չէ քաւարարուիլ նման երեւոյթներով, որոնք վերջին հաշուով չեն կրնար հիմնական լուծումներու առաջնորդել:

Պապի այցելութեան առթիւ ձեռնարկած վարկը առաջին հերթին պէտք է օգտագործել հիմնական հարցերու լուծման, որոնք կը կարօտին գործնական փայլերու, իսկ անոնց նշոյլը, դժբախտաբար տեսանելի չէ տակաւին:

«ՄԱՍԻՍ»

## Ֆրանչիսկոս Պապը Հայաստան Այցելութեան Աւարտին. «Չէի Կրնար Չիշել Ցեղասպանութիւն Եզրը»

Կիրակի, Յունիս 26-ին Հոռմի Ֆրանչիսկոս Պապը, Հայաստան կեցութեան վերջին օր այցելեց Հայ-թրքական սահմանին վրայ գտնուող խոր Վիրապի վանքը, ուր Ամեմաջն Հայոց կաթողիկոսին հետ խաղաղութեան սպիտակ աղանձներ արձակուեցան Արարատ լեռան ուղղութեամբ:

Վատիկան վերադարձի օդանաւին մէջ, պատասխանելով լրագրողներու հարցումներուն Պապը կոչ ուղղեց հայերուն եւ ատրպէյճանցիներուն խաղաղութեան ուղիներ գտնելու: Պապը յայտնեց, որ հայերը առաջին քրիստոնեայ ազգն են, որովհետեւ Աստուած օրհնած է զանոնք: «Ես յոյս ունիմ, որ այդ ժողովուրդին համար արդարութիւն եւ խաղաղութիւն կ'ըլլայ: Ես կ'աղօթեմ անոր համար, որովհետեւ հայ ժողովուրդը խիզախ ազգ է: Ես գիտեմ, թէ որքան շատ ջանքեր կը գործադրուին այդ ուղղութեամբ եւ ես շատ ուրախացայ, երբ անցեալ շաբաթ տեսայ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն լուսանկարը: Անոնք գոնէ սկսած են խօսիլ», ըսաւ պապը, կոչ ուղղելով փոխադարձ ներողամտութեան:

Պատասխանելով Ցեղասպանութիւն եզրը արտասանելու մասին իրեն ուղղուած հարցումի մը, Պապը նշեց, որ լսելով Հայաստանի նախագահին ուղերձը եւ չիշելով անցեալ տարուայ իր խօսքերը, ինք չէր կրնար չարտասանել Ցեղասպանութիւն բառը: «Արժանիքի մէջ, երբ կը խօսին հայերու բնաջնջումին մասին, միշտ կ'օգտագործեն այդ եզրը: Պուէնտո Ալրէսի տաճարին մէջ տեղադրած ենք խաչքար՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան: Երկու հայ արքեպիսկոպոսներ՝



Հոռմի Պապը եւ Ամեմաջն Հայոց կաթողիկոսը սպիտակ աղանձներ կ'արձակեն Արարատ լեռան ուղղութեամբ

կաթողիկէ եւ առաքելական, եկան եւ հանդիսաւոր կերպով անոր բացումը կատարեցին: Ես ուրիշ բառ չեմ լսած: Երբ եկայ Հոռոմ, լսեցի Մեծ Եղեռն եւ սարսափելի ողբերգութիւն եզրերը, բայց չէի գիտեր ինչպէս զանոնք հայերէնով արտասանել», ըսաւ Պապը: Ան հաստատեց, որ միշտ խօսած է երեք ցեղասպանութիւններու մասին, ինչպէս նաեւ շարք մը այլ անելի փոքր ծաւալի մարդկութեան դէմ ոճիրներու մասին: «Կարելի է գործածել բնաջնջում բառը, սակայն Ցեղասպանութիւն յայտարարելը կը նշանակէ նաեւ փոխ հատուցում», ըսաւ պապը:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ իրենք տիրութեամբ կանդաղառնան Հոռմի պապին Հայաստան կատարած այցելութեան:

Նախարարութիւնը չիշեցուց, որ պապը Հայաստանի մէջ կրկնած է այն արտայայտութիւնները, որոնց պատճառով նախորդ տարի Թուրքիան հիասթափութիւն ապրած էր: Յայտարարութեան մէջ ըսուած է թէ, Թուրքիա չ'ընդունիր Ցեղասպանութեան հետ կապուած Հոռմի պապին յայտարարութիւնը եւ Ամեմաջն Հայոց կաթողիկոսին հետ հրապարակուած միացեալ յայտարարութիւնը: Անգարա նաեւ կը մտադրէ շուտով արտաքին գործոց նախարարութիւն կանչել Վատիկանի ներկայացուցիչը, բողոքելու համար պապի յայտարարութիւններուն դէմ:

Պապի Այցելութիւնը Հայաստան Հոռմի Ֆրանչիսկոս Պապը Մար.ը էջ 5

## Ալիե Խօսած է Ղարաբաղի Հարցի Փուլային Կարգաւորման մասին

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիե երկրի գինուոր-ականներուն հետ հանդիպման ժամանակ դրական գնահատած է Յունիսի 20-ի Մանկոթ Պետերբուրգի հանդիպումները Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներուն հետ:

«Մենք միայն փուլային տարբերակով կրնանք լուծել այդ հարցը: Ատրպէյճանի սկզբունքային դիրքորոշումը հարցի վերաբերեալ յայտնի է, այն երբեք չէ փոխուած եւ պիտի չփոխուի: Լեռնային Ղարաբաղը երբեք անկախութիւն պիտի չստանայ Ատրպէյճանի պատմական հողերուն վրայ: Ինչ

Մար.ը էջ 4

## Սերժ Սարգսեան. «Եթէ Հանրապետականը Պարտուի, Ես Քաղաքականութիւնում Անելիք Չեմ Ունենայ»

Միջազգային «Ռոյթերզ» մամուլի գործակալութեան տրուած հարցազրոյցի մը ընթացքին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան յայտարարեց որ, ընտրութիւններուն Հանրապետական կուսակցութեան պարտութեան պարագային, ինք քաղաքականութեան մէջ ընելիք այլեւս չունենար, ապա ծիծաղելով բացատրեց նման հաւանականութիւն: «Եթէ կուսակցութիւնը խորհրդարանական ընտրութիւններում անյաջողութեան մատնուի, ես ի՞նչ ունեմ այլեւս քաղաքականութեան մէջ անելու», - ըսաւ նախագահը:

Լրագրողի ճշդող հարցումին, թէ նման բան կ'ակնկալէ՞,

նախագահը ծիծաղով արձագանքեց. - «Ոչ»:

Հարցազրոյցի ընթացքին Սերժ Սարգսեան անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցին շեշտեց, որ Հոռմի Պապի սկզբունքային դիրքորոշումն ու Պունդեսթագի կողմէ արտայայտուած տեսակէտը ճանապարհ կը հարթեն այլ ազգերու կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման համար:

«Եւ ես վստահ եմ, որ Գերմանիայի կողմից Ցեղասպանութեան ճանաչումը, ու նաեւ Պապի հաստատակամութիւնը կը բերեն նոր ալիքի: Ես գրեթէ

Մար.ը էջ 4



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Քաղաքական Շահերի Ընտրական Կոնսենսուսը

ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Իշխանութիւնները Յունիսի 16-ին խորհրդարանական ուժերի միջև «Ընտրական օրէնագրքում ընտրական գործընթացի օրինականութեան վերահսկման կազմակերպական-տեխնիկական մեխանիզմների սահմանման շուրջ փոխհամաձայնութեան մասին» համատեղ յայտարարութեան ստորագրումը մատուցում են որպէս Ընտրական օրէնագրքի (ԸՕ) շուրջ այդքան սպասուած կոնսենսուսի ձեռքբերում եւ ներխորհրդարանական համագործակցութեան աննախադէպ արդիւնք: Բայց այդպէս է, արդեօք, իրականում:

Յայտարարութեամբ ԱԺ 5 խմբակցութիւնները նշում են, որ համաձայնութեան են եկել Ընտրական նոր ընդունուած օրէնագրքը նորից ենթարկել փոփոխութեան, որպէսզի դրանում ներառուեն նախկինում «4+4+4» եռակողմ ձեւաչափով ընթացող բանակցութիւններում տարա-ձայնութիւնների տեղիք տուած դրոյթների շուրջ նոր համաձայնութիւնները:

Յիշեցնենք, որ այդ բանակցութիւններում քննարկուած էին մի քանի հասարակական կազմակերպութիւնների կողմից ներկայացուած այն 5 սկզբունքային առաջարկութիւնները, որոնք ԸՕ-ում ընդունուածից էր կախուած համարուած դրա շուրջ հասարակական-քաղաքական կոմպրոմիսի կամ կոնսենսուսի ձեռքբերումը, դրանով իսկ՝ ապագայ ընտրութիւնների լեգիտիմութիւնը: Եւ ահա «4+4+4» ֆորմատի շրջանակներում վերակտուած բանակցութիւնների արդիւնքում, իշխանութիւնը համաձայնել է, նոր նմուշի նոյնականացման քարտերով ընտրողների մատնահետքերի նախնական էլեկտրոնային գրանցման համակարգ ներդնելուն: Բացի դրանից՝ համաձայնութիւն է ձեռք բերուել ստեղծել իշխանութիւնների, քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների եւ խորհրդարանի ընդդիմադիր խմբակցութիւնների ներկայացուցիչների հաւասար մասնակցութեամբ համատեղ յանձնաժողով, որը պէտք է մոնիթորինգի ենթարկի նոյնականացման քարտերով ընտրելու համար քաղաքացիների գրանցման գործընթացը, կազմակերպի ընտրութիւններին մասնակցութեան փոփոխութիւնների հետ կապուած հանրային իրազեկման աշխատանքները, ընտրատեղամասերում ընտրական գործընթացի նկարահանումը եւ ուղիղ հեռարձակումը: Ամենակարեւոր ձեռքբերումը համարուած է էլեկտրոնային գրանցման սարքաւորման միջոցով քուէարկութեանը մասնակցած անձանց վերաբերեալ, ընտրացուցակներում ընտրողների հերթական համարներով, վստահուած անձանց տեղեկանք տրամադրելու պարտաւորութեան սահմանումը: Դրանով փորձ է արուած ապահովել ընտրութիւններին մասնակցած քաղաքացիների ցուցակների հասանելիութիւնը:

Ոչ իշխանական ուժերին յաջողուել է յայտարարութեան մէջ ամրագրել, որ համաձայնութիւնները միասնական օրգանիզմ են: Այսինքն՝ թէ փոխհամաձայնեցուած կէտերից որեւէ մէկը

չներառուի ընտրական օրէնագրքում կամ դրանցից բխող միջոցառումներից որեւէ մէկը չիրականացուի, ապա համարուելու է, որ կոնսենսուս չկայ, որ յայտարարութիւնը կորցնում է իր քաղաքական ուժը: Այնչափ է՝ որ դրանով մի կողմից ընդդիմադիր համարուող ուժերը փորձել են իշխանութեան կողմից այդ միջոցառումները չիրականացնելու պատասխանատուութիւնից ապահովագրել իրենց, իսկ մյուս կողմից՝ ստանձնած յանձնատուութիւններից հրաժարուելու հարցում կաշկանդել իշխանութեանը:

Թւում է, թէ սա ընդդիմութեանը մարտավարական յաղթանակն է: Իրականում, սակայն, որեւէ իրական կոնսենսուս չի կայացել եւ յայտարարութիւնը մագաչափ չի մեծացրել նոր ընդունուած ԸՕ-ի նկատմամբ հանրային վստահութիւնը:

Նախ՝ կողմերին չի յաջողուել համաձայնութեան գալ մաքուր համամասնական ընտրակարգ կիրառելու հարցում, այսինքն՝ բացառել վարկանշային կամ տարածքային ցուցակների կիրառումը: Այս պահանջը ՀԿ-ների ներկայացրած 5 հիմնական առաջարկութիւններից մէկն էր եւ պայմանաւորուած էր նրանով, որ վարկանշային, տարածքային ցուցակների կիրառումը փաստացի մեծամասնական ընտրակարգի մոդիֆիկացուած, թաքնուած տարբերակն է, որով փորձ է արուած զգալիորէն հեշտացնել խորհրդարանական կառավարման եւ այսպէս կոչուած համամասնական ընտրակարգի պայմաններում իշխանութեան վերարտադրումը: Այն փաստը, որ նման երկարատեւ բանակցութիւնների արդիւնքում իշխանութիւնն ամէն դէպքում չզնաց այդ մեխանիզմից հրաժարուելուն, պարզորոշ ցոյց է տալիս, թէ որքան կենսական է համարում դրա պահպանումն իր համար: Մինչդեռ բանակցութիւնների ողջ իմաստն այն էր, որ նոր ընտրական համակարգը բացառի իշխանութեան արհեստականորէն վերարտադրման, նրան անգամ տեսականօրէն մեկնարկային առաւելութիւններ տուող որեւէ կառուցակարգ: Քանի դեռ մնում են դրանց հետ կապուած ակնյայտ կասկածներ, արժեքաւոր կոնսենսուսի մասին ուղղակի չի կարելի խօսել:

Որեւէ երաշխիք չկայ, որ անգամ ձեռք բերուած համաձայնութիւնները կեանքի կը կոչուեն: Խնդիրն այն է, որ դրանք ձեռք են բերուել մի շատ էական վերապահումով. նոր մեխանիզմները կեանքի կը կոչուեն միայն այն դէպքում, երբ միջազգային դոնոր կազմակերպութիւնները, մասնաւորապէս՝ ԵՄ-ն, ԵԱՀԿ-ն, կը համաձայնեն ստանձնել անհրաժեշտ ֆինանսաւորման ապահովումը: Սա գուցէ խնդիր չառաջացնէր, եթէ կոնսենսուսը լինէր լիարժէք, այսինքն՝ դրան մաս կազմեր նաեւ քաղաքացիական հասարակութիւնը:

Այս իրողութիւնները վկայում են, սակայն չի համարել՝ կոնսենսուս փողի դիմաց, քանի որ ակնյայտ է, որ առանց ֆինանսաւորման այն որեւէ արժէք չունի:

«ՀԵՏԲ»

Ալիեւը Զգոր Ձեւք Դրեց Հայաստանի Ձեռքին

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւն իր բանակի սպաներին յայտնել է, որ դէմ է շփման գծում հետաքննութեան մեխանիզմների ներդրմանը, ինչպէս նաեւ Ղարաբաղին Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնից դուրս կարգավիճակ տալուն:

Դրանով Ալիեւը վերջնականապէս մերժել է ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի, որը «նախագահում էր» Մալիսում Վիեննայի հանդիպմանը, ինչպէս նաեւ վարչապետ Պուտինի առաջարկները, որի հովանու ներքոյ Յունիսին հանդիպում է կայացել Սանկտ-Պետերբուրգում:

Միակ բանը, որին համաձայն է Ալիեւը՝ հրադարարի պահպանումն է առանց սարքաւորումների: Ալիեւը, սակայն, հրադարարի պահպանման ոչ մի երաշխիք չի տալիս:

Հայաստանի խորհրդարանի փոխիսօսնակ էդուարդ Շարմազանովն Ալիեւին կոչ է արել նորից կարգաւ Վիեննայի փաստաթուղթը, որտեղ նշուած է հետաքննութիւնների մեխանիզմների կարեւորութիւնը: Նա նաեւ յայտարարել է, որ Ղարաբաղի անկախութիւնն Աստուծոյ տրուած իրաւունք է, եւ Ալիեւը չէ, որ պէտք է այն շնորհի Ղարաբաղի ժողովրդին, որը երբեք չի լինելու Ատրպէյճանի կազմում:

Փաստօրէն, ապրիլեան պատերազմից եւ Ղարաբաղի հարցով երկու հանդիպումներից յետոյ իրավիճակը վերադարձել է զրոյական կէտի, եթէ հաշուենք, որ Ալիեւը ընդհանրապէս չի նուազեցրել ռազմատեւիչ հետտրաբանութիւնը: Դա չի նշանակում, որ նա ժխտում է ռազմական ուղին, աւելին, հիմա Ալիեւը վաբանկ է գնում՝ մերժելով միջնորդների առաջարկները, իսկ վաբանկի վերջին քայլը պատերազմն է: Սակայն, Ալիեւին կարծես թէ առայժմ արգելել են պատերազմը:

Էդուարդ Շարմազանովը կոչ է անում միջնորդներին գնահատել Ալիեւի պահուածքը: Սակայն Հայաստանը լաւ կ'անի դիմի ոչ թէ միջնորդներին, այլ սեփական խորհրդարանին, որը վերջերս մերժել է Ղարաբաղի անկախութեան ճանաչման օրինագիծը: Քաղաքական ուժերին՝ առաջին հերթին ՀՀԿ-ին, հարկ է յստակ արտայայտել սեփական դիրքորոշումը, ինչպէս ասենք Պաքոն է անում:

Նախկինում ընդունուած պայմանաւորուածութիւնների հրաժարուելու Ալիեւի որոշումը կարող է վկայել այն մասին, որ Ալիեւը մենակ է մնում միջազգային ասպարէզում. նրան այժմ չի կարող օգնել ոչ Թուրքիան, ոչ

Ռուսաստանը, որը, հնարաւոր է, ԱՄՆ-ի հետ պայմանաւորուել է դարաբաղեան կարգաւորման շուրջ:

Այսպէս թէ այնպէս, ՆԱՏՕ-ի գազաթնաժողովի նախօրէին, որը կայանալու է Յունիսի 8-9-ին վարչաւարում, Ատրպէյճանը ձեռնոց է նետել թէ ԱՄՆ-ին, թէ Ռուսաստանին՝ մերժելով առաջարկները: Սարգսեանին ու Ալիեւին կը հրաւիրէ՞ն ՆԱՏՕ-ի գազաթնաժողովին, նրանք կը համաձայնուեն մասնակցել, թէ՞ Ռուսաստանը Ղարաբաղում «երաշխաւորել է» հրադարարը վարչաւ մեկնելուց հրաժարուելու դիմաց:

ԱՄՆ-ում ընթացքի մէջ է նախընտրական պայքարը, վաշինգտոնը խուսափում է կտրուկ քայլերից: Հայաստանում աշնանը նախընտրական գործընթացներ են սկսուելու, եւ դարաբաղեան խնդիրը յետին պլան է մղուելու: Հաւանաբար, Ալիեւն այդ հաշուարկով է ամէն կերպ մերժում առաջարկները եւ փորձում պահպանել ներկայիս վիճակը:

Ալիեւը զրոյացրել է բոլոր պայմանաւորուածութիւնները, եւ Հայաստանը նոյնպէս վնասակար համաձայնողական դիրքերից հրաժարուելու հնարաւորութիւն է ստացել: Սերժ Սարգսեանը վատիկանի ռադիոյին տուած հարցազրոյցում յայտարարել է, որ ժողովուրդը չի հասկանում, թէ ապրիլեան պատերազմից յետոյ ինչպէս կարելի է Ատրպէյճանի հետ խօսել փոխզիջումների մասին:

Եթէ Ատրպէյճանը մտադիր է բանակցութիւնները զրոյաց սկսել, ապա Հայաստանը պէտք է զրոյացնի դիրքերը:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՒԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՁԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը



### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Վեներա Կի Յանձնաժողովը Քիչ է Համարել 20 Բոպէն Քուէարկուած Ցուցակները Ուսումնասիրելու Համար

Եւրոպայի խորհրդի Վեներա Կի յանձնաժողովը մտահոգութիւն է յայտնել, որ Հայաստանի ընտրական օրէնսգրքում առաջարկուող փոփոխութիւններով քուէարկուած ցուցակները վստահութեամբ անձանց հասանելի են լինելու ընդամենը 20 րոպէով: Այս մասին Վեներա Կի Յանձնաժողովի ներկայացուցիչները նշել են Յունիսի 24-ին, Ստրասբուրգում Հայաստանի ընդդիմութեան եւ իշխանութեան ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, որին մասնակցել են նաեւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ներկայացուցիչները:



ԲՀԿ ղեկավար Նաիրա Զոհրաբեան

Քննարկման թեման եղել են Հայաստանի Ընտրական օրէնսգրքի վերջին փոփոխութիւնները, որոնք Յունիսի 27-ին սպասուող արտահերթ նիստի օրակարգում են: Միջազգային կառույցները իրենց մտահոգութիւններն են ներկայացրել որոշ դրոյթների, ինչպէս նաեւ կարճ ժամանակահատուածում տեխնիկական նորամուծութիւնները իրագործելու հարցի վերաբերեալ: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց Ստրասբուրգում գտնուող ԲՀԿ ղեկավար Նաիրա Զոհրաբեանը:

Նրա խօսքով՝ վերահսկողական մեխանիզմներն այս կարճ ժամանակահատուածում իրագործելու առումով մտահոգուած էր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, իսկ Վեներա Կի յանձնաժողովը մտահոգութիւն է յայտնել մասնաւորապէս այն դրոյթի կապակցութեամբ, որ քուէարկուած ցուցակները վստահութեամբ անձանց հասանելի են ընդամենը 20 րոպէով:

«Մեր տպաւորութեամբ՝ իրենք եւս գտնուած են, որ 20 րոպէն խիստ քիչ ժամանակ է ցուցակները համեմատելու համար: Իրենք գտնուած են, որ բաւարար չէ եւ մեզանից յետոյ կառավարութեան ներկայացուցիչների հետ ժամանակ, կարծում եմ՝ այդ խնդիրը բարձրաձայնելու էին, որ 20 րոպէն բաւարար չէ եւ որ Ընտրական օրէնսգրքում առնուազն 40 րոպէ ամրագրուի», - ասաց նա:

«Հետաքրքրուած էին՝ կա՞ն արդեօք կազմակերպութիւններ, որոնք յանձն են առել այդ գործընթացը իրականացրել: Մենք նշեցինք, որ դեռեւս ամբողջական գումարը չկայ, բայց տարբեր ընկերութիւնների հետ բանակցութիւններ են վարում», - ասաց Նաիրա Զոհրաբեանը:

## Պաշտպանութեան Համակարգում Կոռուպցիոն Ռիսկերն Անհամեմատ Մեծ Են

Ուսումնասիրելով պաշտպանութեան ոլորտի գնումների գործընթացները՝ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻ) եզրակացրել է, որ կայ թափանցիկութեան խնդիր, իսկ հրապարակման ենթակայ տուեալների դէպքում առկայ է անհամապատասխանութիւն:

«Ուսումնասիրել ենք գնումների ջանքերի հաշուետուութիւնները եւ նկատել ենք, որ այդտեղ ընդհանրապէս տեղեկութիւնները իրարից տարբերուած են», - ասաց կենտրոնի փորձագէտ Արտակ Մանուկեանը:

Ոլորտի խնդիրների մասին Մանուկեանը խօսում է կոնկրետ օրինակով. 2015-ի Յունիսին Պաշտպանութեան նախարարութեան նիւթատեխնիկական ապահովման դեպարտամենտի ալժմ արդէն նախկին պետ Ալիկ Միրզաբեկեանը սնունդ է ձեռք բերել իր ազգանուանակից

վաճառողից. - «Եթէ լինէր երկուսն էլ Մանուկեան, կարելի էր այդքան չսեւեռուել դրա վրայ... Քանի որ հազուադէպ հանդիպող ազգանունն ա, աւելի հակուած ենք, որ այստեղ տեսնենք ռիսկ»:

Ընդ որում, հակակոռուպցիոն կենտրոնի մասնագէտները պարզել են, որ փաստաթուղթը կառավարութեան կայքից հետագայում հանուել է:

Մէկ այլ կոռուպցիոն ռիսկի մասին «Զինառ» եւ «Յենակէտ» ընկերութիւններում, որոնց բաժնէտերը Պաշտպանութեան նախարարութիւնն է. - «14.5 միլիոն 2014 թուականին «Զինառ» ՓԲԸ-ն իրականացրել ա ճաշկերպութիւն: Անհասկանալի է 2015 թուականին 81 միլիոն դրամի թերթի տպագրութեան պայմանագիրը «Յենակէտ» ՓԲԸ-ի հետ, որից միայն 12 միլիոն դրամն է, որ թերթի տպագրութեան վրայ է ծախսուել: Մնացածը գրած է՝ այլ տպագրութիւն»:

## Ուժայինների Ղեկավարները Հերթով Գնում Են Նախագահի Մօտ

«Հրապարակ» թերթը գրում է. «Մեր տեղեկութիւններով, չափազանց սրուել են ուժայինների ղեկավարների յարաբերութիւնները, յատկապէս՝ ոստիկանութեան եւ ԱԱԾ-ի: Հակասութիւններ կան նաեւ դատախազութիւն-ոստիկանութիւն, դատախազութիւն-Քննչական կոմիտէ յարաբերութիւններում: Աւելին՝ արդէն հակամարտող երկայակներ են ձեւաւորուել՝ Քննչական կոմիտէի եւ ՀՔԾ-ի պետն ընդդէմ զլխաւոր դատախազի, զլխաւոր դատախազն ու ԱԱԾ ղեկավարն ընդդէմ ոստիկանապետի եւ այլն: Նրանք պարբերաբար լինում են Բաղրամեան 26-ում եւ նախագահի «աչքերը բացում»: Իսկ երկրի ղեկավարին, որպէս կանոն, անհաշտութիւնը ձեռնարկ է. «բաժանիր, որ տիրես» բանաձեւը բոլոր ժամանակներում է կենսունակ»:

## Պատգամաւորները Կոչ Են Անում Ազատ Արձակել Ժիրայր Սեֆիլեանին

Հայաստանի շահերից է բխում օր առաջ հրաժարուել քաղաքապետութեանը ունեցող երկրի պիտակից: Այս մասին Յունիսի 27-ին, Ազգային ժողովում ասաց ԱԺ ՀԱԿ խմբակցութեան պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը՝ անդրադառնալով ժիրայր Սեֆիլեանի կալանքին:

«Ժիրայր Սեֆիլեանը կալանաւորուած է, ակնյայտ է՝ մենք գործ ունենք քաղաքական հետապնդման հետ: 1 տարի 3 ամիս առաջ Սեֆիլեանի դէմ յարուցուած քրէական գործի նախաքննութիւնը շարունակուած է, եւ այժմ էլ նոր քրէական գործով են կալանաւորում: Ես դատապարտում եմ Հայաստանում շարունակուող քաղաքական հետապնդումները, որոնք իրականացում են քրէական յօդուածների տանիքի տակ, եւ կարծում եմ՝ Հայաստանի շահերից է բխում օր առաջ հրաժարուել քաղաքապետութեանը ունեցող երկրի պիտակից», - ասաց Նիկոլ Փաշինեանը՝ նշելով, որ ինքը դատապարտում է նաեւ միւս քաղաքապետարկեալների բանտում գտնուելը:

«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը նոյնպէս միացաւ Փաշինեանի կոչին. «Երբ մարդկանց կողմից յայտարարուած է, որ իրենք պատրաստ են առաջնորդել եւ ազատագրել մեր հայրենիքը, դրանից յետոյ կալանաւորում են նրանք, դա նշանակում է՝ կալանաւորում են մեր հայրենիքն ազատագրողներին»:

Ժիրայր Սեֆիլեանին մեղադրանք է առաջադրուել ՀՀ քրէական օրէնսգրքի 235-րդ

յօդուածի 2-րդ մասով՝ Ապօրինի կերպով գէնք, ռազմամթերք, պայթուցիկ նիւթեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը:

Ժիրայր Սեֆիլեանի գործով կալանաւորուած 8 քաղաքացիներից Ներսէս Պողոսեանն իրեն առաջադրուած մեղադրանքը չի ընդունում եւ այն շինծու է համարում: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասել է նրա փաստաբան Արայիկ Պապիկեանը: Նա նշել է, որ իր պաշտպանեալն ընդհանրապէս ցուցմունք չի տուել, հրաժարուել է առերեսումից եւ հարցաքննութիւնից:

«Շինծու մեղադրանք է առաջադրուած եւ ինքը դա չի ընդունում միանշանակ: Պաշտպանեալն ընդհանրապէս ցուցմունք չի տուել ունէ մէկի դէմ կամ ինչ-որ բանի վերաբերեալ: Իսկ առերեսումն անհասկանալի էր, առերեսման են ներկայացրել գործով մեղադրեալներից մէկի հետ, բայց հրաժարուել է», - ասաց նա:

Արայիկ Պապիկեանը նշեց, որ իր պաշտպանեալը հասարակական ակտիւ դիրքորոշում է ունեցել, մասնակցել է տարբեր հաւաքների եւ չի բացառում, որ որեւէ հանրահաւաքի ժամանակ հանդիպած լինի ժիրայր Սեֆիլեանի հետ, սակայն, այն, ինչի մէջ մեղադրում են Ներսէսին, իրականութեան հետ ընդհանրապէս կապ չունի: Փաստաբանի խոսքով, գործով կալանաւորուած միւս քաղաքացիներից մարդ կայ, որին ճանաչում է Ներսէսը, բայց կան մարդիկ, որոնց ընդհանրապէս չի տեսել եւ չի ճանաչում:

## Վոլոդիա Աւետիսեանը Դադարեցրել Է Հացադուլը

Եթէ օր շարունակ հացադուլի մէջ գտնուող պահեստագործի գնդապետ Վոլոդիա Աւետիսեանն դադարեցրել է իր հացադուլը:

Ինչպէս «Ա1+»-ին յայտնեց «Ի պաշտպանութիւն Վոլոդիա Աւետիսեանի» յանձնախմբի համակարգող Գագիկ Սարուխանեանը, «Վարդաշէն» ՔԿՀ-ում նրան է այցելել Արդարադատութեան նախարարութեան ներկայացուցիչը եւ տեղեկացրել, որ պայմանական վաղաժամկէտ ազատ արձակուելու վերաբերեալ բարձրացուած հարցերը ուղղման պրոցեսի մէջ են:

Վոլոդիա Աւետիսեանը, ով գտնուում է ՀՀ ԱՆ «Վարդաշէն» ՔԿՀ-ում, իր եւ միւս ազատագրուած անձանց կողմից բաց նամակ էր յղել՝ ուղղուած ՀՀ զլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանին, ՀՀ արդարադատութեան նախարար Արփինէ Յովհաննիսեանին, ՀՀ Մարդու իրաւունքների պաշտպան Արման Թաթոյեանին, ՀՀ ԱԺ մի շարք պատգամաւորներին եւ ՀՔԱ վանաձորի գրասենեակի նախագահ Արթուր Սաքունցին:

Բաց նամակով նրանք դժգոհութիւն էին յայտնել, որ, ի թիւս այլ իրաւունքների, իրենք գրկուած են նաեւ պայմանական վաղաժամկէտ ազատ արձակուելու եւ բաց ռեժիմին անցնելու իրաւունքներից: Նրանք պահանջել էին, որ օրէնսդրութեանը համապատասխան՝ միջոցներ ձեռնարկուեն իրենց



Պահեստագործի գնդապետ Վոլոդիա Աւետիսեան

իրաւունքները վերականգնելու ուղղութեամբ:

Ըստ Վոլոդիա Աւետիսեանին առաջադրուած մեղադրանքի՝ նա 2000 դոլար կաշառք է վերցրել Հենրիկ Զաքարեանից՝ նրա թոռանը ժամկէտային ծառայութիւնից ազատելու համար, եւ 500 դոլար է պահանջել Ալբերտ Մաթոսեանից նրա որդուն զօրամասում համակարգչային օպերատոր նշանակելու հարցը լուծելու համար: Նրա մարտական ընկերները կարծում են, որ սա քաղաքական հետապնդում է պահեստագործի գնդապետի դէմ՝ իրենց սոցիալական պայմանները բարելաւելու նպատակով ազատամարտիկների բողոքի շարժումը ղեկավարելու համար:



ԼՈՒՐԵՐ

Հայ-Ամերիկեան Բանակցութիւնները Յաջողութիւններ են Գրանցել

Հայ-ամերիկեան աշխատանքային խմբի շրջանակում երկու կողմերը իրական յաջողութիւններ են գրանցել կենդանութիւնները, հանքարդիւնաբերութեան եւ տուրիզմի ոլորտներում: Երեւանում կայացել է հայ-ամերիկեան տնտեսական համագործակցութեան միջկառավարական յանձնաժողովի միջնաժամկէտ հանդիպումը ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար, յանձնաժողովի հայկական մասի համանախագահ Վաչէ Գաբրիէլեանի եւ ԱՄՆ փոխպետքարտուղարի Եւրոպայի ու Եւրասիայի հարցերով տեղակալ, յանձնաժողովի ամերիկեան մասի համանախագահ Բրիջիթ Բրինքի Բրինքի գլխավորութեամբ:



ԱՄՆ փոխպետ-քարտուղարի Եւրոպայի ու Եւրասիայի հարցերով տեղակալ Բրիջիթ Բրինքի

Կողմերը գոհունակութեամբ արձանագրել են միջկառավարական յանձնաժողովի գործունէութեան առաջընթացը՝ միտուած համատեղ փոխգործակցութեան խորացմանը: Ողջունելով յանձնաժողովի ամերիկեան մասի համանախագահ Բրիջիթ Բրինքին ՀՀ կառավարութիւնում, փոխվարչապետ Վաչէ Գաբրիէլեանը նշել է, որ երկու կողմերը ակտիւ աշխատանքներ են տարել ֆինանսական, Հայաստանի էներգետիկ ոլորտի դիվերսիֆիկացման, քաղաքացիական ակտիւացիայի ոլորտում բարեփոխումների («բաց երկինքի» քաղաքականութեան), արդիւնաւոր ճիւղերի թափանցիկութեան նախաձեռնութեանը Հայաստանի նախատեսուող անդամակցութեան, ինչպէս նաեւ կոոպերացիայի դէմ պայքարի հարցերում:

Հարցերի շուրջ աշխատելու համար: Ինչպէս նշել է Բրիջիթ Բրինքը՝ իր գործընկեր, ՀՀ փոխվարչապետ Գաբրիէլեանի հետ համագործակցութեան շրջանակում իր ուշադրութիւնը բեւեռուած է տնտեսական կապերի խորացման ուղիների վերահամայնումը, ԱՄՆ աջակցութեան հասցեականութեանը, հետագայ երկկողմ առեւտրին ու ներդրումներին եւ շուկայական բարեփոխումների խորացմանը Հայաստանում: Հայ-ամերիկեան աշխատանքային խմբի շրջանակում երկու կողմերը իրական յաջողութիւններ են գրանցել կենդանութիւնները, հանքարդիւնաբերութեան եւ տուրիզմի ոլորտներում: Ի լրումն դրա, նաեւ մեծ ուշադրութիւն է դարձում կոոպերացիայի դէմ պայքարում ՀՀ կառավարութեան ընթացիկ ջանքերին:

Յիշեցնենք, որ հայ-ամերիկեան տնտեսական համագործակցութեան միջկառավարական յանձնաժողովի նախորդ նիստը կայացել է Երեւանում, 2015 թուականի Նոյեմբեր ամսին:

Կողմերը պայմանաւորուեցին միջկառավարական յանձնաժողովի յաջորդ նիստն անցկացնել այս տարուայ վերջին, ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում:

ԱՄՆ փոխպետքարտուղարի Եւրոպայի ու Եւրասիայի հարցերով տեղակալ Բրիջիթ Բրինքը նշել է, որ տնտեսական համագործակցութեան հարցերով հայ-ամերիկեան աշխատանքային խումբը շարունակում է մնալ որպէս կարեւոր հարթակ փոխադարձ հետաքրքրութեան մի շարք

Ռուս Քաղաքագետի Կարծիքով «Ղարաբաղի Խնդիրը Չի Կարող Լուծուել Առանց պատերազմի»

Ղարաբաղի ինդիւրը չի կարող լուծուել խաղաղ ճանապարհով, առանց պատերազմի: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասել է ռուսաստանցի քաղաքագետ Ալեքսանդր Խրամչիխինը:

Նրա խօսքով՝ Լեւոնալին Ղարաբաղի հարցը կարող է լուծուել միայն մեծամասշտաբ ռազմական գործողութիւնների վերակամբ: «Կամ Ատրպէյճանը հասնում է ռազմին՝ ամբողջովին զբաղեցնելով Ղարաբաղի շուրջ տարածքները, կամ նա այնքան լուրջ պարտութիւն

է կրում, որ շատ երկար ժամանակով կորցնում է Ղարաբաղը գրաւելու հնարաւորութիւնը եւ անգամ առաւելագոյնս կապիտուլացում է ու համաձայնում նրա անկախութեանը», - նշել է Խրամչիխինը:

Անդրադառնալով կողմերի հնարաւորութիւններին այս պահին՝ քաղաքագետը նշեց. «Ատրպէյճանն, անխօս, ուժերով գերազանցում է, ընդ որում, ուժն աստիճանաբար աճում է, բայց միւս կողմից, ինչպէս ասպցուցեցին ապրիլեան իրադարձութիւնները, նա ի վիճակի չէ վճռական յաղթանակ ապահովել»:

Ալիւ Խոսած է

Շարունակուած էջ 1-էն

կը վերաբերի Ղարաբաղի կարգավիճակին, ասպայտ ապագայի հարց է: Իհարկէ, որոշ կարգավիճակ կարելի է տրամադրել: Ատրպէյճանի կազմէն ներս կայ Նախիջեւանի ինքնավար Հանրապետութիւնը: Սակայն այդ կարգավիճակը պէտք է խախտէ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը», - ըսած Ալիւն:

Ատրպէյճանի նախագահը անդրադարձած է նաեւ շփման գիծի վրայ հետաքննութեան մեքանիզմներու կիրառման հարցին: «Ինչ կը վերաբերի հայերու կողմիէ առաջ քաշուած նախապայմանին՝ միջադեպերու հետաքննութեան մեքանիզմներու կիրառման հարցին, կը կարծեմ, որ այս հանգրուանին անոր անհրաժեշտութիւնը չկայ:

Հայաստանի Խորհրդարանը Սկսեց Քննարկել Միացեալ ՀՕՊ Համակարգի Պայմանագիրը



Հայաստանի Ազգային Ժողովի նիստերէն մին

Յունիսի 28-ին ՀՀ Ազգային Ժողովում քննարկում էր Ռուսաստանի հետ միաւորուած հակաօդային պաշտպանութեան ուժեր ստեղծելու աղմկայարոյց համաձայնագիրը: Պատգամաւորներին հիմնականում հետաքրքրում էր, թէ ում են ի վերջոյ ենթարկուելու Հայաստանում տեղակայուած ՀՕՊ միաւորուած ուժերը եւ ինչ գործառոյթ կարող են դրանք իրականացնել Ղարաբաղին վտանգ սպառնալու պարագայում:

Ռուսաստանի հետ ՀՕՊ միաւորուած համակարգ ստեղծելու համաձայնագրում կառավարում տերմինը անմիջական ղեկավարումն է եւ այս դրոյթը վերապահուած է հայկական կողմին, ասել է պաշտպանութեան փոխնախարար Արա Նազարեանը՝ արձագանքելով այն մտահոգութիւններին, որ ՌԴ-ի հետ ՀՕՊ միաւորուած համակարգ ստեղծելու մասին համաձայնագրով Հայաստանը օդային պաշտպանութեան իրաւունքը զիջում է Ռուսաստանին:

«Հայաստանի Հանրապետութիւնը Ռուսաստանում չունի տեղակայուած որեւէ ռազմաբազա, բայց Ռուսաստանի դաշնութիւնը ունի եւ էս տեսանկիւնից լրացուցիչ ռեսուրս է, եւ լրացուցիչ կառավարելու է ՀՕՊ մասով նաեւ իրենց տեղակայուած միջոցները», - ասաց Նազարեանը:

Վերջինս համաձայնագրից ընթերցեց 6-րդ յօդուածի 3-րդ մասը, ըստ որի ՀՕՊ միաւորուած համակարգերի համատեղ գործողութիւնների կառավարումը

իրականացնում է Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերի Հակաօդային պաշտպանութեան գործերի պետը: «Համաձայնագրի 7-րդ կէտով սահմանուած է, որ հաւաքական անվտանգութեան կողմնակցութեամբ, որի օդային տարածքում գտնուած է օբիեկտը, որի նկատմամբ կիրառուած է զէնքը», - նշեց փոխնախարարը:

Ինչ վերաբերում է պատգամաւոր Թեւան Պողոսեանի այն հարցադրմանը, թէ հերթելու է հայկական կողմի «դուրը», որ ՀՕՊ-ն իրագործի առանց Ռուսաստանի թոյլտուութեան, Նազարեանն արձագանքեց. «Մեր դուրը հերթում է, եւ մենք ինքնուրոյն պէտք է ամէն ինչ պլանաւորենք, սա ուղղակի լրացուցիչ ռեսուրս է, որից չենք հրաժարուում»:

Հարցին, թէ եթէ Ռուսաստանը յարաբերութիւնները բարելաւում է թուրքիայի հետ, մենք կարո՞ղ ենք դա օգտագործել իր դաշնակիցներ Ատրպէյճանի եւ թուրքիայի դէմ, փոխնախարարը պատասխանեց. «Մեզ իրաւունք է վերապահուած օգտագործելու»:

Դիտարկմանը, թէ այդ դէպքում ինչու հայկական կողմը քայլ չարեց, երբ թուրքիան խախտել էր հայ-թուրքական օդային սահմանը, նա ընդգծեց. «Այ հիմա արդէն աւելի օպերատիւ կը լինի»:

Եթէ Հանրապետականը Պարտուի

Շարունակուած էջ 1-էն

կասկած չունեմ, որ մօտ ժամանակներս ֆրանսիացիները նորից կը տանեն իրենց խորհրդարան Յեղասպանութեան ժխտման քրէականացման օրինագիծը: Երկրորդ, ինչպէս յայտնի է, Գերմանիան շատ ծանրակշիռ խաղացող է եւ մեծ հեղինակութիւն ունի ողջ աշխարհում, եւ ես վստահ եմ, որ Գերմանիայի օրինակը շատ այլ երկրների համար կը դառնայ ուսանելի», - ըսաւ նախագահը:

Անդրադառնալով թուրքիոյ Եւրամիութեանն անդամակցելու ձգտումներուն, նախագահը կասկած չայտնեց, թէ Անգարան կը յաջողի ճնշումներու միջոցով մաս կազմել Եւրամիութեան: «Բայց մէկ-մէկ երեւի չփոթում են, թէ ում վրայ կարելի է ուժ գործադրել, ճնշում գործադրել, ում վրայ՝ չի կարելի:

Ես չեմ կարծում, որ թուրքիան այն երկիրն է, որ Եւրամիութեան վրայ կարող է ճնշում գործադրել: Անկեղծ ասած, ես չեմ տեսնում այն հնարաւորութիւնը, որ թուրքիային կը բերի Եւրամիութիւն», - ասաւ Սերժ Սարգսեան:

Միեւնոյն ժամանակ, ան ընդգծեց, որ Հայաստան չի պատկերացնէ բարեփոխումներու յաջող ընթացքը առանց Եւրամիութեան հետ համագործակցութեան: «Մենք շարունակելու ենք այդ ճանապարհը», - ըսաւ Սերժ Սարգսեան:

«Ռոյթերգ»-ին տրուած հարցազրոյցի ընթացքին նախագահը նաեւ անդրադարձաւ Սանկտ Պետերբուրգի մէջ տեղի ունեցած եռակողմ հանդիպումին, ըսելով թէ համաձայնած են շարունակել եռակողմ ձեւաչափով հանդիպումները՝ ի լրումն ԵԱՀԿ Մինսկի խումբի ձեւաչափի:



# Ֆրանչիսկո Պապի Հայաստան Այցելութիւնը

Շարունակուած էջ 1-էն

Ուրբաթ, Յունիս 24-ին ժամանեց Հայաստան: Երեւանի Զուարթնոց օդակայանին մէջ, սրբազան քահանայապետին ընդունելու եկած էին Հայաստանի նախագահն ու Ամենայն Հայոց կաթողիկոսը: Օդանաւի աստիճաններուն մօտ Պապին լաւաշով եւ ծիրանով ողջունեցին երկու հայ երեխաներ: «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբի սաները կատարեցին հայկական միջնադարեան շարականներ, ապա նախագահն ու Պապը ընդունեցին պատուոյ պահակախումբի վաշտի հրամանատարի գեկոյցը:

Զուարթնոց օդակայանին մէջ կազմակերպուած պաշտօնական ընդունելութենէն ետք Ֆրանչիսկոս Պապը ուղղուեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր հազարաւոր քաղաքացիներ եւ օտարազգիներ հաւաքուած էին ընդունելու մեծ հիւրը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ կազմակերպուած ընդունելութեան աւարտին, Հռոմի Պապը ուղղուեցաւ նախագահական նստավայր, ուր տեղի ունեցաւ տեսակցութիւն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ:

Նախագահը ուրախութիւն յայտնեց, որ յառաջիկայ տարի տեղի պիտի ունենայ Հայաստանի վատիկան դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-րդ ամեակի նշումը: Սարգսեանն ու Պապը ապա փոխանակեցին նուէրներ:

«Հայաստանը խաղաղութեան կը ձգտի, մեզի համար որեւէ պարագայի խաղաղ բանակցիլը գերադասելի է, քան կրակելը»: Այսպէս յայտարարեց Սերժ Սարգսեան, Հայաստանի իշխանութիւններուն, հասարակայնութեան ու Երեւանի մէջ հաւատարմագրուած դիւանագէտներուն հետ Հռոմի Ֆրանչիսկոս պապին տեսակցութեան ընթացքին:

Հռոմի Պապը իր պատգամին մէջ վերադարձաւ անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան եւ վերահաստատեց իր կեցուածքը:

«Այդ ողբերգութիւնը, այդ Յեղասպանութիւնը որ հարուածեց ձեր ժողովուրդին անհամար գոհեր պատճառեց: Այդ գլխաւորեց անցեալ դարու անմարդկային աղէտներու տիտղոս ցուցակը, որոնք իրականացուեցան ցեղապաշտական, գաղափարախօսական եւ կրօնական մոլորեցնող շարժառիթներով եւ որոնք միտքները մարդասպաններու միտքը», ըսաւ Պապը: Ան արտասանեց Եղիշէ Չարենցի «Ես իմ Անուշ Հայաստանի» բանաստեղծութենէն հատուած մը եւ նշեց, որ այդ կ'ամփոփէ ամբողջ ժողովուրդի մը ողբերգական ու փառաւոր փորձառութիւնը:

Նոյն օրը, Երեւանի մէջ տեղի ունեցաւ յատուկ նամականիշներ մարելու արարողութիւնը: Հայկական կողմէն արարողութեան մասնակցեցաւ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեանը: Իսկ Հայաստանի կեդրոնական դրամատունը հրապարակեց յատուկ յուշամետալ մը՝ նուիրուած Պապի Հայաստան այցելութեան:

Հռոմի Պապի Հայաստանեան այցելութեան երկրորդ օրը սկսաւ Միծեռնակաբերդէն, ուր սրբազան



քահանայապետը յարգեց Մեծ Եղեռնի մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակը: Պապը Միծեռնակաբերդ ժամանեց Ամենայն Հայոց կաթողիկոսի ընկերակցութեամբ, ուր զանոնք դիմաւորեց Հայաստանի Հանրա-

ողբերգութիւններ, ինչպիսին է այս, չհրկնուին, որպէսզի մարդկութիւնը չմոռնայ եւ իմանայ շարութեան յղթել՝ բարութեամբ: Թող Աստուած պարգեւէ սիրեցեալ հայ ժողովուրդին եւ ամբողջ աշխարհին խաղաղութիւն եւ



պետութեան նախագահը: Հնչեց վատիկանի օրհներգը, որմէ ետք սրբազան քահանայապետն ու իր պատուիրակութիւնը մօտեցան անմար կրակին մօտ: Ամենայն հայոց կաթողիկոսը արտասանեց տէրունական աղօթքը, որմէ ետք հնչեց Հայոց ցեղասպանութեան նահատակներուն նուիրուած շարականը:

Արարողութեան աւարտին, Ֆրանչիսկոս Պապը անմար կրակէն բացօթեայ ինքնաշարժով ուղղ-

մ իր թարուութիւն: Աստուած պահպանէ հայ ժողովուրդին յիշողութիւնը: Յիշողութիւնը կարելի չէ պղտորել կամ մոռնալ: Յիշողութիւնը խաղաղութեան եւ ապագայի աղբիւրն է», գրեց Ֆրանչիսկոս Պապը:

Հռոմի Պապի Միծեռնակաբերդ այցելութեան ընթացքին հայկական տուտուկ հնչեց Հայաստանի ժողովուրդական արուեստագէտ ձիւան Գասպար-



ուեցաւ Յիշողութիւններու պուրակ, ուր օրհնեց եւ ջրեց իր անունով տնկուած եղեւնին, ապա գրառուած կատարեց Հայոց ցեղասպանութեան թանգարան հիմնարկի պատուոյ հիւրերու տեսարակին մէջ: «Այստեղ կ'աղօթեմ՝ ցաւը սրտիս մէջ, որպէսզի այլեւս երբեք նման

եանի, վաստակաւոր արուեստագէտներ Գէորգ Տապաղեանի եւ Կամօ Սէյրանեանի կատարմամբ: Միծեռնակաբերդի մէջ հաւաքուած

հաւատացեալները Պապին հրաժեշտ տուին Viva Papa վանկարկումներով:

Ապա, Հռոմի Պապը ուղղուեցաւ Կիւմրի: Հազարաւոր քաղաքացիներու, օտարազգիներու եւ այցելուներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ պատարագ, քաղաքի կեդրոնական վարդանանց հրապարակին վրայ: Պատարագը մատուցուեցաւ լատինական ծէսով, իսկ շարականներու մէկ մասին երգեցողութիւնը՝ հայերէնով:

«Այսօր կը գտնուինք այստեղ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու: Աստուծմէ մեր ստացած սիրոյ միջոցաւ է, որ եկեղեցոյ դէմքը կը երիտասարդանայ եւ կը դառնայ հմայիչ: Կոչուած ենք միշտ կառուցելու եւ վերակառուցելու հարողութիւնը առանց յոգնելու, կամուրջներ կառուցելու ոչ թէ պարիսպներ կամ բաժանարար պատնէշներ: Հայ ժողովուրդը թող միշտ աւելի միասնական ըլլայ: Հաւատքի եւ սիրոյ մէջ՝ փոխադարձ յարգանքով եւ երկխօսութեամբ:

Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսը իր կարգին յայտարարեց, որ Հռոմի Պապին այցելութիւնը Կիւմրի հոգեւոր նորոգութիւն է Շիրակի հաւատացեալներուն համար: Պատարագի ընթացքին իր արտասանած քարոզին մէջ կաթողիկոսը յիշեցուց, որ Կիւմրին հայկական պատմական քաղաքներէն մէկը կը համարուի, ուր ծաղկած եւ ապրած են հայ քրիստոնէական արժէքները:

Պատարագի ընթացքին, վարդանանց հրապարակին վրայ հաւատացեալներուն նշխար բաժնուեցաւ՝ հոգեւորականներու ձեռամբ: Պատարագի աւարտին, Հռոմի Պապն ու Ամենայն հայոց կաթողիկոսը շրջապայեցան Ֆրանչիսկոս Պապի յատուկ մեքենայով եւ օրհնեցին հաւաքուածները:

Կիւմրի ժամանած էին նաեւ Վրաստանի քաղաքացիներ, որոնք եւս ստացան Պապին օրհնութիւնը:

Պատարագէն ետք Ֆրանչիսկոս Պապը ուղղուեցաւ հայ կաթողիկէ Անարատ յղութեան Հայ քոչրերու միաբանութեան «Տիրամայր Հայաստան» եկեղեցոյ Պողոսեան կրթական կեդրոն, ուր ճաշեց եւ հանգստացաւ: Ծաշանդանի շուրջ Պապը գրուեց կեդրոնի 60 սաներու հետ: Ան ապա լուսանկարուեցաւ երեխաներուն, բարեգործներուն եւ կեդրոնի նախկին սաներուն հետ:

Երեկոյեան, Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ տիեզերական աղօթք՝ Հռոմի Ֆրանչիսկոս Պապի եւ Գարեգին Բ. ի մասնակցութեամբ: Հազարաւոր քաղաքացիներ յետմիջօրէի ժամերէն սկսեալ հասան հրապարակ, ականատես դառնալու համար այս պատմական իրողութեան:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տեղեկատուական համակարգի տնօրէն Վահրամ Քահանայ Մելիքեան յայտարարեց, որ հայ եկեղեցին եւ հայ ժողովուրդը զնահատանքով կը սպասէին Հռոմի Պապին: Իսկ Ֆրանչիսկոս Պապի խօսնակ Ֆետերիքօ Լոմպարտի ըսաւ. «Կիւմրիի մէջ ես հասկցայ, որ այս պատմական օր մըն է: Ժողովուրդի աննախադէպ թիւ հաւաքուած էր»:



# ԿԱՐՕ ՓԱՅԼԱՆ

## «ԹՈՒՐՔԻԱՆ ԱՏԵՂԾՈՒԵԼ Է ՄԵԾ ԱՏԻ ՈՒ ՄԵԾ ՅԱՆՑԱՆՔԻ ՎՐԱՅ»



### ՆԱՆԷ ՍԱՀԱԿԵԱՆ ԵՒ ՏԱԹԵՒԻԿ ԼԱԶԱՐԵԱՆ

Հարց. - Նախ անդրադառնանք Ապրիլի 24-ին ընդառաջ Ձեր յայտնի ելույթին: Ըստ Ձեզ, ո՞րն էր այդ ելույթի ազդեցությունը:

Պատասխան. - Դժբախտաբար Թուրքիայի ժողովուրդը ոչինչ չգիտի իր անցեալի, պատմութեան մասին: Թուրքիան ստեղծուել է մեծ ստի վրայ եւ մեծ ջանքանքի վրայ: Թուրքերը հայերի մասին միայն մէկ նախադասութիւն գիտեն, թէ հայերը դաւաճաններ են՝ «նրանք դաւաճանել են մեզ, դրա համար մենք ստիպուած ենք եղել նրանց ուղարկել հեռու»: Նրանք չգիտեն, թէ ինչեր են արել հայերն այստեղ, չգիտեն նախկին պատգամաւորների մասին, ես ցանկանում էի ցոյց տալ բոլորին, որ այս երկրում եղել են հայազգի պատգամաւորներ, եւ նրանց երազանքը միասին խողովակներ են, նրանք չէին ցանկանում բաժանել երկիրը, որովհետեւ գիտէին, որ իւրաքանչիւր քաղաքում հայ կար եւ հարկաւոր էր գտնել միասին ապրելու եղանակը, պատգամաւորները այդպիսի երազանքներ ունէին: Ես ցոյց տուցի այդ մարդկանց դէմքերը, խօսեցի նրանց երազանքների մասին: Շատ ազդեցիկ ստացուեց, ելույթիցս յետոյ որոշ պատգամաւորներ մօտեցել ու հարցնում էին՝ «Իսկապէ՞ս հայ պատգամաւորներ են եղել խորհրդարանում»: Ես ցոյց տուցի նրանց, որ «այդ դուք էք դաւաճանել հայերին, գետնով տուել միասին ապրելու նրանց երազանքը»: Կարծում եմ՝ այս պատճառով այդ ելույթը մեծ արձագանգի արժանացաւ եւ՝

Թուրքիայում, եւ՝ Հայաստանում ու աշխարհի հայերի շրջանում:

Հարց. - Կարող ե՞նք ասել, որ Թուրքիայի խնդիրը ոչ միայն ծայրայեղական տրամադրութիւնն է, այլեւ տեղեկութեան, գիտելիքի պակասը:

Պատասխան. - Այո, դժբախտաբար, Թուրքիայում գիտելիքի լուրջ պակաս կայ, նրանք թաքցնում են անցեալը, չեն ցանկանում բացել սեւ արկղը, հիմա մենք խնդրում ենք նրանց բացել սեւ արկղիկը: Թուրքերն ասում են՝ «այս երկրի հիմ-նադիրները հերոսներ են», իսկ մենք ասում ենք՝ «այդ մարդիկ Հայոց ցեղասպանութեան մեղաւորներն են», սա լուրջ խնդիր է Թուրքական ժողովրդի համար, քանի որ Թալեաթ փաշան, էնվեր փաշան այս երկրում դեռ ապրում են որպէս հերոսներ, իսկ նրանց անուններով փողոցներ կան: Պատկերացնում էք Գերմանիայում քայլէք Հիտլերի անունը կրող փողոցով, նոյն պատմութիւնն է. արդէն հարիւր տարի է մենք ապրում ենք մի երկրում, որտեղ Թալեաթ, էնվեր եւ Զեմալ փաշաները հերոսներ են: Մենք ցանկանում ենք փոխել սա, ոչ միայն հայերի համար, այլեւ բոլոր միւսների համար: Այս երկրում այդ յանցանքը, ցաւօք, դեռ շարունակուել է, հիմա էլ տեղի է ունենում քրդական քաղաքներում, որոնք ժամանակին նաեւ հայկական քաղաքներ էին: Տիրապէքի Սուրը, որը նաեւ հայկական քաղաք էր, այսօր ումբակոծուել է, քրդերը նոյն բանի միջով են անցնում հարիւր տարի անց, որովհետեւ Թուրքիան չի առերեսուել յանցանքին, որն էլ հիմա դժբախտաբար շարունակուել է:

Հարց.- Բունդեսբազի բանաձեւը, ըստ Ձեզ, ազդեց Եւրամիութեան հետ Թուրքիայի յարաբերութիւնների վրայ:

Պատասխան. - Այսօր պետական գաղափարախօսութեանը Եւրամիութիւնը ընդհանրապէս չի հետաքրքրում: Իշխանութիւնները ժողովրդավարութեան մասին բոլոր քննարկումների դէմն առնում են: Արեւմուտքից եկած ցանկացած գաղափարի նրանք արձագանգում են նոյն կերպ՝ «նրանք ցանկանում են բաժանել Թուրքիան»: Դա շատ մեծ վախ՝ պարանոյա է Թուրքիայում, որը միշտ է եղել այս պետութիւնում եւ հիմա շատ է սրուել, ամէն ինչի համար Արեւմուտքին են մեղադրում: Եւրոպայի կողքին լինելու համար պէտք է ժողովրդավարութեան առումով զարգացում ունենալ, իսկ լինել ժողովրդավար՝ նշանակում է, որ հայերը, քրդերն ու թուրքերը հաւասար են: 100 տարի առաջ այս խնդիրը չլուծուեց, երբ հայերը ժողովրդավարութիւն եւ հաւասարութիւն էին պահանջում, հիմա էլ նոյնը քրդերն են անում, իսկ Թուրքիան դժբախտաբար արձագանգում է նոյն կերպ՝ սպանելով մարդկանց, ումբակոծելով քաղաքներ:

Հարց. - Պարոն Փայլան, Պոլսոյ Հայոց պատրիարքի ընդհանուր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթէշեանի Թուրքիայի նախագահին ուղղուած նամակը մեծ քննադատութեան արժանացաւ: Հայաստանում որոշ մարդիկ ասում էին, որ Աթէշեանն այլընտրանք չուներ, դա այն գիցն էր, որ վճարում են Թուրքիայում ապրելու համար: Կարծում էք այդպէս է՞:

Պատասխան. - Ամենեւին, դա Թուրքիայում ապրող հայերի համար խայտառակութիւն է: Վստահ եմ, որ Թուրքիայի հայերից ոեւէ մէկը Արամ սրբազանի պէս չի մտածում, խայտառակութիւն էր բոլոր հայերի համար: Անգամ եթէ ստիպուած էիր նման նամակ գրել, կարող էիր դիւանագիտորէն գրել, կարծում եմ՝ ինչ-որ մէկը այդ նամակը դրել էր Արամ սրբազանի առջեւ ու ստիպել ստորագրել,

բայց նա կարող էր եւ չստորագրել: 70-ականներին, երբ հայերի համար դժուար ժամանակներ էին, սրբազան ունէինք, ով երբեք նման նամակ չգրեց: Մենք՝ Թուրքիայի հայերս, Արամ սրբազանի նման չենք մտածում:

Հարց. - Անդրադառնանք Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններին. արձանագրութիւնների ստորագրումից ու սառեցումից յետոյ ինչպէ՞ս էք պատկերացնում երկու երկրների յարաբերութիւնների զարգացումը:

Պատասխան. - 20 տարի առաջ Հայաստանի համար Թուրքիան աւելի կարեւոր էր տնտեսական պատճառներով: Այսօր այդպէս չէ, որովհետեւ Հայաստանը վարժուել է Թուրքիայի հետ փակ սահմանով ապրելուն, տնտեսական յարաբերութիւններ ունի Իրանի, Վրաստանի, Ռուսաստանի ու միւս երկրների հետ: Ազգայնական համակարգին փակ սահման է պէտք, որ ցոյց տայ, թէ Ատրպէյճանը իր եղբայրն է, եւ մեղադրի հայերին ամէն ինչի համար, իշխող համակարգին թշնամի է պէտք, իսկ թշնամին հայերն ու Հայաստանն են: Այս խնդիրը լուծելու համար աւելի շատ ճնշում պէտք է գործադրենք: Պէտք է փոխենք հանրութեանը, ոչ թէ կառավարութիւնը կամ էրդո-ղանին: Թուրքիան ու Ատրպէյճանն ասում են՝ «մենք եղբայրներ ենք, թուրքեր ենք», բայց ազգութիւնից բացի, նրանց տնտեսութիւնն է կապում. Ատրպէյճանը ներդրումներ է անում Թուրքիայում, որի տնտեսութիւնը դրա կարիքը շատ ունի, իսկ էրդողանը նաեւ բիզնեսմէն է, նրան յուզում է, թէ փողը որտեղից է գալիս, գումարները գալիս են ոչ թէ Արեւմուտքից, այլ արաբական աշխարհից եւ Ատրպէյճանից: Նաեւ այս պատճառով է, որ էրդողանին այսօր Եւրամիութիւնը քիչ է հետաքրքրում, եւ դա շատ վատ է ընդդիմադիրների եւ դեմոկրատների համար, եւ եթէ ամէն ինչ այսպէս մնայ, կը շարունակուի նաեւ Թուրքիայի ժխտողական քաղաքականութիւնը ցեղասպանութեան հարցում:

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
SERVING BATON ROUGE SINCE 1979

**Bedros S. Maronian** 818/500-9585  
**Siamanto B. Maronian** 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաճեցու է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits





# «ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏ» ԳԻՐՔԸ ԿՐ ՆՈՒԻՐԵՄ ՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ, ՈՐ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ԾԱՆՉՆԱԼՈՒ ԻՐ ՅԵՐՈՍՆԵՐԸ ԵՒ ՆԵՐՇՆՉՈՒԵԼՈՒ ԱՆՈՆՑ ՆՈՒԱԾՈՒՄՆԵՐՈՎ

## Հարցազրույց՝ Ս.Դ.Յ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ, պատմաբան ԵՂԻԱ ԾԵՐԵՃԵԱՆԻ հետ

Յ. Կարելի՞ է անդրադառնալ Երեւանի մէջ այս տարի ձեր հեղինակած «Մեծն Մուրատ - Համբարձում Պոյաճեան» գիրքին մասին:

Պ. Գիրքը առանձին գիրք մը չէ, այլ մաս կը կազմէ «Հրասիրտները» մատենաշարին եւ այս մատենաշարի առաջին հատուածն է: Մատենաշարի նպատակն է հրապարակ բերել եւ վերստին անդրադառնալ մարդոց, որոնք իրենց ամբողջ կեանքը նուիրած են հայրենիքին եւ ազգին, եղած են շատ քաջ եւ խիզախ մարդիկ եւ այդ պատճառով ալ մատենաշարը նախընտրեցի կոչել «Հրասիրտները»:

Յ. Իսկ ինչո՞ւ «Հրասիրտները»:

Պ. «Հրասիրտները» բառը Չարենցի ստեղծած բառերէն է: Չարենցի մէկ լաւ բանաստեղծութիւնը որ դժբախտաբար այսօր շատ տարածուած չէ, Հայաստանին նուիրուած «Ողջակիզուող Կրակ» շարքէն է.

«Պրոնգէ Բոյր իմ, պրոնգէ Բոյր իմ, պրոնգէ Կա՛րս,

Լուսաւոր դու, հրասիրտ ու հրավարս,

Պրոնգէ Բոյր իմ, պրոնգէ Բոյր իմ, պրոնգէ Կա՛րս:

Գեղ խաչել եմ ու թել եմ երեսիդ,

Օ, երկիր իմ, հրադեմ ու հրասիրտ,-

Պրոնգէ Բոյր իմ, պրոնգէ Կա՛րս իմ երազի»:

Շատ գեղեցիկ բանաստեղծութիւն մը արդարեւ, որուն մէջ տեղ գտած «Հրասիրտ» բառը շատ յարմար գտա՞ գործածելու որպէս խորագիր, որովհետեւ այս բառին նման, այս հերոսները իրապէս ունէին հուրէ սիրտ, անվախ էին եւ պատրաստ՝ իրենց կեանքը նուիրաբերելու իրենց հայրենիքին: Ուրեմն Մեծն Մուրատը առաջինն է այս շարքին: Իսկ թէ ինչո՞ւ Մեծն Մուրատը... բնական է մէկէ մը պիտի սկսէի, եւ նկատի առած որ Մեծն Մուրատի կեանքի մասին տուեալները շատ թերի էին եւ ոչ ամբողջական, հակառակ իր վայելած մեծ հռչակին եւ բազմաբնույթ գործունէութեան, հետեւաբար ընտրութիւնս տեղին էր:

Օրինակի համար անոր երեսփոխանական գործունէութիւնը՝ 1908-էն 1912, դժբախտաբար մինչեւ այսօր չէ արժանացած մանրամասն եւ ամբողջական մեկնաբանութեան, հակառակ որ իր պաշտօնավարման ժամանակաշրջանին ինք շատ հետաքրքրական եւ շատ արդիական կեցողութեան արտայայտած էր եւ ելոյթներ ունեցած էր իր ապրած ժամանակաշրջանին համեմատ: Մուրատ աւելի ծանօթ էր որպէս յեղափոխական, որպէս Գոմ Գափուի ցոյցի առաջնորդ նաեւ Սասնոյ Ա. ապստամբութեան ղեկավար, մինչ երեսփոխան եղած ժամանակաշրջանի մասին միայն համեատ յիշատակում մը կայ, առանց անդրադարձ կատարուելու անոր լայնածիր գործունէութեան մանրամասններուն: Ուսումնասիրութիւններուս եւ պրպտումներուս ընթացքին գարմանքով գտայ որ ան իսկապէս արդար իրաւունքը ունի նաեւ ներկայացուելու որպէս քաղաքական գործիչ, այնքան որ պայծառատես եւ խիզախ կեցուածքներ ունեցած էր խորհրդարանին մէջ: Երկրորդ օրինակ մըն

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան 20 ամֆա հերոսներու կախաղան քարճարացման եւ նահատակման 101րդ տարելիցին առթիւ, հարցազրույց լիբանանահայ հասարակական-բաղաճական գործիչ, պատմաբան եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամ Եղիկ Ճերեճեանի հետ, որ վերջերս հրատարակած էր ինքնին Քսան նահատակներէն շուրջ մէկ ամիս ետք, Յուլիս 30-ին, Կեսարիոյ մէջ կախաղան քարճարացած եւ մէկ հերոս նահատակի՝ Մեծն Մուրատին մուրհոմ հատորը՝ «Մեծն Մուրատ - Համբարձում Պոյաճեան» խորագրեալ գիրքը որ հրատարակուիւն է Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի: Այս գիրքը «Հրասիրտները» Մատենաշարի առաջին հատուածն է: Եղիկ Ճերեճեան նաեւ հեղինակ է պատմագրական 6 աշխատութիւններու:



է իր աքտրեալի ժամանակաշրջանը: Մեծն Մուրատ 12 տարի աքտորուած է Լիպլիոյ անապատը, բայց ոչ թէ ազատ աքտոր, այլ սոթի, մոծակներու, կարիճներու, օձերու եւ բանտային ահաւոր պայմաններու մէջ ան գոյատեւած էր եւ այս բոլորէն ետք, 1906-ին ան յաջողած էր խոյս տալ բանտէն եւ փախչիլ ու ծովու ճամբով հասնիլ Մարտի: Առասպելական փախուստ մը արդարեւ, որուն մանրամասները դժբախտաբար չկային: Սակայն բարեբախտութիւնը ունեցայ այդ մասին արխիւներ գտնելու, որոնք տակաւին ունէ մէկ պատմաբանի աչքէ չէ անցած: Ուրախ եմ որ օգնեցի, իր գործունէութեան այդ երեսն ալ հրապարակ գալուն:

Օրինակ՝ աքտորէն ազատագրումէն ետք, ան հետիոտն գացած էր Թիֆլիս Սասունի ապստամբութեան նախապատրաստուելու համար: Անոր այցելած վայրերը՝ ապստամբութեան օժանդակութիւն հաւաքելու համար, ակնկալած օգնութիւնը ստացա՞ւ թէ ոչ, հասա՞ւ իր նպատակին թէ ոչ... այս բոլորը անյայտ մասեր էին իր կեանքին մասին:


Յ. Յայ մեծաթիւ հերոսներուն մէջ ստոյգ Մեծն Մուրատի ընտրութեան մէջ որքանո՞վ ծանրակշիռ էր ձեր կենսագրականներու հասարակ յայտարարները՝ յատկապէս որպէս համաքաղաքացի, հասարակական, քաղաքական գործիչ եւ պետական երեսփոխան:

Պ. Երբ պրպտումներուս որպէս արդիւնք, իսկապէս լուսաբանիչ եւ հպարտութիւն առթող բոլոր նոր տուեալներուն եւ յայտնաբերումներուն ի տես, նախընտրեցի Մեծն Մուրատով սկսիլ, եւ իսկապէս Մեծն Մուրատը արժանի է որ իրմով սկսուի այս մատենաշարը եւ ես, որպէս գիրքի հեղինակ, իսկապէս ուրախ եմ որ կրցայ Մեծն Մուրատի պէս կերպար մը աւելի ամբողջական ձեւով ներկայացնել ընթերցասէր հանրութեան եւ գաղափարակիրք երիտասարդութեան: Ունեցած է առասպելային կեանք մը. եղած է Չորիի վրայ շրջուն մանրավաճառի մը գաւա-

կը, մեծցած Հաճնոյ լեռներուն եւ ձորերուն մէջ եւ հասած Թուրքիոյ խորհրդարան: Անոր ամբողջ կեանքը եղած է պայքարի, բանտարկութիւններու շրթայ մը, նոյնիսկ չարաբերաբար խաղաղ ժամանակաշրջանին, Սահմանադրական Թուրքիոյ ժամանակաշրջանին, ինք թէ՛ որպէս երեսփոխան եւ թէ՛ որպէս ազգային գործիչ, միաժամանակ Ազգային Երեսփոխանական ժողովի անդամ եւ այդ ժողովէն բխած Ապահովական խորհուրդի անդամ, որ շատ զգուշ եւ խիստ զաղտնի ձեւերով պէտք է պատրաստէր հայկական բարեկարգումներու ծրարիչը, ինք հանդիսացած էր այս բոլոր աշխատանքներու կեդրոնական դէմքերէն մէկը:

Իսկապէս հարուստ եւ զեղուն կեանք մը, որ 18 տարեկանէն անդամագրուած եւ զինուորագրուած էր յեղափոխական շարժման եւ մինչեւ իր շատ կանուխ՝ 55 տարեկանին նահատակութիւնը, այսինքն զիտակցական իր ամբողջ կեանքը անմնացորդ նուիրած էր յեղափոխական եւ գաղափարական պայքարին, ազգային գործերուն մէջ իր կեանքը անցուցած կերպար մըն է եւ մեծ սիրով նախընտրեցի սկսիլ Մեծն Մուրատով, որուն հերթաբար պիտի յաջորդեն ուրիշներ:

Ես չեմ ուզեր հերոսներու միջեւ բաղդատական ընել... ով մեծ էր, ով պզտիկ, ով արժանաւոր էր, ով՝ ոչ... այնքան ատեն որ մէկը իր հայրենիքին նուիրուած է, հերոս կը նկատուի եւ ամէն մարդ իր կարողութեան սահմաններուն մէջ իր կարելին կ'ընէ, կարելի չէ բաղդատական կատարել... հետեւաբար ինչպէս ըսի՝ տեղէ մը պէտք է սկսէի եւ այդ անձնաւորութիւնը հանդիսացաւ Մեծն Մուրատը՝ բուն անունով Համբարձում Պոյաճեան, որուն եղբայրը նոյնպէս եղած է մեծ յեղափոխական Յարութիւն-Մարտիրոս Պոյաճեանը, ծանօթ Ժիրայր անունով, մինչ քոչըրը՝ Հրանտի Պոյաճեան նոյնպէս ոչ պակաս յեղափոխական գործունէութիւն ունեցած է, ըլլալով խիզախ կին մը: Յ. Կ'արժէ նշել թէ այս գիրքին



մէջ իսկապէս մեծ բժախնորութեամբ եւ յետին մանրամասնութիւններով հաւաքած էք հայ ազգային ազատագրական պայքարի գործիչ Մուրատ Պոյաճեանի կեանքի տուեալները, ինչ որ ինքնին իսկապէս աշխատանք կ'ենթադրէ: Ինչպէ՞ս ընթացան այս աշխատանքները եւ ի՞նչ աղբիւրներ օգտուեցաք:

Պ. Երբ այս աշխատանքին սկսայ, ինծի համար ալ տակաւին բոլոր աղբիւրները յստակ չէին եւ ես այդ պրպտումներուս եւ փնտտութեան մէջ մեծ զարմանքով չաչտնաբերեցի արխիւային այնպիսի նիւթեր, ինչպէս իրեն ուղղուած եւ իր կողմէ գրուած մեծ թիւով նամակներ: Օրինակի համար շատ հետաքրքրական Յնամակ գտայ, որոնք Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը յղած է երկու ընկերներու, եւ հատ մըն ալ ինքնին Մուրատին, Արեւմտեան Թրիփոլիէն իր փախուստը կազմակերպելու համար: Բոլորովին անյայտ արխիւ էր սա: Օգտուեցայ նաեւ Դաշնակցութեան արխիւէն: Մուրատը ունեցած էր նաեւ ծոցատետր, մանաւանդ Սասնոյ ապստամբութեան ժամանակ, որովհետեւ ինք գիւղ առ գիւղ այցելութիւններ տուած է, գիւղերուն կարգ մը հարցերը լուծած է, եթէ քննութիւններ կար՝ հաշտեցուցած է, ստուգած է որ ապստամբութեան մը պարագային որքան գէնք եւ որքան կուռող ուժ ունի այդ գիւղը: Մէկ խօսքով եղած է ծրագրող եւ կազմակերպող միտք, մինչ իր քաջութիւնն ու անկեղծութիւնը, ինչպէս նաեւ նուիրում մը իր առաքելութեան, մղած է որ Սասունի բոլոր գիւղերը իր շուրջ հաւաքուին, ուր որպէս հեղինակութիւն, առանց քննարկումի իր խօսքը օրէնքի համազօր էր: Երկիւղածութեան աստիճան չարգանք կը վայելէր Մեծն Մուրատ եւ ասիկա պատահական չէր: Անոր անձնական յատկանիշները՝ ժողովրդասիրութիւնը, ընկերասիրութիւնը, քաջասրտութիւնը, համեստութիւնը եւ յատկապէս բարի համբաւը, պատճառներ էին որ սիրուի ժողովրդային խաւին կողմէ եւ ինք՝ օգտագործելով ժողովուրդին սէրը, եղաւ լաւ կազմակերպիչ: Այդ շրջանի վկանները, պայծառ չէ որ հնչակեան, խոր չարգանքով կը յիշեն Մուրատը, թէ ան ինչպիսի խոր նախանձախնդրութեան կը կազմակերպէր Սասնոյ շրջանի ապստամբութիւնը եւ թէ ինչպէս ժողո-



### «ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏ» ԳԻՐՔԸ

Շարունակուած էջ 7-էն

վորդը սիրով կ'ենթարկուէր իրեն: Այսինքն՝ եղած էր թէ՛ կուռուղ եւ թէ՛ կազմակերպիչ: Երկու յատկութիւններն ալ ունեցած է այս անձնաւորութիւնը:

Որպէս աղբիւր կարելոր կը նկատեմ յիշատակել Սահմանադրական Թուրքիոյ ժամանակաշրջանին հայ թերթերու եւ յատկապէս Պոլսահայ թերթերու հակայցանցը: Այս թերթերը, բարեբախտաբար, սովորութիւն ունեցած են խորհրդարանական նիստի յաջորդօրը մանրակրկիտ ձեւով անդրադառնալու նիստի մանրամասնութիւններուն գրուցներ, օրակարգեր, քննարկումներ եւ երբեմն նոյնիսկ ձեռնամարտերուն, որոնք կը պատահէին այդ նիստերու ընթացքին:

Եւ ժողովուրդը այլ աղբիւր չունէր տեղեկանալու համար այդ ժողովներու մանրամասնութիւններուն. միայն մամուլն էր որ այս գծով կը գոհացնէր պահանջարկը եւ ահաւասիկ ասկէ մեկնած է որ աչքէ անցուցի – սանտրեցի – այդ շրջանի պոլսահայ ամբողջ մամուլը, աւելի ճիշդ՝ այն ինչ որ գտանելի էր, յատկապէս Հայաստանի Ազգային Գրադարանին մէջ, ուր բաւական մեծ հաւաքածոներ կան: Աչքէ անցուցի բոլոր թերթերու անդրադարձները խորհրդարանի մէջ եղածներուն եւ անցուդարձերուն մասին եւ այստեղէն է որ կրցայ դուրս հանել Մեծն Մուրատի ելուցքները խորհրդարանին մէջ: Երկրորդական ելուցքներու կողքին կային մեծապէս կարեւոր եւ իսկապէս արդիական ելուցքներ, ինչպէս նոր անձնաթուղթերու հրատարակումը Թուրքիոյ մէջ, որուն գծով ալ Մուրատն ու իր գործակիցներէն երեսփոխան Վարդգէս Սերենկիւլեան առաջարկեցին եւ պնդեցին, որ մինչ այդ միայն կրօնական պատկանելիութեան՝ իսլամի թէքրիստոնեայի կողքին նշուի նաեւ ազգային պատկանելիութիւնը: Ահաւասիկ այս գծով իր ունեցած ելուցքին մէջ Մուրատ այն գաղափարը կը յայտնէ որ իսլամ հայն ալ հայ է. հայ պէտք է ընդունիլ իսլամ հայը: Ահաւասիկ այդ մտայնութիւնը, որ այժմ իսկապէս արդիական է, առաջին անգամ հնչած էր Մուրատին կողմէ, նկատի առնելով որ կային բուն կրօնափոխ համընդհանրեալ եւ անոնց նկատմամբ ինչպիսի վերաբերում դրսեւորելու մասին ասկէ 100 տարի առաջ պատասխանած է Մուրատ, ըստ որուն, եթէ հայը բուն իսլամացած է, առանց իր կամքին, չի նշանակեր որ հայութեան դադրած է: Ըստ իս, շատ հետաքրքրական է նաեւ իր

ելուցքները աշխատաւորական շահերու պաշտպանութեան՝ սենտիքայականութեան մասին: Այն ատեն սենտիքա հասկացութիւնը տակաւին նոր էր Թուրքիոյ մէջ, ցոյց ընելու արտօնութեան հասկացութիւնը տակաւին նոր էր... սակայն այս բոլորին մասին ան խօսած էր եւ հարցը բարձրացուցած խորհրդարանին մէջ, պնդելով որ ինք ընկերվարական էր եւ կը պաշտպանէր աշխատաւորութեան շահերը:

Անշուշտ, խորհրդարանը լեցուն էր կրօնամոլներով, տգէտներով, որոնք ընկերվարութեան մասին գաղափար չունէին եւ մինչեւ իսկ Մուրատը ձեռնուր կ'ըլլէին, բողոքելով որ Սատանայի գաղափարներ Եւրոպայէն կը բերէր եւ իրենց ժողովուրդը սխալ ճամբաներու մտադիր էր տանիլ:

Սակայն Մուրատի արտայայտած գաղափարները, ժամանակի ընթացքին, պարբերաբար, ընդունուեցան ամբողջ Եւրոպայի կողմէ, ինչպէս նաեւ մասամբ մըն ալ Թուրքիոյ կողմէ: Կնոջ հաւասարութեան եւ տուրքերու արդար հաստատման մասին եւս Մուրատ արծարծած էր օրին եւ ելուցքներ ունեցած:

Յ. Ապրիլ 24-ի նախօրէին, Թուրքիոյ Մեծիսի, խորհրդարանի ժողովուրդներու դեմնկրատական դաշինք կուսակցութեան անդամ հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան, իր հետ խորհրդարան տարած էր 1915 թուականին՝ Հայոց ցեղասպանութեան առաջին օրերուն սպաննուած հայ պատգամաւորներու, ներառեալ Համբարձում Պոյաճեանի ու Յակոբ Պոյաճեանի նման հայ պատգամաւորներու լուսակարները, վեր յիշեցնելու համար թուրք պատգամաւորներուն, որ իրենց իսկ նստած աթոռներուն վրայ, 101 տարիներ առաջ նստած էին այս արժանի հայորդիները, որոնք նոյնպէս ենթարկուած էին ցեղասպանութեան եւ նոյնպիսի գարնապանութեան եւ նոյնպիսի գարնապանութեան ինչպէս իրենց ժողովուրդը:

Ի՞նչ էր ձեռնարկը երբ տակաւին նոր հրատարակուած ձեռք գիրքին հերթը 101 տարի ետք վերադարձաւ Թուրքիոյ խորհրդարան եւ արժանացաւ յարգանքի գէթ արդար մարդոց կողմէ:

Պ. Ես նախ կ'ուզեմ ողջունել Կարօ Փայլանը իր այս խիզախ եւ նորարար ժեստին համար: Իրապէս որ մենք առաջին հերթին զարմացանք եւ սկսանք մտահոգուիլ որ իրեն մահուան վտանգ մը չսպառնայ, բայց պէտք է ըսել որ քաղաքական կեանքը միշտ ալ խիզախութիւններ սիրող է եւ քաղաքական մարդը պէտք է վախ ունենայ քաղաքական խիզախ

քայլեր առնելու համար եւ Կարօ Փայլան խորհրդարանի մէջ իր ունեցած առաջին ելուցքին, գորսկաւ հայերէն ողջունով, ապացուցեց որ այդպիսիներէն է: Այստեղ կ'արժէ նշում կատարել որ նկարներով եւ անուններով ցուցադրուած երեսփոխանները բոլորն ալ նահատակներ չէին, այլ մէկ մասը. աւելին՝ բոլորը նոյն ժամանակաշրջանի երեսփոխաններ չեն:

Սահմանադրական Թուրքիոյ մէջ 1908-էն մինչեւ 1915-ի Յեղապանութիւնը եղած են 3 երեսփոխանական ընտրութիւններ, որոնցմէ առաջին ընտրութիւններուն Մուրատ ընտրուած է որպէս երեսփոխան՝ 1908-էն 1912: Մինչ հայ երեսփոխաններու թիւը խորհրդարանի մէջ հասած է մինչեւ 11-ի, Յաստաշրջաններու ընթացքին:

Յ. Տքթ. Ճերեմեան, այս գիրքի հրատարակումէն միայն քանի մը ամիս առաջ հրատարակած էր այլ հատոր մը եւս: Ի՞նչ ունիք ըսելու այս նորարարի հատորին մասին:

Պ. Դուք հաւանաբար նկատի ունիք «Յաւերժի ճամբու Կերտիչները» հատորը, որ կենսագրականներու շարք մըն է, Հնչակեան գործիչներու եւ ֆետայիներու կենսագրութիւններն են: Ասոնք «ԱՐԱՐԱՏ» օրաթերթին մէջ՝ կուսակցութեան 125-ամեակին առիթով շարք մը յայտնի նուիրեալներու կենսագրութիւնները ի մի բերելու փորձ մըն էր:

Յետոյ՝ ընկերներ եւ բարեկամներ խորհուրդ տուին որ փոխանակ այս աշխատանքը թերթի էջերուն մէջ ցրուած մնալու, լաւ կ'ըլլայ որ գիրքի վերածուի: Բացի այդ՝ այս կենսագրականներու լոյս ընծայումէն ետք անպայման մէկը կու գար, հարցում մը կը հարցնէր, պրպտում մը կ'ընէր, չհասկցած կէտի մասին բացատրութիւններ կը խնդրէր, ինչ որ իսկապէս

ուրախալի եւ ոգեւորիչ էր ինծի համար յատկապէս որովհետեւ բաւական մեծ էր անոնց մէջ երիտասարդներուն թիւը, որոնք կու գային աւելի մանրամասն տուեալներ ստանալու համար այդ օրուան հերոսին մասին: Այս ալ գիտ խանդավառեց, որ այս շարքը գիրքի վերածէի՝ անշուշտ որոշ վերամշակումներէ յետոյ:

Ինչ կը վերաբերի «Մեծն Մուրատ» գիրքին, ապա իրականութեան մէջ, այս հատորը շատ կը փափաքէի հրատարակել անցեալ տարի՝ Հայոց Յեղապանութեան 100 ամեայ տարելիցին առիթով, սակայն ի յայտ եկաւ որ անոր կեանքը այնքան շերտեր ունի, այնքան պրպտումներու կարիք ունի, եւ իւրաքանչիւր նոր բացայայտում դուռ կը բանար նոր այլ պրպտումի, ինչ որ պատճառ եղաւ որ գիրքի հրատարակութիւնը չեստացուի...

Յամենայնդէպս, նախընտրեցի, որ կարելի եղած չափով գիրքը ամբողջական ըլլայ, քան թէ արագ եւ հապճեպ ընելու համար կիսատ պատ բան մը ըլլայ եւ ամբողջական Մուրատը չներկայացուի:

Յ. Իսկ ո՞վ է «Յրասիրտները» մատենաշարի յաջորդ անձնաւորութիւնը:

Պ. Անձնաւորութիւնը կայ, եւ գիրքին նիւթը գրեթէ պատրաստ է, հետեւաբար՝ ենթադրելի է որ նախքան տարեվերջը սիրելի ընթացքով սեղանին դրուի նաեւ երկրորդ հատուածը, որուն հերոսը կը հանդիսանայ Սեբաստացի Վահագն, բուն անունով Գրիգոր Նալպանտեան, վաստակաշատ ֆետայի մը, որ դժբախտաբար իր կատարած գործին համար ցարդ չէ արժանացած արդար գնահատանքի եւ ճանաչման:

Հարցազրոյցը վարեց՝ ՆԱԶԵԼԻ ԷՊԷՆԱՆ-ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

**OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104

Գրասենյակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

Կազմակերպութեամբ՝

**ԿԼԵՆՏԵՅԼԻ ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐ  
ՄԱՍՆԱԳԻՂԻ**

**Կիրակի, Յուլիս 24, 2016**

Առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ  
Կարօ եւ Անի Պեքարեաններուն  
բնակարան մէջ  
3013 Emerald Isle Dr., Glendale, CA 91206

**Մուտքի Նուէր՝ \$25**  
Տոմսերու համար դիմել՝  
(818) 913-9311 • (818) 284-2155



# Massis Weekly

Volume 36, No. 25

Saturday, JULY 2, 2016

## Pope Francis Concludes Historic Pilgrimage to Armenia 'Never Forget Victims Of Armenian Genocide'



YEREVAN -- Pope Francis publicly reiterated on Friday his view that the 1915 mass killings and deportations of Armenians in the Ottoman Empire constituted genocide.

Visiting Armenia, Pope Francis recalled an April 2015 mass at the Vatican's St. Peter's Basilica during which he referred to the deaths of some 1.5 million Armenians as "the

"Today Christians in particular, perhaps even more than at the time of the first martyrs, in some places experience discrimination and persecution for the mere fact of professing their faith," he said. At the same time, all too many conflicts in various parts of the world remain unresolved, causing grief, destruction and forced migrations of entire peoples."



first genocide of the 20th century."

"Sadly, that tragedy, that genocide, was the first of the deplorable series of catastrophes of the past century, made possible by twisted racial, ideological or religious aims that darkened the minds of the tormentors even to the point of planning the annihilation of entire peoples," he said after a meeting with President Serzh Sarkisian.

"I pay homage to the Armenian people who, illuminated by the light of the Gospel, even at the most tragic moments of their history, have always found in the cross and resurrection of Christ the strength to rise again and take up their journey anew with dignity," the pontiff in a speech delivered at the presidential palace in Yerevan.

The pope also drew parallels between past sufferings of the Armenian people and the ongoing persecution of Christians in the Middle East.

head of the Armenian Apostolic Church. He laid a wreath and prayed for the victims of genocide.

Pope Francis then left a handwritten message in the guestbook of the Armenian Genocide Museum-Institute adjacent to the memorial. "May God preserve the memory of the Armenian people," he wrote in Italian. "The memory cannot be stained or forgotten. The memory is a source of peace and future."

He also wrote: "Here I pray with sorrow in my heart so that a tragedy like this never again occurs, so that humanity will never forget and will know how to defeat evil with good."

Meanwhile, crowds filled a main square in the northwestern city of Gyumri on June 25 for Pope Francis's only public Catholic Mass during his three-day trip to Armenia.

Pope Francis ended his three-day pilgrimage of peace to Armenia with a visit to Khor Virap (Deep Pit), an Armenian monastery some twenty miles south of Yerevan near the closed border with Turkey in the Ararat Plain.

Catholicos Karegin II accompanied Pope Francis to the monastery which is built at the site of a dungeon where Gregory the Illuminator, the first Armenian Catholicos, had been imprisoned before convincing King Tiridates III to adopt Christianity as Armenia's state religion.

Earlier in the day, Pope Francis

Continued on page 3

## Turkey Accuses Pope Francis of 'Crusader Mentality'

ANKARA -- Turkey's Deputy Prime Minister says that Pope Francis' describing the World War I-era killings of 1.5 million Armenians as a genocide is a "great disgrace" which Ankara does not "take seriously."

In the first public response from the Turkish government since Pope Francis used the term while meeting with Armenia's political leaders Friday, Nurettin Canikli said Saturday: "We will not take this declaration seriously."

"The goal is to squeeze Turkey in the corner," Canikli said, accusing Pope Francis of siding with European Union values. "It is, unfortunately, possible to see all the reflections and traces of crusader mentality in the actions of the papacy and the pope."

"It is not compatible with reality," Canikli said in an interview posted with the Turkish Hurriyet news website. "We all know it. The whole world knows it, including the Armenians."

Canikli continued: "In our history there does not exist something of this type. It is not possible because our faith and our traditions absolutely reject these types of things from the start."

The head of the Roman Catholic Church, described the massacre of Armenians as genocide, "made possible by twisted racial, ideological or religious aims that darkened the minds of the tormentors."


## Russia Denies Azeri Claims of Agreement on Karabakh

MOSCOW (RFE/RL) — Russia's Foreign Ministry on Thursday rejected as "unscrupulous" a senior Azerbaijani official's claim that this week's Armenian-Azerbaijani summit in Saint Petersburg resulted in an agreement on Nagorno-Karabakh favorable to Baku.

Novruz Mammadov, Azerbaijani President Ilham Aliyev's chief foreign policy aide, said on Wednesday that Aliyev and his Armenian counterpart Serzh Sarkisian agreed "in principle" on a phased solution to the Karabakh conflict.

Mammadov told Azerbaijani television that the peaceful settlement will involve a gradual liberation of seven districts around Karabakh that were fully or partly occupied by Karabakh Armenian forces in 1992-1994. "Karabakh's status will be determined after that," he added vaguely.

Armenian Foreign Minister Edward Nalbandian was quick to brush aside Mammadov's remarks. He said that "no agreement on the conflict's resolution was reached at the Saint Petersburg summit" hosted by Rus-



sian President Vladimir Putin on Monday.

The Russian Foreign Ministry spokeswoman, Maria Zakharova, denied the Azerbaijani claims in equally categorical terms. "This is an attempt by the Azerbaijani side to interpret the understandings reached [in Saint Petersburg] in a peculiar fashion," she told reporters in Moscow.

Zakharova pointed to a trilateral

Continued on page 4



## Azerbaijan Rejects Key Measure to Prevent Karabakh Fighting



BAKU (RFE/RL) -- Seemingly backtracking on an agreement reached with Armenia and the U.S., Russian and French mediators, Azerbaijani President Ilham Aliyev has again spoken out against international investigations of ceasefire violations around Nagorno-Karabakh.

Aliyev also made clear over the weekend that Azerbaijan will not agree to the deployment by the Organization for Security and Cooperation in Europe of a large number of monitors on the Karabakh frontlines and the Armenian-Azerbaijani border.

The United States, Russia and France have been pressing for these safeguards since the outbreak in early April of the heaviest fighting in the Karabakh conflict zone since 1994. They are keen to prevent another escalation of the conflict that could degenerate into an all-out war.

The issue dominated Aliyev's meeting with his Armenian counterpart Serzh Sarkisian that was held in Vienna on May 16 in the presence of U.S. Secretary of State John Kerry, Russian Foreign Minister Sergey Lavrov and French Secretary of State for European Affairs Harlem Desir.

In a joint statement issued after those talks, Kerry, Lavrov and Desir said Aliyev and Sarkisian "agreed to finalize in the shortest possible time an OSCE investigative mechanism." The two presidents also agreed to expand an OSCE mission monitoring the shaky ceasefire, said the statement.

Aliyev contradicted the mediators' statement, however, when he addressed Azerbaijani military personnel in Baku on Saturday. "As regards a mechanism for investigating [armed] incidents which the Armenians have set as a condition, I think that there is

no need for that at this stage," he said remarks cited by Azerbaijani news agencies.

"What is the point of doing that?" he said. "If the idea is to 'freeze' the conflict and take some additional measures on the Line of Contact, then Azerbaijan will certainly not agree to that."

Baku will allow OSCE investigations only if the Armenians and mediators set "time frames for the liberation of our territories," added Aliyev. He also made clear that the OSCE will be allowed to deploy only a few more field representatives periodically monitoring the ceasefire regime in the conflict zone.

The OSCE's existing monitoring mission headed by Andrzej Kasprzyk numbers several officers.

Aliyev had repeatedly rejected the proposed safeguards, strongly backed by Armenia, even before the April escalation, saying that they would only cement the status quo and thus play into the Armenians' hands.

His latest remarks on the issue came the day after the U.S., Russian and French co-chairs of the OSCE Minsk Group urged both sides to implement the confidence-building measures that were agreed at Vienna and a follow-up Aliyev-Sarkisian meeting held in Saint Petersburg on June 20.

"We also urge progress in substantive talks and on a proposal to establish an OSCE investigative mechanism," the co-chairs said in a joint statement.

Official Yerevan did not immediately react to Aliyev's latest rejection of that mechanism.

Aliyev also declared on Saturday that Karabakh must remain a part of Azerbaijan while enjoying "a certain status."

## Armenian Bar Association Statement in Support of Jirayr Sefilian

LOS ANGELES -- The rule of law demands that the courtroom remain faithfully in the service of the law—not of political stratagem.

The Armenian Rights Watch Committee (ARWC) of the Armenian Bar Association is closely monitoring the recent arrest and pretrial detention in Yerevan of the 1990s Karabakh War's Shushi Battalion Commander, Jirayr Sefilian. Criminal charges, pursuant to Armenia's Criminal Code Section 235, part 2, were reportedly filed against Mr. Sefilian on June 22, 2016. The timing of the imprisonment coincides with the June 20 trilateral meeting in St. Petersburg, behind closed doors, reportedly focused on "reaching a settlement to the Nagorno-Karabakh conflict."

To be clear, it is not lost on the ARWC that the former Karabakh commander, Mr. Sefilian, is a fierce critic of the ruling authorities in the Republic of Armenia. It is also not lost on the ARWC that the arrest of any outspoken critic of a political regime raises concerns as to proper motive and requisite probable cause underlying the charges levied. Recent news that Mr. Sefilian will be detained prior to trial only heightens the ARWC's attention



to the matter.

We expect that Mr. Sefilian will be afforded access to legal counsel and that any charges are adjudicated transparently, speedily and with full adherence to due process. If the Republic is to adhere to democratic principles and the rule of law, it is incumbent upon its ruling authorities to insure that allegations brought in a court of law, without more, neither serve as a muzzle for silencing policy critics nor as an instrument for suppressing political opposition.

**Armenian Rights Watch  
Committee -ARWC  
Armenian Bar Association**

## U.S. and Armenia Work Together to Prevent Proliferation of Weapons of Mass Destruction

YEREVAN— The United States Department of Defense, the National Security Service of Armenia (NSS), and the Armenian Border Guards held a ceremony on June 22, 2016, to mark the completion of a two-year, \$9.35 million effort aimed at reducing the threat of weapons of mass destruction (WMD) by safeguarding Armenia's northern border with Georgia. The two-year effort focused on enhancing the Armenian border agency's capabilities to deter, detect, and interdict WMD and related materials.

"Today we celebrate the completion of two years of extensive cooperation in countering the threat of illicit trafficking of weapons of mass destruction through the border between Armenia and Georgia," said U.S. Ambassador to Armenia Richard Mills, Jr. during the completion ceremony. "The United States and Armenia are working together toward common goals of democracy and prosperity, security and peace both in Armenia and in the region. Our security cooperation is robust, and we remain committed to an open and enduring partnership with Armenia."

Dawn Brown, chief of the Building Partnerships Division at the U.S. Defense Threat Reduction Agency (DTRA), also expressed satisfaction with the successful bilateral cooperation between the two countries. The project was implemented by DTRA's Cooperative Threat Reduction, Weap-



ons of Mass Destruction— Proliferation Prevention Program. Through this effort, they provided Armenian border guards with equipment to detect WMD, as well as tools to aid in the communications, surveillance, mobility, tactical infrastructure, and post and patrol operations. The border guards also received training on the use and maintenance of the equipment.

The installation of a secure wireless broadband network along the border has greatly improved the communications capabilities of the Armenian Border Guards, allowing improved communication between its patrol units, outposts, regional command facilities, and national headquarters in Yerevan. Fixed and mobile surveillance camera equipment has also enhanced their capacity to operate around the clock. And new patrol and all-weather vehicles were given to the Armenian Border Guards to expand their ability to patrol remote areas of the border and respond to events.

Since 2011, the U.S. and the Armenian Border Guards have been working together under the Cooperative Threat Reduction Program.

## Armenian Interest Rate Continues To Fall

YEREVAN -- The Central Bank of Armenia (CBA) on Tuesday lowered its benchmark interest rate for the fourth time this year amid accelerating consumer price deflation registered in the country.

The CBA's governing board cut the refinancing rate by 0.25 percentage points to 7.5 percent. The three previous rate cuts were announced in May, March and February.

The minimum cost of borrowing stood at 6.75 percent when the Armenian dram began weakening against the U.S. dollar in October 2014 amid falling cash remittances from Arme-

nian migrant workers in Russia. The CBA raised it to 9.5 percent in January 2015 and 10.5 percent in February 2015, a move that helped to stabilize the Armenian currency's exchange rate.

The Central Bank began gradually easing its monetary policy in August 2015. The authorities in Yerevan have since reported a steady decrease in inflation.

In a statement explaining the latest rate cut, the CBA said the national consumer price index was actually down by 2.1 percent year on year as of the end of May.







## Lark Musical Society Awarded \$500,000 by the State of California

GLENDALE -- At 3:17 p.m. on Monday June 27, the Honorable Edmund G. Brown approved the \$171-billion California state budget, including two projects that impact the Armenian American community: \$1-million for the Armenian American Museum and \$500-thousand for Lark Musical Society.

As Armenian Americans we can take great joy in having the Governor's seal of approval toward our projects. However, we cannot underestimate the importance of the work done to reach this level of endorsement, and for that, we thank Assembly Member Adrin Nazarian. We are grateful for his friendship and endorsement for the work that Lark does in our community.

As the cultural stewards of the Armenian American diaspora, Lark will continue its legacy of service through education, performance and research so that we may preserve and add to our cultural imprint on Western society. The funds awarded to Lark will be used to transform a 4,000 square foot warehouse in the heart of Glendale into a cultural museum that will become a



gathering place for the community. It will be a place where people visit to experience the beauty of the human spirit as captured through music, art and culture. It will tell the story of survival and evolution and allows us to better understand each other and begin to accept and celebrate our differences and walk away with enrichment.

Let us take a moment to give thanks for this small miracle and use it as fuel to bring our vision to life. Let us work even harder to contribute our unique colors to the American quilt by investing in education and the arts that make up our heritage.

**LARK Administration**

## Movie Night of Fresno's Armenian Cultural Conservancy

FRESNO -- On Monday, June 20<sup>th</sup>, the Heritage Fresno Project for an Armenian Cultural Conservancy hosted its fourth in a monthly series of "Armenian Movie Nights," featuring films with Armenian content.

The first four of these "Armenian Movie Nights" featured the documentary films of the late Dr. J. Michael Hagopian. On Monday evening, Dr. Hagopian's film, *The California Armenians* was followed by an excellent presentation by Dr. Matthew Ari Jendian, Ph.D., Professor and Chair of Sociology and founder of the Humanities Program at Fresno State.

Over a hundred Fresnans filled the Public Room at the Woodward Park Library to enjoy both the movie and Dr. Jendian's presentation. Professor Jendian described the proposition demonstrated in his book *Becoming American, Remaining Ethnic* (LFB Scholarly Publishing, 2008) that successful integration into American life of immigrants and their descendants does not require the total abandonment of prior ethnic identity, language, religion, music, and food.

"Rather than viewing assimilation as only substitutive, we need to



recognize that assimilation can be an additive process. After all, one is not required to forget how to speak Armenian or Spanish in order to learn English," Dr. Jendian stated.

The next "Armenian Movie Night" is scheduled on Tuesday, August 23, 2016 at 7pm at Woodward Park Library. Light refreshments will be served at 6:30pm. See <http://accoa.net/> and <http://www.heritagefresno.org/> for more information.

## Russia Denies Azeri Claims

**Continued from page 1**

statement that was issued by Putin, Aliyev and Sarkisian after their talks. It said the Armenian and Azerbaijani leaders reached an "understanding" on unspecified issues hampering a Karabakh settlement. They also reaffirmed their declared support for confidence-building measures meant to strengthen the ceasefire regime in the conflict zone, according to the statement.

"I would ask you — and I think this is a collective request — to be guided by that statement, rather than those very unscrupulous claims involving attempts to interpret the results of the meeting," Zakharova told reporters in Moscow.

"There is a concrete statement that was made [in Saint Petersburg] and it is an official document," she said. "One should proceed from it, rather than frivolous or perverse interpretations made by anybody."

## Journal of the Society for Armenian Studies, Volume 24 Released

FRESNO -- The Society for Armenian Studies announces the release of Volume 24 of the *Journal of the Society for Armenian Studies* (JSAS), edited by Dr. Sergio La Porta. JSAS Volume 24 includes five articles, four communications, an addendum, a review essay, and three book reviews. The articles in this issue address topics in art history, the Armenian Genocide, Armenian identity, and contemporary church history.


The volume begins with an essay by Cristelle Baskins that analyzes the representation of the Armenian merchant Khoja Sefer in the Quirinal Palace in Rome. Based upon a wide array of archival documents, Baskins provides a vivid depiction of Khoja Sefer's travels to Italy as well as of the variety of identities he could embody.

In his article, Dickran Kouymjian investigates the book illuminations of the somewhat overlooked book artist, Grigor Marzvanec'i. Working in the first half of the eighteenth century, Grigor produced a number of large illuminated works that continued to be used and copied after the artist's death.

Khatchig Mouradian's examination of the Meskeneh concentration camp presents the camp as a case study of how prisoners collaborated with, appeased, manipulated, or resisted the system in order to survive. In doing so, Mouradian explores the dynamics of camp life and restores agency to the deportees who inhabited them.

In his essay, Daniel Fittante examines the theoretical debate surrounding the question of Armenian identity and argues that theorists of Armenian identity have borrowed the terminology of nationalists who often use rigid models of national identity to describe a dynamic and fluctuating phenomenon.

In the first part of his two-part study of the last three catholicos of the Armenian Apostolic Church, Levon Petrosyan examines the policies of Vazgen I and Garegin I and how these two catholicos faced the challenges of the end of Soviet rule and of the early years of the Republic of Armenia.



In addition to these articles, vol. 24 contains four communications on a wide range of topics. The first, by Albert Stepanyan, is a reexamination of the famous passage in Plutarch's *Life of Crassus* that describes the defeat of the Roman general at Carrhae. The second by Smbat Hovannisyan is a reflection on how Braudel's theory of civilizations can be applied to Armenian early modern history. In his communication, Stefan Ihrig emphasizes the utility of German sources as evidence for the perpetration of the Armenian Genocide. In their study, Russell Kashian and David Lührssen use the Armenian settlement in South Milwaukee as a case study to examine patterns of ethnic clustering and dispersion.

Vol. 24 also contains a review essay by D. Kouymjian on the recently published catalogue of the Alex and Marie Manoogian Museum in Detroit and three books reviews.

The *Journal of the Society for Armenian Studies* is a peer-reviewed journal and is published annually by the SAS. Copies of the latest volume, and back issues, are available by contacting the SAS Secretariat at 559-278-2669 or by email at [barlowd@csufresno.edu](mailto:barlowd@csufresno.edu). Copies may also be ordered online at [societyforarmenianstudies.com](http://societyforarmenianstudies.com).

## Pope Francis Historic Pilgrimage to Armenia

**Continued from page 1**

and Catholicos Karegin II signed a joint declaration pledging to promote Christian unity around the world by further deepening relations between their ancient churches.

They also expressed concern at the "secularization" of contemporary societies, reaffirmed their opposition to same-sex marriage, condemned the persecution of Christians in the Middle East and urged world powers to end bloody conflicts in and outside the region.

"In this regard we also express our hope for a peaceful resolution of the issues surrounding Nagorno-Karabakh," they said in the statement signed at Garegin's headquarters in Echmiadzin, a small town near Yerevan.

Pope Francis repeatedly paid trib-

ute to Armenia's Christian heritage during the trip that set another milestone in a rapprochement between the Roman Catholic and Armenian churches. The two churches essentially ended their long-standing theological differences with a joint statement issued in 1996. In 2001, John Paul II became the first Pope to have ever visited Armenia.

Pope Francis called for "a unity that must not be the submission of one to the other, or assimilation, but rather the acceptance of all the gifts that God has given to each."

Pope Francis also urged Armenia and Turkey on Saturday to seek reconciliation over the Armenian genocide which took place one century ago, and Armenia and Azerbaijan to find a peaceful resolution to the Nagorno-Karabakh conflict.



### ՈՎ ԻՆՉ ԱՆԻ, ԻՐԱՆ ԿԱՆԻ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Գարնան օր, երկինքը պարզ, արեւը գաղջ, մէկ օր առաջ էր անձրեւեւ, բնութիւնը թարմ բուսականութեամբ կանաչին էր տալիս արեւի մեղմ ճառագայթների տակ: Կարելի՞ է՝ մարդու կեանքը մշտական գարուն լինի, մտքովս անցաւ.- չեմ կարծում, եզրակացրեցի՝ կեանքն էլ տարուայ եղանակների պէս փոփոխական է, աւելի ճիշտ ճամբի է նման, մերթ հարթ հաւասար ծաղիկներով եւ ծառերով եզերուած գեղեցիկ ու զովասուն, մերթ՝ գառնիկեր խոչընդոտներով... անհանգստացնող, երկու դէպքում էլ ոչ անհատը թող հպարտանայ եւ ոչ էլ՝ յուսահատուի:

Ահա այսպիսի մի օր, առաւօտեան ոչ կանուխ, քայլում եմ դէպի հանրակառքի կանգառը, տեսակ-տեսակ մարդիկ էին սպասում, հանրակառքը շատ չուշացրեց, տեղադրուեցի բաց աթոռներից մէկում:

Լոս Անջելէսը իր շրջակայքաղաքներում նկատելի են խայտաբղետ քաղաքացիներ աշխարհի տարբեր կողմերից, շատեր իրենց երկրների պատերազմներից խուսափած, ոմանք կրօնական խտրականութիւններից այս ափերը հանգրուանած, այլք անցեալից փախչող, կամ նոր եւ բարեօրէն կեանքի հետամուտ, ինչպէս նաեւ հարստանալու, բարձր ուսում ստանալու, ազատ կեանքով ապրելու եւ այլն գաղթել են այս երկիրը ապագայի վառ յոյսերով տոգորուած, բայց պէտք է ասեմ որ Ամերիկան էլ իր լաւ ու վատ կողմերն ունի, ինչպէս այլ երկրներ: Ամերիկան չէ որ մարդուս երջանկացնում է, այլ մարդն է, որ իր կեանքը կառուցում է, հիմաստաւորում է:

Հանրակառքը ֆութՅիլ պողոտայից դէպի Գլենդէլ ճամբու վրայ էր, կանգառներում կանգ էր առնում, յաճախորդ նստեցնում կամ իջեցնում: Տեսայ մի մարդ զգզուած հագուստներ եւ կօշիկներ հագին վարձը արկղի մէջ մտցնելով, սուսիկ-փուսիկ ինքնամփոփ մեքենայի միջանցքից անցաւ եւ ետեւի աթոռի վրայ տեղաւորուեց ոչ հեռու իմ տեսողութիւնից: Նրա իրանը ցնցոտիներով էր ծածկուած, իսկ վերեւը կոկիկ՝ կապարագոյն հարթ գլխամագով եւ ճերմակին տող երկար միրուզով ինձ մտածմունքի մէջ պցեց, սրանից աւելի գէշ հագնուածքով Լոս Անջելէսի Down Town-ում էի տեսել, homeless-ների մէջ, բայց դրա նմանը մեքենայում երբեք չէի նկատել, Նա իմ ուշադրութիւնը գրաւեց, թերեւս տարիքը ոչ վաթսուներ անց, հասակը միջակ չափի, ոչ մեծ ձմերուկի կլորութեամբ դէմքին հայեացք նետելով քանի հարցեր ծնուեցին, ո՞վ էր նա, մուրացկա՞ն էր, բայց ոչ մուրաց եւ ոչ էլ մուրացողի տպաւորութիւն թողեց, ես հետաքրքրութիւնիցս մղուած հետեւում էի նրա շարժումներին, նա խելօք տեղում նստած, հայեացքը ապակուց դէպի դուրան էր ուղղել մի տեսակ յուսակտուր կեանքի եւ շրջապատի նկատմամբ, ինչո՞ւ էր նա այս վիճակում յայտնուել, ի՞նչ նպատակ էր հետապնդում, իր թշուառութիւնն էր ուզում ի ցոյց դնել, ի՞նչ ասել կ'ուզէր, մարդս երբ չխօսի, ինչ հիմանաս, ինչ է ուզելիքը, ուղեղս անկարող էր նրա մասին կարծիք յայտնել, միայն թէ ինչո՞ւ մարդ-արարածը իրեն այս նուաս-

տացուցիչ վիճակում պիտի պահի: Է՛հ, սա էլ ճակատագրի մէկ խաղն է, կեանքի ապտակն է կամքով թոյլ մարդոց, կեանքը հազար ու մի տեսակ ոլորաններ ունի, զգուշ ու սթափ չլինելու դէպքում տարօրինակութիւնների է ենթարկուելու, անբնական վիճակի է մատնուելու: Ախ, կ'ուզէի մօտենալ եւ տեղեկանալ իր մասին, բայց հնարաւոր է՞ր այդպէս քայլ վերցնել ...

Դեռ մինչ այդ ուշադրութիւն չէի դարձրել իմ ետեւիս աթոռին, երկու հայ տատիկներ էին նստած, իրենց հայերէնով խօսակցութիւնը ինձ յուշեց, իսկ ինձանից մի աթոռ ցած ձախին այլազգի տատիկ էր նստել լաւապէս իմ տեսողութեան ծիրի մէջ, նա լուռ ու մունջ, գլուխը կախ գբաղուած էր ճաղագործով, ճիշտ հակապատկերը այն մարդու՝ կեանքի նկատմամբ վառ յոյսերով գօտեպնդուած: Տատիկը

գործելու ընթացքում գլուխը մերթ բարձրացնելով ստուգում էր, թէ իր իջնելիք կանգառին հասնո՞ւ է, թէ՛ ոչ: Գալով մեր հայ տատիկներին, նրանք գբաղուած էին գրոցով, ինձ հասնող բառերից հասկացայ, որ բամբասանքով են տարուած, նրանցից մէկը մի քանի անգամ կրկնեց ասելով՝ «Ո՛վ ինչ անի, իրան կանի»: Ես էլ համաձայն եղայ այդ ասացուածքի հետ, որը տարբեր բառակապակցութիւններով էլ ասում է, օրինակ՝ ո՛վ ինչ ցանի, այն էլ կը հնձի, կամ ո՛վ ինչ քայլ վերցնի, նրան էլ արժանի կը լինի եւ այլն... : Այո՛, մարդն իր արարումներով է կեանքը տնօրինում՝ լաւ թէ վատ, դրախտն ու դժոխքն էլ ինքն է կառուցում՝ բարի եւ չար արարքներով, մարդիս խօսքն ու արտայայտութիւնն է ապացուցում իր խելացի եւ անմիտ լինելը, եւ այսպէս շղթայակերպ կարելի է հիւսել:

Ի տես այդ օտարազգի տատի-

կի աշխատանքը ժամանակից առաւել լազոյնը օգտուելու, ժամանակը իմաստաւորող մտածելակերպը այնքան հաւանեցի, որ ոգեւորուած ետ դարձայ մեր հայ տատիկներին ասելով մատով ցոյց տալով նրան.

-Տեսէ՛ք այդ կինը, ինչպէս գբաղուած է մլազործ անելով, անպայման մի բան հիւսելով եւ աւարտին նրանով ուրախանալու է, իսկ դուք, շատ պիտի ներէք իմ արտայայտութեան համար, գբաղուած էք ձեզ անհանգստացնող խօսակցութեամբ:

Նրանք շփոթուած հետեւելով իմ ցուցմունքին վզերը երկարած նայեցին այդ կնոջ եւ նրանցից մէկը վրդովուած իմ յանդուգն նկատողութիւնից վրայ բերեց.

-Մենք էլ այդ գործերից շատ ենք արել:

Ես ի պատասխան տատիկին մեղմ ու յարգալից ասացի.

Շաք-ը էջ 18

## Գրաւուած Թուական

### Mark Your Calendars

# Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

# Սեպտեմբեր 18, 2016

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
				1	2	3
4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17
<b>18</b>	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	



Armenian Independence Day FESTIVAL

**To reserve your booth**  
**please call Nor Serount Cultural Association**  
**Ձեր կրպակները ապահովելու համար**  
**Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան**  
**(818) 391-7938**



### «ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՂՈՑ»

#### ԴՈՒՏ. ՀՐԱՅՐ ՀԷՊԷՃԵԱՆ

«Ուրբաթ Օրերը Աշխատանքը Կը Դանդաղի»

Պուէնոս Այրես, Արժանթին: Մայիս 2016: Իջեալնաժ պանդոկիս ճաշարանին մէջ մէկ կողմէ կը նախաճաշեմ, միւս կողմէ, համակարգիչին ետեւ նստած, կը փորձեմ քայլ պահել իրենց հերթը սպասող շատ մը գործերու հետ: Այդ կացութեան մէջ չանդրադարձայ, որ տարեց մարդ մը մօտեցաւ ինծի եւ սպաներէն հետս զրուցեց, թէ եւ չհասկցայ իր ըսածը, բայց ուզեցի իր ժպտուն, բարեկամական ու հաղորդական դէմքին ընթացք տայ: Հարցուցի, եթէ անգլերէն գիտէր, փորձեց իր միտքը եւ ըսելիքը պարզել: «Այսօր ուրբաթ է, շաբաթավերջը կը սկսի, աշխատանքը ընդհանրապէս կը սկսի դանդաղիլ»: Եթէ դէմքին վրայ կար ժպիտ մը, բայց նաեւ ան շահեցաւ իմ մը, բայց նաեւ ան շահեցաւ իմ փորձէր քաջալերել գիտ, որպէսզի քիչ մը նուազեցնեմ իմ աշխատանքային հեւքս եւ երեւի շաբաթավերջը վայելեմ:

Արժանթինի մէջ կայ այս բարեկամական մթնոլորտը, ընկերային կեանքի մէջ կայ մարդկային հաղորդականութիւնը, ուր դժուար չ'ըլլար բարեկամութիւն եւ յարաբերութիւն մշակելը: Ուստի, յատկանշական ու երեւի նաեւ գեղեցիկ սովորութիւններէն մէկն է, երբ մարդիկ կ'ողջագուրուին իրարու հետ իւրաքանչիւր անգամ, երբ հանդիպին, եւ նոյնիսկ երբ անծանօթներ են եւ նոր կը ծանօթանան:

Եւ այս նոյն ջերմ մթնոլորտին մէջ էր, որ սկսայ մէկ-մէկ քակել հայկական իրականութիւնը Պուէնոս Այրեսի մէջ, իսկ այդ մէկուն ծանօթանալու լաւ միջոցներէն մին «Հայկական փողոց»-ն է: Հոն է, որ հայկական իրականութիւններ մէկ-մէկ, իրարու մօտ եւ գիրար «հրմշակելով» ստեղծած են պզտիկ Հայաստան մը: Թէեւ սկիզբը հոն հիմնուած են եկեղեցին եւ առաջնորդարանը, բայց շուտով անոնց կողքին սկսած է հայկական կեանքը ծաղկիլ՝ իւրաքանչիւր կրթական-մշակութային եւ ակումբային ու տակաւին հայրենակցական միութիւններու ստեղծումով: «Հայկական եկեղեցին մեզ մէկտեղեց», կ'ըսէ Խորիկ Գազանճեանը՝ իմբագիրը «Արմենիա» շաբաթաթերթին, որ ունի եօթը հարիւր բաժանորդ:

Հայկական կեանքը փխրուն է, բայց եւ այնպէս ազգային ինքնութիւնը եւ գիտակցութիւնը ակնբերել են: «Հայկական հաստատութիւնները կարելի էր կը կատարեն հայուն ինքնութեան պահպանումին մէջ», կը վկայէ Գիսակ արք. Մուրատեան՝ Արժանթինի առաջնորդը:

Բայց Պուէնոս Այրեսի մէջ միայն «Հայկական փողոց»-ը չէ, որ հայկականութիւն կը ներկայացնէ: Քաղաքին մէջ կան բազմաթիւ վայրեր, ուր առկայ է հայկական դրոշմը՝ խաչքար, յուշարձան, պարտէզ, հրապարակ եւ այլն: Հայրենի պետականութիւնը ունի նաեւ իր դիւանագիտական ներկայացուցչութիւնը երկրին մէջ: «Դեսպանատունը ձեր եւ բոլոր հայերուն տունն է», ըսաւ Ալեքսան Թարութիւնեան մեր հանդիպումի ընթացքին, պարզ է, որ սփիւռքի տարածքին հայը պէտք ունի հայրենի «տան» այս ջերմութեան:



Արժանթին երկիր մըն է, որ ո'չ միայն հիւրընկալած է հայերը, այլ նաեւ սիրած է զանոնք: Արդարեւ, տեղացիներուն հետ զրուցելով՝ դժուար չէ նկատել, որ բաւական բան գիտեն հայուն մասին եւ յարգանք ու հիացում կը տածեն անոր նկատմամբ: Պուէնոս Այրեսի գիրքի միջազգային ցուցահանդէսին հայկական տաղաւարը «փայլող» ներկայութիւն էր: Նոյն ցուցահանդէսին ներկայ եղանք շնորհահանդէսին չորս նոր հրատարակութիւններու, որոնց մէջ հայ գրողներ սպաներէն լեզուով կը ներկայացնեն հայկական պատմութիւնը եւ մշակոյթը, ինչ որ շատ բան կ'ըսէր գաղութին ազգային ինքնութեան եւ անոր գիտակցութեան մասին: Բայց եւ այնպէս կայ անխուսափելի՝ լեզուի պահպանութեան ահաւոր նահանջը: Անի Մուշեան-Սարգիսեանը Ազգային առաջնորդարանի ամէնօրեայ վարժարանի տնօրէնն է: «Հայերէն կը հասկնան, բայց չեն խօսիր, - մտահոգութիւն յայտնեց ան, - հայերէն դասանիւթեր դասաւանդող ուսուցիչներու կարիքը շատ մեծ է»:

Արժանթինի մէջ այսօր կը գործեն եօթը հայկական վարժարաններ, որոնք ունին աւելի քան երկու հազար աշակերտներ:

Դարձեալ մեր պատմութիւնը եւ Յեղասպանութիւնն է, որ կը շարչրկէ գիտ, որովհետեւ այդ պատճառով է, որ այսքան տարածուած ենք աշխարհով մէկ, ուստի պէտք է միշտ պայքարինք մեր արժէքներու պահպանումին համար:

Արժանթին եղած է «ներգաղթողներու» երկիր, յատկապէս՝ Պուէնոս Այրեսը: Շատ են ազգութիւնները, որոնք եկած են աշխարհի տարբեր ցամաքամասերէն, մասնաւորաբար՝ Եւրոպայէն:

Հինգ գործակիցներու հետ նստած՝ կը զրուցէի: Հինգն ալ արմատներով իտալիացի են: Հարց տուի, թէ իրենց մեծ ծնողները ե'րբ հասած են Արժանթին, բոլորին պատասխանը եղաւ՝ մօտաւորապէս հարիւր տարիներ առաջ: Չուշացաւ իմ հիմնական հարցումս՝ «Որքա՞ն իտալացի կը զգաք եւ որքա՞ն իտալերէն կը խօսիք»: Բոլորին պատասխանը եղաւ, թէ ոչ մէկ առնչուածութիւն եւ կապուածութեան եւ լեզուին հետ: «Բոլորս ալ արժանթինցի կը զգանք»: Իսկ պատճառները. ոմանք կամովին փորձած եւ մոռցած են անցեալի «հետքեր»-ը, սակայն նաեւ կան կամքէ անկախ պատճառները՝ «հոսանքի»-ն հետ քայլ պահելու եւ երեւի անոր դէմ թիւովարելու դժուար իրականութիւնը:

Ասիկա ինքնաբերաբար առիթ

կու տայ մեր միջեւ բաղադրական կատարելու: Բայց հայը այդպէս չէ եղած, մենք ալ հարիւր տարիներ առաջ եկած եւ հաստատուած ենք լատինական այս երկիրը, բայց կայ տակաւին ինքնութեան զօրաւոր տրոփիւնը: Եթէ ոչ այդքան լեզուին, բայց մշակոյթին եւ անոր արժէքին առումով կայ մնացուն ճիշդ այդ արժէքներուն վրայ հիմնելու հայկական կեանքը, եւ ասիկա մինչեւ այսօր տակաւին կը շարունակուի:

Էլենա Աշճեանը տնօրէնն է «Մարի Մանուկեան» դպրոցին: Ան այս երեւոյթը ներկայացուց շատ աւելի քննական եւ առարկայական մօտեցումով: «Հայերէնը որպէս երկրորդ լեզու պէտք է սորվեցնել հայ նոր սերունդին, որովհետեւ հայերէնը իրենց համար մայրենի լեզու չէ»:

Ուստի պէտք է համոզուի՞լ եւ ընդունի՞լ «երկու շարեաց փոքրագոյնը», այդպիսով գէթ զարկ տալով մայրենիին՝ որպէս «երկրորդ» լեզու...

հպարտութիւնն է: Եթէ իտալացին հարիւր տարի ետք կորսնցուց իր այս ազգային հպարտութիւնը, բայց հայը տակաւին կը պահէ զայն, այդ ալ՝ հարիւր տարիներ ետք: Եթէ հայը հարիւր տարիներ «սեղմեց» ու «ամփոփեց» իր այս հպարտութիւնը «Հայկական փողոց»-ին մէջ, բայց միշտ կառչած մնաց յոյսին: Այն յոյսին, որ «հայկական փողոց»-ին մէջէն պիտի տեսնէ, բայց նաեւ հասնի «Նոր երկիր» մը ու նոր երկիր» Աստուածաշունչի հասկացողութեան (Յայտնութիւն Յովհաննու 21:1): Այս «Նոր երկիր» ու երկիր» տեսլականին համար ու անոր հետ հայը հարիւր տարիներէ ի վեր եւ մինչեւ այսօր տակաւին կը շարունակէ տքնիլ, որպէսզի «յաղթէ», եւ որ իր «ամէն բաները ժառանգէ» (Յայտնութիւն Յովհաննու 21:7): Եւ այս «ժառանգը» հայուն հպարտութիւնն է, որ մինչեւ այսօր տակաւին կը պահէ իր «Չերմութիւնը» որպէս ապրող «արժէք» մէկ կողմէ հայրենի ու Հայաստանի պետականութեամբ, բայց



Կիրակի երեկոյեան տեղական աւետարանական եկեղեցւոյ մէջ պաշտամունքին մաս կը կազմեմ: Կը քարոզեմ անգլերէն, որ կը թարգմանուի տեղւոյն վրայ՝ սպաներէնի: Խօսեցայ հայութեան եւ միջինարեւելեան տարածաշրջանին մէջ քրիստոնեայ ներկայութեան մասին: Եկեղեցւոյ մեծ սրահը լեցուն էր հոծ բազմութեամբ մը: Պաշտամունքէն ետք մօտեցաւ չափահաս անձ մը, փորձեց հասկնել, թէ հայ է եւ մականունը՝ ժամկոչեան: Հայերէն չէր խօսեր, բայց սրտին մէջ ունէր «հպարտութիւն» մը, գոր կ'ուզէր բաժնեկցիլ ինծի հետ: Եւ թարգմանողի մը օգնութեամբ ան ըսաւ. «Տղաս Հայաստան զնաց եւ հիմա հոն կ'ապրի»:


Եւ այս հայուն հպարտութիւնն է՝ ինքնութեան, մշակոյթին եւ հայրենիքին վերաբերող, երբ նոյնիսկ լեզուն կը նահանջէ եւ ստիպուած է մայրենին սորվիլ որպէս «երկրորդ լեզու»:

Բայց, այո՛, ասիկա հայուն

նաեւ՝ աւելիով: Այս աւելին ալ «Հայկական փողոց»-ներն են՝ Պուէնոս Այրեսի մէջ թէ՛ այլուր, որովհետեւ այդ «փողոցին» մէջէն հայը միշտ յիշեց իր «նոր երկիրը»՝ «Պատմական Հայաստանը», նաեւ, չիշելէն անդին, ան չդադրեցաւ զայն պահանջելէ: Եւ այս ալ յոյսին արգասիքն է. արդարեւ, հարիւր տարիներ ետք հայը նոյն այս յոյսին կառչելով՝ կը շարունակէ յիշել, բայց նաեւ՝ պահանջել: Այս յոյսը հայուն կը շնորհէ իր ազգային ինքնութեան եւ պահանջատիրութեան նկատմամբ հպարտութիւնը, որ երբեք չի մոռցուիր, այլ կը պահպանուի ընդմիշտ:

«Հայկական փողոց»՝ Պուէնոս Այրեսի մէջ թէ՛ այլուր: «Փողոց» մը, որ հայուն կու տայ եւ պիտի շարունակէ տալ ապրելու կեանքը իր այս ինքնութեան եւ պահանջատիրութեան հպարտութեամբ:

Եւ այս հպարտութեամբ է, որ հայը իր «Հայկական փողոցը» պիտի հասցնէ հայկական «Նոր երկիր»:



**MEHER BABIAN, D.D.S.**  
General Dentistry

---

1111 S. Glendale Avenue  
Suite 206  
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884  
Tel: (818) 547-1476



### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2016 ՏԱՐՈՒԱՆ ՀՈՒՆՁՔԸ



#### ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Հայ Քոյրերու վարժարանը տարի մը եւս յաջողութեամբ բոլորեց:

Տնօրէնութիւն, ուսուցչական կազմ, ծնողները եւ աշակերտներ համագործակցաբար ամբողջացուցին ուսումնական տարի մը եւս եւ ներկայացուցին 2016 տարուան պարարտ հունձքը՝ միջնակարգի շրջանաւարտները:

Հայ Քոյրերու վարժարանին յատուկ է՝ շրջանաւարտ դասարանը նախքան իր աւարտական հանդէսը՝ ունենայ իր շրջաւարտներու պատարագը, առ Աստուած առաքելու իր գոհաբանական աղօթքները եւ փառք տալու Աստուծոյ Հ.Ք.Վարժարանէն ներս աւելի քան տասնամեակէ մը ի վեր վայելած ամէն տեսակի բարիքներուն համար:

Առ այդ Կիրակի, 5 Յունիս 2016-ի առաւոտեան, Կլենտէյլի Հայ Կաթողիկէ Գրիգոր Լուսաւորիչ Աթոռանիստ Եկեղեցին ցնծաց, երբ Հ.Ք. Վարժարանի հունձքը նուիրաբերուեցաւ խորան. անոնք իրենց վկայականի տարագներով ուսուցիչներու, վարդապետին, սարկաւազներու եւ դպիրներու ընկերակցութեամբ, շարականներու երգեցողութեան ներքեւ մուտք գործեցին տաճար, ուր ծնողներ, գոհունակութեան եւ փառաբանութեան զգացումներով լի կը սպասէին անհամբեր:

Աշակերտները մասնակցեցան Ս. Պատարագին, օրուան պատարագիչն էր Հայր Անտոն Վարդապետ Նորատունկեան, որ քարոզը հասցէագրեց շրջանաւարտներուն, զանոնք խրախուսելով պարզապէս յաջողութիւններու հեռանկարով. աշակերտները կարացին օրուան ընթերցումները հայերէն լեզուով՝ Արփի Պոյաճեան իսկ անգլերէն՝ Արին Սիփան, ապա սրտի խօսք կարդացին Անգլերէն լեզուով՝ Նոյ Շաթոյեան իսկ Հայերէն՝ Յոլեր Քիլիսեան, մնացեալ բոլոր աշակերտներն մասնակցեցան Ս. Պատարագին ստանձնելով արարողութենէն տարբեր բաժիններ: Յետ Ս. Պատարագին, տեղի ունեցաւ կոկիկ հիւրասիրութիւն մը եկեղեցւոյ Գույուճեան սրահէն ներս:

Կիրակի, 12 Յունիս 2016-ի լետ միջօրէին, Հայ Քոյրերու վարժարանի 2016 տարուան շրջանաւարտները ունեցան իրենց պաշտօնական հանդէսը՝ վարժարանի Դանիէլեան սրահէն ներս, այս անգամ ցտեսութիւն յայտնելու Հ.Ք. Վարժարանի ընտանիքին եւ վկայականները առնելով մեկնելու տարբեր վարժարաններ հետա-

պնդելով իրենց երազներու կատարելագործումը:

Հանդիսութեան ներկայ էին՝ Արհիպատիկ Գերապոյճառ Տէր Միքայէլ Եպիսկոպոս Մուրատեան, Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Եկեղեցւոյ, Հայր Անտոն Վարդապետ Նորատունկեան, Ժողովրդապետ Կլենտէյլի Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցւոյ, Առաքինագարդ Քոյրեր, դաստիարակներ, ուսուցիչներ Հիւրեր եւ ծնողներ եւ հոծ բազմութիւն մը: Շրջանաւարտներու կողմէ Տէրունական աղօթքի ապա հայկական եւ ամերիկեան քայլերգներու ներկայացումով հանդիսութիւնը սկիզբ առաւ եւ շարունակուեցաւ պաշտօնական խօսքերով ներկայացուած՝ Տնօրէնուհի Քոյր Լուսիայի, դաստիարակներ՝ Լինտա Գանտիլեանի եւ Ուիլիամ Պասէթի կողմէ, իսկ աշակերտներու կողմէ ուղերձ արտասանեցին Հայերէն լեզուով՝ Քաթիանա Գասպարեան եւ անգլերէն՝ Մէրի Քէօշկէրեան: Օրուան Հիւր պատգամաբերն էր վարժարանի նախկին աշակերտներէն Քալիֆորնիա Պըրքլի համալսարանի ուսուցչութեան դպրոցի շրջանաւարտ՝ Օրդ. Գրիսիլիան Զարիպեան, որ յուզումնալից զգացումներով վերջէրով այս պատերէն ներս անցած իր մանկութիւնն ու պատանեկութիւնը եւ հայ քոյրերու դաստիարակութեամբ հիմնաւորուած իր նկարագիրը եւ անոր վրայ խորհրդած իր ապագայ յաջողութիւնները՝ խրախուսեց շրջանաւարտները երախտապարտ ըլլալու իրենց շնորհուած բոլոր բարիքներուն համար եւ հաստատ քայլերով շարունակելու իրենց ուսումնական ճանապարհը:

Հանդիսութիւնը շարունակուեցաւ Հայերէն եւ անգլերէն արտասանութիւններով եւ խմբերգներով, որուն դաշնամուրով կ'ընկերակցէր վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի՝ Վարդուհի Պաղտասարեան, ապա խօսք առաւ 2015-2016 ուսումնական տարեշրջանի աշակերտական խորհուրդի նախագահ՝ Նարեկ Քիւրտեան սոյն տարուան մէջ կատարած իրենց նուաճումներու մասին խօսելով: Հանդիսութիւնը համեմուտեցաւ շրջանաւարտներէն Ռիթա Քէօշկէրեանի եւ Մելանի Սեփանեանի կողմէ երկլեզու ներկայացուած լիշատակելի դէպքերու պատմումով, որոնք թարմացուցին բոլորի մտքերը անցնող տասնմէկ տարիներու ընթացքին պատահած բոլոր անցուղաւորութիւններով: Յիշենք որ հանդիսութեան ընթացքին շրջանա-

Շաբ.ը էջ 18

### ՏԱՐԵՎԵՐՁԸ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



Հունձքի օր է դարձեալ, հպարտութեան, գոհունակութեան եւ ցնծութեան օր բոլորին համար՝ աշակերտ, ծնողք, ուսուցիչ, պատասխանատու մարմիններ:

Ամիսներու տքնաշան աշխատանքէ ետք, ամէն մարդ հանդարտ էր եւ ուրախ: Անշուշտ շրջանաւարտներու դէմքերուն վրայ երբեմն կը նկատուէր տխրութեան նշոյլ մը, որուն պատճառը բաժանումն էր կամ վաղուան անորոշութիւնը:

Ահա այս միջոցաւորին մէջ է որ տեղի ունեցաւ Մերտինեան վարժարանի Նախակրթարանի եւ Միջնակարգի զոյգ բաժիններուն վկայականաց բաշխման հանդիսութիւնը՝ վարժարանի Արամ եւ Անայիս Տ. Պուլղուճեան հանդիսասարահին մէջ, Կիրակի 12 Յունիս, 2016ին, կ. ե. ժամը 3:00ին: Սրահը լեցուն էր ծնողներով եւ հարազատներով, պատկան մարմիններու ներկայացուցիչներով եւ ուսուցիչներով:

Հպարտ շրջանաւարտներու սրահ մուտքը մեծ խանդավառութիւն ստեղծեց: Ամերիկեան եւ հայկական քայլերգներու երգեցողութենէն ետք, անոնք արտասանեցին 121րդ Սաղմոսը: Վեր. Դոկտ. Արա Չաքրեանի բացման աղօթքէն ետք, սկսաւ պաշտօնական յայտարարութիւնը:

Առաջին մասով բեմ բարձրացան Ե. Կարգի 22 աշակերտները եւ ելոյթ ունեցան 2 հայերէն եւ անգլերէն խմբերգներով: Յաջորդաբար իրենց ուղերձները ընթերցեցին Տանիէլլա Պանտարին՝ անգլերէնով եւ Յովան Պոյաճեանը՝ հայերէնով: Անոնք ձեռք բերած էին իրենց դասարանի բարձրագոյն միջինները: Այնուհետեւ շրջանաւարտները ստացան իրենց վկայականները, նիւթական մրցանակները եւ զնահատագրերը՝ ձեռամբ վարժարանի տնօրէնուհի՝ Տիկ. Լինա Արսլանեանի:

Հոգաբարձութեան խօսքը փոխանցեց կազմի ատենապետ՝ Դոկտ. Վահէ Նալպանտեանը, որ իր երախտագիտութիւնն ու զնահատանքը յայտնեց բոլոր այն ծնողներուն՝ որոնք իրենց անգին զաւակները կը վստահին Մերտինեան վարժարանի խնամքին՝ ի գին ծանր գոհողութիւններու:

Յաջորդ խօսք առնողը եղաւ Վեր. Դոկտ. Արա Չաքրեանը, որ օրուան պատգամաբերն էր: Ան իր հաղորդական ոճով եւ ջերմ խօսքերով շրջանաւարտները նմանցուց Քրիստոսի Առաքելներուն, որոնք ցրուեցան ի սփիւռս աշխարհի եւ քարոզեցին Աստուծոյ խօսքը. «Նոյն ձեռով ալ կ'ականակալուի ձեզմէ, որ

Մերտինեանէն մեկնելով՝ ձեր շրջապատին փոխանցէք այնտեղ ձեր ստացած ազգային եւ քրիստոնէական դաստիարակութիւնը»:

Յայտարարի երկրորդ մասով բեմ բարձրացան Ը. Կարգի շրջանաւարտները, որոնք կատարեցին 2 խմբային արտասանութիւններ՝ մէկը հայերէնով, իսկ միւսը՝ անգլերէնով, երգեցին 2 խմբերգներ, որոնցմէ մէկը՝ «Մարտիկ Երզը» շրջանաւարտներէն Սարգիս Գրպճեանը նուիրեց «Մեր Մայր Հայրենիքի եւ Արցախի սահմանները պաշտպանող քաջարի հերոսներուն»: Ը. Կարգի բարձրագոյն միջինները ձեռք ձգած աշակերտներ Փաթիլ Յովսէփեանը եւ ձէլքըպ Շան կարդացին իրենց ուղերձները հայերէնով եւ անգլերէնով: Երրորդ բարձրագոյն միջինը ունեցող Տանիէլ Չաքրեանը իր եւ դասընկերներուն կողմէ տնօրէնուհիին նուիրեց իրենց դասարանի առօրեան ներկայացնող, շրջանակուած պատկերներու փունջ մը: Ապա ելոյթ ունեցան Կասիա Տէր Մինասեանը եւ Մելինի Քասբըրը խօսելով իրենց դասարանային կեանքի լիշատակելի վայրկեաններուն մասին: Վերջապէս, ձեռամբ Տիկ. Լինա Արսլանեանին, անոնք ստացան իրենց վկայականները, նիւթական մրցանակներն ու զնահատագրերը:

Վերջին խօսք առնողը եղաւ վարժարանի անխոնջ տնօրէնուհին: Ան ներկայացուց անցնող տարեշրջանին կատարուած բազմաթիւ իրազործումներն ու ձեռք բերուած յաջողութիւնները, շնորհաւորեց շրջանաւարտներն ու իրենց ծնողները եւ հուսկ ապա անոնց փոխանցեց իր վերջին խրատներն ու խորհուրդները:

Վարժարանի Մտողա-Ուսուցչական մարմնի ատենապետուհին եւ զանապահ՝ Հոգաբարձութեան ատենապետին յանձնեցին 20,000 տոլարի չէք մը, որ այս տարուան Մերտինեան վարժարանին իրենց բերած նիւթական նպաստը հասցուց 40,000 տոլարի:

Պատիւն արժանաւորաց եւ վարձքը կատար բոլոր նուիրեալներուն:

Վեր. Դոկտ. Արա Չաքրեանի օրհնութեան աղօթքով վերջ գտաւ հանդիսութիւնը, իսկ անոր յաջորդող խրատները շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր, Պրանտիէլ Գոլլէզդիտոն ճաշարանի շքեղ սրահներուն մէջ:

Մայիս 21, 2016ին տեղի ունեցաւ Մերտինեանի Նախամանկապարտէզի տարեվերջի հանդէսը՝ վարժարանի հանդիսարահին մէջ, նուիրուած «Կակուղ Թաթիկներ»

Շաբ.ը էջ 18



# ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԱՐԱԾԱՆԻ ԱՓԻՆ

Իրանական դիցաբանությունը կրող աստուածներից առաջ հայերն ունեցել են դիցաբանութեան հին համակարգ, արգասիքը հայոց իքնատիպ մշակոյթի Մովսէս Խորենացի

## ՊՕՂՈՍ ԱՐՄԷՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Աստուածների քաղաք՝ Աշտի-շատի Վահէ-Վահեան մեհեանում Աստղիկի ու Վահագնի հարսանեկան հանդէսի խորհրդանշանը պատարագելուց յետո՝ Վահագնի Քրմայպետը ելել էր մեհեանի մայր դռան շքամուտք. այսպէս էր խօսել՝

«Արքաներ, թագաւորներ, իշխաններ, աշխարհական մարդիկ՝ վե՛ր կացէք, գնանք Աստղիկ դիցուհուն նուիրուած վարդերի տօն՝ Վարդավառ տօնախմբենք Արածանի սրբազան գետի ափերին, նրա ջրերի հրավառութիւն լինէր այսօր: Կարմիր վարդերի փունջեր վեր պահած, վարդերի թերթիկներինց հրեւած կարմիր հանդերձով Աստղիկին ու ռազմի հանդերձով Վահագնին տանենք Արածանի ափեր»:

Վարդավառը, արմինների Աստղիկ դիցուհու փառաբանմանը նուիրուած տօնախմբութեան հանդէսն էր: Արգասաւորութեան, պտղաբերութեան բնութեան երեւոյթները հովանաւորող մարդ աստուածների իմաստութեան խորհուրդն էր: Վարդավառը առնջուէլ էր ջրի պաշտամունքին: Վարդավառեան տօները տօնախմբել էին սարերի լանջերի հազար գոյնեւորով յորդած ալուան ծաղկունքում, իրենց մայր հողից սրտից պայթած ջրերի ակունքների մօտ, գետակների եւ մասնաւորապէս Արածանի սրբազան գետի ջրերի ափերին: Տօնախմբութիւնների ժամանակ, ջրերը հովանաւորող մարդ աստուածների փառաբանմանը կատարուէլ էին գոհաբերութիւններ, ի մասնաւորի ջուրը խորհրդանշող դիցուհի՝ Նար Մովինարի պատուին:

Ջուր աղերսող ծէսերն ունեցել էին անձրեւ խնդրելու նաեւ երաշտը կանխելու իմաստ: Վարդավառը, բերքահաւաքի առաջին տօներից էր, որի առիթով կատարուած մեհեանական ծէսերը նուիրուէլ էին բերք ու բարիք պարգեւող արմինների աստուածներին: Վարդավառին, մեհեաններին նուիրաբերել էին՝ ցորեանի հասկերի խուրճեր, կթոցներով մրգեր, խնդրել արտերն ու այգիները գերծ մնալին բնութեան արհաւիրքներից: Վարդավառեան տօներին աղանձներ էին թոցրել դէպի երկնի կապոյտ, ջրախաղեր կազմակերպել, գուարձալի ու խորխուրձալի խնձոցներ տօնախմբել:

Արմինայի Արքաների-Արքայ Տիգրանի գօրականների հետ Մուսաների պաշտամունքի լեռան լանջեր հասած արմինները, հազարհազար տարիներ յետոյ էլ իրենց հոգիների տաճարներում վառ էին պահել Նար Մովինարին նուիրուած ջրի պաշտամունքը: Երաշտի ժամանակ, Մուսաների Լեռան բարձր լանջի շէնի մի դուստր, մի բուռ հող ափին, անխօս քայլել էր դէպի մօտակայ ծովի ափ, կանգնել էր նրա փոթորկած ալիքների առաջ, հողը նետել նրա փրփուրներին, կանչել՝ «Նար Մովինար, լսի՛ր աղաչանքը Արմին դուստրի, այս լեռան լանջերի արտերի ու այգիների բերքն է նուազում, ջուր են աղերսում, որ հասունանան: Նար Մովինար, ամպերը գրկած արի մեր շէներ, որ անձրեւ տեղար մեր հողին, աստուածների բարիք

լինէր այնտեղ»:

Արմին դուստրի շէն վերադառնալուց կարճ ժամանակ անց, իրապէս անձրեւ էր տեղացել: Վկայ էմ ես, մանչ ատեն տեսել էմ Մուսա Լեռան մայր գիւղ Եօղունօլուգի ճանապարհով դէպի ծով քայլող Արմին դուստրին, այդ անձրեւի ջրերից թրջուէլ է մարմինս, հրճուանքից թրջուէլ է մանուկ հոգիս: Առնականացած այդ մանչն է, որ հայրենակարօտ, հայրենազրկուած արմինների հետ հասել Աշտիշատ, մասնակցել Աստղիկի ու Վահագնի հարսանեաց հանդէսի պատարագին, համախումբ շինականների հետ գնացել Արածանի ափեր՝ Աստղիկ դիցուհուն նուիրուած Նար Մովինար դիցուհու ջրերի վարդավառի տօնախմբութեանը մասնակցելու:

Արածանի սրբազան գետի ափերին, ալիք, ալիք երերում էին շինականների ցորեանի ու պտղատու այգիները: Նրանց ու Արածանի գետին մօտիկ անմշակ հարթ տարածութիւն էր, այնտեղ բացուած արքայական ու իշխանական վրաններից սպիտակ ծուխ էր բարձրանում: Տարեց շինականները դիտում էին անոր դէպի երկինք ճախրումը, երբ այն անհանում էր երկնքի կապոյտ պաստառին, կանչում էին, որ կրակի ծուխը արմինների աշխարհում փլած դրախտի, այնտեղից վտարուած առաջին երկու մարդկանց Աստուծոյ յղած իրենց բազմացման աւետիան էր: Աշխարհական մարդիկ խոտածածկ խրճիթներում էին: Երգերի, ծիրանափողերի հնչիւնների, մարդկանց խանդավառ կանչերի բացականչութիւններից Արածանի ջրերն էին վէտփիտում, նրա ափին կանգնած մարդիկ դիտում ալիքների սահանքը, սպիտակած ջրերի քրքիջները, նրանց երեսներին պար եկող աստղազարդ ձկների խայտանքը: Վարդավառի տօնախմբութեանը եկած մարդկանց հաւաքատեղիի երկնականարին՝ ամպերի մի մեծ զանգուած հանդարտ իջնում էր ներքեւ: Երբ նա արդէն իրենց հաւաքատեղիի վրայ էր հասել, տեսել էին ամպերը իր թեւերի վրայ պահած Նար Մովինար դիցուհին էր: Աստղիկն ու Վահագնը վազել են նրան ընդառաջ, Նար Մովինարը թափախարել էր ձեռքերը... անձրեւ էր տեղացել, թրջուէլ էին տօնախմբութեան ժամանածները: Վարդավառի անձրեւի ջրերով թրջուած մարդիկ գրկել էին իրար, գոհաբանութեան խօսքեր ասել Նար Մովինարին: Թրջուած Աստղիկն ու Վահագնը նաեւ գրկել էին իրար, իրենց մարմիններից հոսած ջրերով իրարու երեսները ցօղել, Աստղիկի վարդերի թերթիկներից հոսած քաղցրիկ ջուր էին ըմպել: Աստղիկն էր վազել, գրկել Նար Մովինարին.

-Քոյր Մովինար, ինչքա՞ն զգայացունց հրճուանք ես պատճառել ինձ, որ Արածանի սրբազան գետի ափերեսեկէ՛լ իմ եւ քու հովանաւորած ջրերի տօնա-կատարութեանը եւ իմ պատուին արմինների կազմակերպած Վարդավառի տօնախմբութեանը մասնակցելու:

Վահագնի քրմայպետը եւ արմինների կարաւանի հետ երկիր եկած Արմինը, մարդկանց

հաւաքատեղիի բացատ են գալիս: Նար Մովինար դիցուհուն դիմելով, այսպէս է խօսում քրմայպետը.

-Նար Մովինար, շատ պիտի ափսոսաս, որ չէիր եկել Աստղիկի հարսանեաց հանդէսի պատարագին մասնակցելու: Բնութիւնը աստուածների մեհեանն է, Արածանի ափերի այս բաց մեհեանում պիտի պատարագենք նաեւ քու բնութեան աստուածային իմաստութիւնը: Արքաներ, թագուհիներ, իշխաններ, տիկնայք, աշխարհական մարդիկ, կէս շրջան շրթայ կազմէք Աստղիկի ու Նար Մովինարի շուրջը: Հպէ՛ք նրա թաց իրանին, օծուէ՛ք նրա իրանից հոսող կենարար ջրի օրհնութեամբ:

Կարաւանի Արմինն է այսպէս խօսում.

-Նար Մովինար, քու թեւերին բազմած ամպերից անձրեւող ու Արածանի սրբազան գետի ջրերում պատարագում ենք քու բնութեան տիեզերական իմաստութիւնը: Ջուրը, որ հոսում ես արմինների աշխարհի արտերին ու այգիներին՝ բնութեան արարումի հէքիաթ է: Գարնան անձրեւի ջրերը ըմպած ցորեանի նորահաս ծիլերն են բարձրանում, արեւի լոյսը քաղելով հասկեր ծնում, որ մարդուն հանապազորդ հաց լինէր: Անձրեւը, ցորեանի նորահաս հասկերին մարգարիտներ է ծորում: Ես, Մուսաների լեռների շէնի լաճ տղեկ, մտել արտեր, ափերով ցորեանի հասկերին իջած գարնանային անձրեւի շիթեր հաւաքել այն ցօղել դէմքիս, հրճուացել քու արարչութեամբ: Այգիներում, ծառերը իրենց թեւերը երկինք պարզած անձրեւ են աղաչել: Ջուր ես վարարել նրանց ու հողի երեսին: Մայր հողին իջած ցորեանի ու ծառերի արմատները քու անձրեւած ջուրն են ըմպում, գնում ցորուններին, ոստերին, տերեւներին, որ այնտեղ կեանքի հէքիաթ արարուէր, ծաղկունքի երկունք լինէր, անուշ բոցրով քաղցրահամ պտուղ հասունանար: Անձրեւին, շէնի տան պատշգամբ ելել, դիտել երկնից ցողուած ջրերի հոսքը, ունկնդրել տիեզերական հեռուներից հասած քու իմաստութեան շնչիւնը, գոցել ակներս՝ քեզ տեսնելու երեւակայութեանս կրակաշող պաստառին, հրճուելու անձրեւաշող քու տեսքով: Վահագնի քրմայպետն է նորէն խօսում.

-Նար Մովինար դիցուհի, արմինների լեռնաշխարհին կեանքի հեւք ես հոսում, լցնում ծովեր, լիճեր, ջրառատ գետեր հոսում արմինների աշխարհից հարաւ գնացած ցեղակից սոււձերչուձերների երկիր, այնտեղ էլ կեանքի լոյս ես վարարում: Ահա, հիմա անձրեւ ես տեղում, բնութեան տիեզերական համախումբն է հնչում նրա անուշ ձայնի հետ: Վարդավարեան աւիւն ու հրճուանքի լոյս ես հոսում արմինների սրտերին, շէների մարդկանց արտերի, այգիների ծառերին ծաղկելու լոյս վառում: Նրանց հոգիների տաճարներում վառում գալիք առատ հունձքի, բերքի բաղձանք, որի մի մասը որպէս երախայրիք նուիրում են իրենց աստուածներին: Վանատուր աստուածը այն բաշխում է, անցորդներին, որ երկրով անցնող մարդկանց հաճութիւն լինէր:

-Նար Մովինար, բնութեան տիեզերական ամպրոպային ոգի կայ քու իմաստութեան լոյսի ցոլքերում, երկնականարող պատուող շանթերի կրակի հրազոյթը, նրանց ամպրոպային որոտաձայն կանչերը, նրանց փայլատակած կապոյտ-

ձերմակ շողացող լոյսը առասպելականացրել բազում դիւցազուններին: Նար Մովինար, մարդացած հրեղէն դիցուհի, երբ ջուր ես տեղում արմինների լեռնաշխարհին, երգերով, թմբուկների զարկերով մեհեաններ են գնում՝ փառաւորում քեզ, քու իմաստութիւնը, աստուածային հրեղէն ոգու հէքիաթային տաղեր ձօնում... սիրում են քեզ:

Նար Մովինար, չղիացար արմինների լեռնաշխարհի ծովու ջրերում, այնտեղ ծնանեցիր քու Սանասար ու Բաղտասար որդիներին: Սանասար աւագ զաւակիդ, արմինների կրակ, ու արեւ աստուծոյ պատուին Սան-աս-ար (Սան-Տառ-արեւ) կոչեցին: Սանասարի որդի Մհեր (Միհր) ծովի ջուր իջաւ, նստաւ «Քուրկիկ-Ջելալի»-ի ոսկեղէն թամբին, նրա ձեռքին տուիր «Թուր կեծակին»:

Նրա Դաւիթ որդին, արմինների աշխարհը գաւթելու ելած, վրան քառսուն ջաղացքի քար ու քառսուն գոմշի կաշի կապած Մարայ-Մելիքին՝ այդ թուրով երկու կէս արեց: Նրա որդի փոքր Մհեր աշխարհում տիրող անարդարութիւնից գալթացած, «Քուրկիկ Ջելալի»-ի հետ նախնիների ոստանի քարէ դռնով անձաւ մտաւ:

Աստղիկ դիցուհուն, Վահագնին, Նար Մովինարին իրենց թեւերի վրայ պահած տանում Արածանի ջրերի ափեր, ընկղմում ջրերի մէջ, օծում սրբազան լեռնաշխարհի ոգեղէն հրազոյթով: Արածանի սրբազան գետ, Մովինարն է երկնականարի անջրթափանց կապոյտ հանդերձով մտնում գետ, ջրի հանդէս է, ջրերն են բարձրանում, գրկում նրան, ջուր հոսում վարսերին, օծում իրենց արարիչին: Եթէ ձեր երեւակայութեան պատասխաններին պատկերացնէք այդ տարերքը, մի՛ սարսափէք, աստուածների տիեզերական հրաշագործ բնութեան արարումն է այն:

Քրմուհիները, քաղցրահունչ երգերի տաղերով, Աստղիկին իրենց ձեռքերի վրայ վեր պահած, Նար Մովինարի հետ իջնում Արածանի ջրեր: Միհրի լոյսով ցողում են Աստղիկին, ապա երեք անգամ իջեցնում վազող ջրեր, նրան օծում Մովինարի արգասաւորութեան իմաստութեամբ: Վերադառնում բացատ, Աստղիկին դնում Վահագնի բազկատարած թեւերին:

Արքաներ, թագաւորներ, իշխաններ, գեղեցկածին թագուհիներ, աշխարհական մարդիկ գալիս բացատ, որ Աստղիկին նուիրուած Վարդավառ տօնախմբեն, Նար Մովինարի ջրերով օծեն իրենց մարմինները: Կարաւանի Արմինը նաեւ կանչում է իր հետ երկիր եկած արմիններին, որ բացատ գային, իրենց երեւակայութեան պաստառները բացած մտաբերէին նախնիների աւանդած պատումները, Վարդավառ տօնախմբէին, նախնի աստուածների, արքաների, իշխանների, թագուհիների ու աշխարհական շինականների հետ պար բռնէին, սրբազան Արածանի ջրերով օծուէին, մաքրէին ուրիշ աշխարհների ճամբաների իրենց մարմիններին ու հոգիներին հոսած փոշին, մաքրէին իրենց սրտերը:

Դեռեւս չյագեցած ամուսնական տարիանքից, արեգակունք աչքերով Վահագնը այրում է Աստղիկի դէմքը, սեղմում իրանին, մշուշոտ հանդերձն է ետ տալիս, լանջին իջած խարտեաշ վարսերը գգոււմ: Վահագնի քրմայպետն է բոլորին, բոլորին կանչում բացատ



### ՄԱՐՄՆԱԿԱՆ ՇՓՈՒՄԸ ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ Է ՓՈՔՐԻԿԻՆ ԱՌՈՂՋ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՉԱՄԱՐ

60-ական թուականներուն ամբողջ աշխարհի գիտնականները կը զբաղեցնէին վաղ տարիքին զարգացման առանձնապատկուծիւններու, ինչպէս նաեւ կենդանիներու եւ մարդոց լեռնագագայ ճակատագիրին վերջինիս ազդեցութեան ուսումնասիրութեան հարցերով: Ամերիկացի գիտնականները ուսումնասիրած են նաեւ դաստիարակութեան առանձնապատկուծիւնները: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ այն վայրերուն մէջ, ուր աւանդոյթները կ'ապահովեն վաղ տարիքին փոքրիկին բաւարար շփոթում մօր հետ (փոքրիկը կապած կը պահեն մէջքին Քուպաչի մէջ, Ափրիկէի եւ ասիական երկիրներու մէջ փոքրիկները կը կրեն գլխածածկի մէջ, կը տանսին իրենց հետ աշխատանքի, երկար ժամանակ մինակ չեն ձգեր), մեծահասակներու բնաւորութիւնը աւելի խաղաղարար է:

Որքան աւելի կանուխ տարիքին փոքրիկները գրկուած են մարմնական շփոթման, այդքան աւելի ակնառու եղած են մեծահասակներու մօտ մոլեգնութեան եւ յարձակող ըլլալու արտայայտութիւնները: Ուստի, մօր (կամ հօր, մեծ մօր, մեծ հօր) հետ շփոթման ստացած հաճոյքը պարզապէս խաղ չէ, այլ պարտադիր պայման՝ մինչեւ երկու տարեկան փոքրիկին դրական յոյզերու եւ ուրախութեան զգացման, եւ անհրաժեշտ՝ ջղային կառուցուածքներու զարգացման համար: Իսկ նման հաճոյքներու պակասը կանուխ տարիքին կրնայ ըլլալ թմրանիւթերու եւ ալքոլի չարաշահման դրդապատճառներէն մէկը: Բնականաբար, փոքրիկին տա-

րիքին հետ կը փոխուի այդ շփոթմաներու, օրօրներու, քնքշանքի, համբույրներու եւ գրոյցներու դերը: Կեանքի առաջին վեց ամիսներուն ընթացքին փոքրիկին անհրաժեշտ է ուղիղ յուզական շփոթում մօր (եւ միւս մեծերուն) հետ: Եօթ ամսականէն մինչեւ 2.5 տարեկանը կարեւոր են շփոթումը, գրոյցները, հեքիաթները, բայց պարզագոյն հմտութիւններուն վարժեցնելու, առարկաներու հետ վարուելու, պարզ թեթեւ խաղերու վարժեցնելու ձեւով: Այստեղ փոքրիկին համար կարեւորը մեծերուն ուղղորդութիւնը գրաւելն ու պահպանելն է, կարեւորը իր ճիգերուն գնահատականը ստանալն է:

Տարիքի հետ ծնողներուն կողմէ կիրարկուող մարմնական շփոթման դերը կը պակսի, ի յայտ կու գան մարմնական պատիժները (զարնակել, հրել): Որոշ ծնողներ իբրեւ պատիժ կ'օգտագործեն մարմնական շփոթման գրկելը ("չեմ սիրեր քեզ, չեմ համբուրեր քեզ"):

Մեծ ըլլալու զգացումը դեռահասներուն մօտ կը պահանջէ "մեծական" վարքագիծ, մանաւանդ տղաներուն մօտ: Դեռահասներու երկրորդ առանձնապատկուծիւնը անոնց քննադատական տրամադրութիւնն է, որ ամբողջութեամբ կ'արտայայտուի հարազատ մեծահասակներու՝ ծնողներու եւ ուսուցիչներու հետ յարաբերութիւններուն մէջ: Ատիկա նոյնպէս կը նուազեցնէ մարմնական շփոթմանը ու պէտքը: Դեռահասին համար աւելի կարեւոր են խրախուսանքի խօսքերը, ինչ որ չի ստորացնէր անոր արժանապատուութիւնը, չ'ակնարկէր մանկութեան:

### ԿԵԱՆՔԻ «ԻՄԱՍՏԸ ԳՏՆԵԼԸ» Կ'ԵՐԿԱՐԷ ԿԵԱՆՔԻ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

Կեանքի իմաստ գտնելն ու նպատակ ունենալը հաստատ կը բարձրացնէ անոր որակը, սակայն արդեօ՞ք անիկա նաեւ կ'երկարէ կեանքի տեւողութիւնը: Նոր հետազոտութիւնը կ'ըսէ՝ "Այո":

Հետազոտութիւնը իրականացնող գիտնականները ուսումնասիրած են մինչեւ 65 տարեկան 9050 բրիտանացիի տուեալները:

Չանոնք բաժնած են չորս խումբի՝ ըստ կեանքէն բաւարարուածութեան աստիճանի եւ կեանքի գիտակցուած իմաստի գոյութեան՝ ամենաբարձր ցուցանիշներով մասնակիցներէն մինչեւ ամենացածր եւ ուսումնասիրած են 8.5 տարուան ընթացքին: Հետազոտութեան արդիւնքները գնահատելէ առաջ արդիւնքները ճշգրտած են ըստ տարիքի, սեռի, հասարակական տնտեսական կարգավիճակի, ֆիզիքական առողջութեան, ճնշման աստիճանի, ծխելու կարգավիճակի, ֆիզիքական աշխոյժութեան, ալքոլի օգտագործման, որպէսզի բացառեն գործօնները, որոնք կրնան

ազդել մեծահասակ մարդու առողջութեան ու բարեկեցութեան վրայ:

Հետազոտութեան աւարտին, կեանքէն ամենաբարձր բաւարարուածութեամբ խումբէն մահացած է մասնակիցներուն 9%-ը, մինչ ցած բաւարարուածութեամբ խումբէն մահացած է մասնակիցներուն 29%-ը: Բոլոր կողմնակի գործօնները հաշուի առնելով՝ գիտնականները պարզած են, որ կեանքէն ամենաբարձր բաւարարուածութեամբ մասնակիցները 30%-ով պակաս հաւանականութիւն ունէին այդ 8 տարուան ընթացքին մահանալու եւ ապրած են միջինը 2 տարի աւելի՝ կեանքը շարունակելու ցած հաւանականութեամբ մասնակիցներուն համեմատ:

Գիտնականները կը պնդեն, որ կան բազմաթիւ զբաղումներ, որոնք մեծահասակ մարդու կեանքը կը լեցնեն իմաստով ու նպատակներով՝ այդ գործով թիւն, խոհարարութիւն, թոռներու դաստիարակութիւն, ընկերներուն եւ ընտանիքին օգնել, եւ այլն:

### ԱՄԵՆ ՕՐ ԼՈՒԿԻ ԳԻԹ ԽՄԵԼՈՒ 9 ՊԱՏՃԱՌ

Լոլիկը յաճախ կ'օգտագործուի աղցաններու, ապուրներու եւ թացաններու մէջ: Անիկա նաեւ կ'օգտագործուի հիւթ պատրաստելու համար: Սակայն քիչերը գիտեն լոլիկի հիւթի սննդարար ցուցանիշներուն մասին: Լոլիկի հիւթը կը պարունակէ շաքար մը բաղադրիչներ, եւ, եթէ գաջն խմէք կանոնաւոր կերպով, պիտի նկատէք ընդհանուր առողջութեան բարելաւում:

1. Լոլիկի հիւթը կը պարունակէ մեծ քանակով վիթամիններ: Թարմ լոլիկի հիւթը հրաշալի աղբիւր է վիթամին A-ի եւ C-ի: Կանոնաւոր օգտագործման պարագային կը կանխարգիլէք տեսողութեան հետ կապուած խնդիրները եւ կ'ամրացնէք դիմադրողականութիւնը, կ'ամրացնէք ոսկորներն ու ակունքները:
2. Կը կանխարգիլէ քաղցկեղը: Լոլիկը լիզոթինի աղբիւր է, որ կը կանխարգիլէ քանի մը տեսակ քաղցկեղներու տարածումը, ներառեալ՝ թոքերու քաղցկեղ, կրծքագեղձի քաղցկեղ, շագանակագեղձի քաղցկեղ եւ ենթաստամոքսային գեղձի քաղցկեղ:
3. Կը կանխարգիլէ սրտի հիւանդութիւնները: Լոլիկը հարուստ է վիթամին B6-ով, իսկ հիւթը լաւագոյն կանխարգիլիչ միջոցն է, երբ խօսքը կը վերաբերի սրտի հիւանդութիւններուն:
4. Լոլիկի հիւթը կ'իջեցնէ քրոլեսթերոլի մակարդակը: Ոչ կանոնաւոր սննդականոններու պատճառով շատերը ունին քրոլեսթերոլի առնչուած խնդիրներ: Լոլիկի հիւթը հարուստ է մանրաթելերով, որոնք կը բարձրացնեն լաւ քրոլեսթերոլի մակարդակը եւ կ'իջեցնեն վատը:
5. Լոլիկի հիւթը կ'օգնէ ազատելու աւելորդ կշիռէն: Լոլիկի հիւթի մանրաթելերը յագեցուածութեան զգացողութիւն կու տան եւ կ'օգնեն, երբ սննդականոնի կը հե-



տելիք: Այս հիւթը նաեւ կը սնուցանէ մարմինը սննդարար տարրերով, որոնք դրական ազդեցութիւն ունին ամբողջ մարմնին վրայ:

6. Լոլիկի հիւթը կը հեռացնէ թոյները: Դժբախտաբար, մեր մարմինը լի է թոյներով եւ տարբեր յաւելումներով: Լոլիկը կը պարունակէ քլոր եւ ծծումբ, որոնք կը բարելաւեն երիկամներու եւ լեարդի աշխատանքը:
7. Անիկա կը վերացնէ ազատ ռատիքալները: Ազատ ռատիքալներու յառաջացումը կանխելու համար, օրական պէտք է մէկ գաւաթ լոլիկի հիւթ խմել: Ազատ ռատիքալները շատ վնասակար են, անոնք կրնան նոյնիսկ քաղցկեղի յանգեցնել: Լոլիկը հակաթոյներու հրաշալի աղբիւր է, որ կը կանխարգիլէ ազատ ռատիքալներու յառաջացումն ու անոնց վատ ազդեցութիւնը:
8. Լոլիկի հիւթը կը բարելաւէ մորթը: Չայն կրնաք քսել մորթին վրայ: Լոլիկի հիւթը կը ճերմկեցնէ մորթը, կը կանխարգիլէ բշտիկները, կը ծածկէ ծակոտիները:
9. Անիկա կը խթանէ աղիքներուն աշխատանքը: Ամբողջ աշխարհի մէջ միլիոնաւոր մարդիկ ունին աղիքներու խնդիրներ: Այս պարագային լաւագոյն միջոցը լոլիկի հիւթն է:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

### ԵՐԵՔ ՅԱՏԿԱՆԻՇԵՐ ՈՐՈՆՔ ՏՂԱՄԱՐԴԻԿ Կ'ԱԿՆԿԱԼԵՆ ԿԻՆԵՐԵՆ

Գոյութիւն ունին երեք կարեւոր յատկանիշներ, որոնք տղամարդիկ կ'ակնկալեն կիններէն, քանի որ անոնք էական նշանակութիւն ունին իրենց զարգացման եւ յառաջընթացին համար: Կնոջ այս երեք յատկանիշները ուժ ու եռանդ կու տան տղամարդուն եւ կը ստիպեն անոր նոր նուաճումներու ձեռքբերումներ արձանագրել:

Այսպիսով, առաջին յատկանիշը՝ ինքնաբաւ ըլլալ՝ եթէ կինը կրնայ անկախ ամէն ինչէ ուրախ ըլլալ եւ երջանկութիւն պարգեւել իր ընտրեալին, ուրեմն ան երազելի կին է տղամարդուն համար: Կինը պէտք է միշտ ժպտայ, ուժի եւ ներշնչանքի աղբիւր ըլլայ իր սիրեցեալին համար եւ դրական տրամադրութիւն փոխանցէ անոր: Իսկ ատոր համար կինը պէտք է գոհ ու բաւարարուած ըլլայ իր կեանքէն, որ իր հերթին պիտի օգնէ տղամարդը եւ պիտի օգնէ անոր բոլոր ուզած խնդիրները լուծելու եւ դժուարութիւնները յաղթահարելու հարցին մէջ:

Հակառակ պարագային կինը կը կորսնցնէ իր գրաւչութիւնը եւ կը դադրի ներշնչանքի աղբիւր ըլլալ տղամարդուն համար: Երկրորդ կարեւոր յատկանիշը կնոջ մեծահոգութիւնը, ամուսինին ու ժերուն հաւատալն ու անոր սատա-

րելն է՝ իւրաքանչիւր տղամարդ կնոջ մէջ կը փորձէ տեսնել մէկը, որ պիտի հիանայ ու հպարտանայ իրմով, պիտի հաւատայ իր ուժերուն եւ գնահատէ անոր մարդկային յատկանիշները: Կինը պէտք է նկատէ իր ընտրեալին դրական եւ ուժեղ կողմերը, սատարէ անոր ամէն հարցի մէջ: Իսկ եթէ կինը տղամարդուն մէջ ոչ մէկ գրաւիչ յատկանիշ կը տեսնէ, ան հաճոյք չ'ստանար յարաբերութիւններէն եւ չի կրնար երջանկութիւն պարգեւել իր կողակիցին: Մշտապէս ամուսինէն դժգոհող կնոջ գեղձերու համակարգը կը խանգարուի՝ ազդելով անոր սեռային կեանքին վրայ: Ուստի, ներդաշնակ յարաբերութիւններ կառուցելու համար պէտք է անկեղծ ըլլալ եւ հաւատալ ձեր կողքին կանգնած գուզնկերով ուժին: Հակառակ պարագային բաժանումը անխուսափելի է:

Երրորդ կարեւոր կէտը՝ գիտելիքն է՝ Կինը տղամարդուն համար ուժի եւ ներշնչանքի աղբիւր դառնալու համար առաջին հերթին պէտք է հասկնայ գինք, ուսումնասիրէ անոր հոգեբանութիւնը, մտածելակերպը՝ կարողով բազմազան գիրքեր:

Բացի անկէ, կինը նաեւ պէտք է բազմակողմանի զարգացած ըլլայ եւ ճանչնայ այն աշխարհը, ուր կ'ապրի:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շարաքաթերօին**

**Save Support Sustain**  
 SYRIAN ARMENIAN RELIEF FUND  
 Syrian Armenian Relief Fund  
 P. O. Box 1948  
 Glendale, CA 91206-1948  
 www.syrianarmenianreliefund.org



### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19  
 Շատ լաւ լուր մը պիտի ստանաս եւ շատ պիտի ուրախանաս: Մեծ քաջութիւն ունիս դիմագրաւելու ռեւէ տագնապ եւ հանդարտութիւնդ բնաւ չես կորսնցնիր: Շատ ուրախ ես ընտանիքովդ որոնք քեզ շատ կը յարգեն: Արծակուրդ մը կը ծրագրես:  
 Բախտաւոր թիւերդ են: 5,11,23,25,32

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20  
 Երբեմն նախանձոտ կեցուածք կ'ունենաս երբ ուրիշին յաջողութիւնը լսես: Պիտի կընաս յաղթահարել այդ կեցուածքիդ եթէ խօսիս անոր մասին: Փափաքներդ մօտ առնեն կրնան իրականանալ: Բացարձակ գոհունակութիւն կը ստանաս ծառայելով:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,7,24,30,35

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20  
 Ապահովութեանդ վրայ շատ կը վախնաս ինքզինքդ տկար զգալով: Թող գործերդ գնահատանքի արժանացնեն քեզ եւ ոչ թէ ինքնագովութիւնը: Գործիդ մէջ անձի դէմ կը պայքարիս, սակայն ռեւէ արդիւնքի չես հասնիր, մոռցիր եւ գործդ շարունակէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,10,17,21,31

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22  
 Ծանր բեռ մը դրուած է ուսերուդ վրայ եւ չես գիտեր թէ ինչ պիտի ընես: Նիւթի մը շուրջ լրջօրէն կը մտածես առանց արդիւնքի: Միամտութիւնդ երբեմն չձգեր որ իրականութիւնները յստակօրէն տեսնես: Նուէր մը պիտի ստանաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,13,25,34,35

**ԱՌԻԲԾ** Յուլիս 23-Օգոստոս 22  
 Սէր եւ կարեկցութիւն արտայայտող անձ մըն ես որ կը սիրէ օգտակար ըլլալ բոլորին: Դուն քեզի համար ժամանակ տրամադրէ եւ պէտքերդ հոգա: Տնտեսական բարգաւաճում մը կենցաղդ պիտի բարեփոխէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 14,20,28,29,33

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22  
 Շատ կը սիրես ուրիշներէն տարբեր ըլլալ եւ երեւնալ: Գործիդ ծանրութիւնը առողջութեանդ կ'ազդէ, պէտք է անպայման բաժնես զայն ուրիշներում հետ: Գէշ լուրեր լսելը քեզ յուսախափութեան կ'առաջնորդէ, մի ազդուիր անոնցմէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,18,25,32,35

**ԿՇԻՈՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22  
 Պարտքերդ անցնելի են, ուրեմն փորձ վճառել անոնք իրենց ժամուն: Սրտիդ գաղտնիքները լաւ պահէ եւ զգոյշ եղիր զանոնք արտայայտելէ, որովհետեւ պիտի չ'ուզէիր որ մարդիկ իմանան զանոնք: Տարեցներուն միշտ յարգէ եւ հոգ տար:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,16,28,31,34

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21  
 Գործատեղիիդ մէջմեծ հեղինակութիւն ունիս փոխելու ուզածդ? չարաչար մի գործածեր այդ իրաւունքդ: Տարեցներու տուն մը պէտք է այցելես որպէսզի խիղճդ հարգասացնես: Քիչով գոհացող ես եւ չես ցանկար ուրիշին ունեցածին:  
 Բախտաւոր թիւերդ են: 8,15,23,25,31

**ԱՂԵՂՆԱԲՈՐ** Հոկտեմբեր 22-Դեկտեմբեր 21  
 Բարեկամներուդ հետ յարաբերութիւնդ զօրացուր որպէսզի աւելի ընկերութիւն եւ հարազատութիւն գտնես: Սի դժգոհիր գործերուդ համար որ անոնք շատ եւ  
 Բախտաւոր թիւերդ են: 9,12,23,33,35

**ԱՅԾԵՂԶԻՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19  
 Յիշատակելի օրեր ունիս անցընելիք հին բարեկամի մը հետ: Տնտեսական վիճակդ չնրեր որ երկար ճամբորդութիւններ կատարես երկար ժամանակուայ համար: Տանդ մէջ խրովութիւններ կրնան ըլլալ? սակայն երկար պիտի չտես:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,16,23,25,31

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18  
 Շատ կը սիրես դուն քեզ զբաղ պահել եւ հիւրասիրութիւն ընել: Բաւական ճոխ ամառնային արծակուրդ մը պիտի ունենաս եւ սիրելիի մը ներկայութիւնը վայելես: Առողջութեանդ լաւ հոգ տանելու ես, որովհետեւ քեզ սիրողները շատ են:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,14,17,22,34

**ԶՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20  
 Անակնկալ գործի առաջարկ մը շատ պիտի հետաքրքրէ քեզ, որուն հետեւանքով մեծ յաջողութիւններ պիտի կնքես: Զգուշացիր անմեղ երեւցող անձերու հաւատալէն: Մեծ եւ արժէքաւոր նուէր մը պիտի ստանաս:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,13,20,31,36

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 15-էն

աւարտներ՝ Ռիթա եւ Մէրի Քէօզկէրեաններ, Նարեկ Քիւրտեան եւ Արփի Պոչաճեան գեղեցիկ հայկական եւ օտար երաժշտական դասական կտորներ հրամցողներն են ջութակի վրայ:

Հանդիսութեան վերջաւորութեան տեղի ունեցաւ գնահատագրերու տուուչութիւն, Տնօրէնութեան գրասենեակէն Տիկին Արմինէ Շէրիկեան յայտարարեց արժանաւոր վկայներու անունները եւ Քոյր Լուսիայի ձեռամբ յանձնուեցան պատշաճ գնահատագրեր, որուն աւարտին Նախագահական գնահատագրի արժանացողներէն Յոլեր Տէմիրճեան ներկայացուց իր սրտի խօսքը:

Վկայականաց բաշխման նախօրեակին բոլորին կը սպասէր հաճելի անակնկալ մը՝ շրջանաւարտ Նոյ Շաթոյան իր աւարտական տարուան ընթացքին դասերու կողքին նաեւ աշխատած եւ յօրինած էր երաժշտական գեղեցիկ կտոր մը նուիրուած? 11 տարուան իր երկրորդ տունը համարուող Հ.Ք. Վարժարանին, դաստիարակներուն եւ անձնուրաց քոյրերուն, ան մեծ ապրումով նուագեց իր յօրինուած քը, մինչ ներկաները հիասքանչ ծափող ժիւններով շնորհաւորեցին տաղանդաւոր Նոյը, որուն կը սպասէ

փայլուն ապագայ:

Վերջապէս սպասուած պահը եկած էր աշակերտները մեծ ուրախութեամբ նաեւ յուզումով ստանձնեցին իրենց վկայականները եւ նուէրները եւ համբերութեամբ լսեցին Գերապաճառ Մուրատեանի գիրենք քաջալերող եւ խթանող խօսքերը, ինչ որ անգամ մը եւս հաստատեց թէ՛ Հ.Ք. Վարժարանէն ստացած քրիստոնէական եւ հայցի դաստիարակութիւնը գիրենք յաջողութեամբ պիտի առաջնորդէ դէպի բարձունքներ: Եւ Արմինէ Շէրիկեան յայտարարեց եւ գոչեց աւարտականները՝ 2016 տարուան Շրջանաւարտներ, անոնք ծափող ժիւններու եւ ուրախութեան բացազանջութիւններու ընդմէջէն մէկ կողմ նետելով իրենց գլխարկները հեռացան սրահէն մինչ թաթայի «Վերջին Ձանգ»-ի երաժշտութիւնը տակաւին կը լամենար վարժարանի պատերէն ներս:

Ուրախութիւնը շարունակուեցաւ «Տիւրք» ճաշարանէն ներս՝ կարկանդակի հատումով, շքեղ ընթրիքով, պարերով եւ երաժշտութեամբ: Հայ Քոյրերու Վարժարանի 2016 ուսումնական տարեշրջանը այսպիսով վերջ գտած էր, աւելցնելով վարժարանի պատմութեան վրայ տարի մը եւս իր յաջողութիւններով եւ նուաճումներով:

### ՏԱՐԵՎԵՐԶԸ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Շարունակուած էջ 15-էն

ու սիրասուն մայրերուն: Ներկաները ապրեցան խանդավառութեան եւ հրճուանքի անմոռանալի պահեր՝ ի տես իրենց հոգեհատորներուն, որոնցմէ շատեր, 10 ամիսներ առաջ հագիւ կը խօսէին կամ կը քալէին, իսկ հիմա, հայերէն եւ անգլերէն լեզուներով կ'արտասանէին, կ'երգէին ու մանաւանդ կը պարէին... Վարձքը կատար բոլոր ծնողներուն եւ անոնց զաւակներուն քայլերը առաջնորդող ուսուցիչներուն:

Շաբաթ 4 Յունիս, 2016ին, դարձեալ վարժարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Մերտին-

եանի Մանկապարտէզի բաժնի վկայականաց բաշխման հանդիսութիւնը: Ներկաները անխառն հաճոյքով վայելեցին Մաղիկ Դասարանի զոյգ բաժնիները աւարտող 35 աշակերտներու ելոյթները: Անոնք արհեստավարժ դերակատարներու նման երգեցին, արտասանեցին, պատկերներ ներկայացուցին, նոյնիսկ ներկաները Հայաստան տարին իրենց հետ, ապա ստացան իրենց առաջին վկայականները:

Հանդիսութեան վերջաւորութեան խօսք առաւ տնօրէնուհի Տիկ. Լինա Արսլանեանը, որ շնորհաւորեց ծնողներն ու շրջանաւարտները, շնորհակալութիւն յայտնեց ուսուցիչներուն եւ բարի արձակուրդ՝ բոլորին:

### ՈՎ ԻՆՉ ԱՆԻ, ԻՐԱՆ ԿԱՆԻ

Շարունակուած էջ 13-էն

-Այո՛, լաւապէս գիտեմ, բայց պէտք է անել եւ միշտ անել, ժամանակը պարապի անց չկացնել:

Մեր երկխօսութիւնը չչարունակուեց, մտքով տարուեցի տատիկի պատասխան խօսքով: Այո՛, մեր մայրերը արել են, մայրս անգամներ մեր ընտանիքի համար բլուզներ է գործել, որոնք թէ՛ դիմացկուն էին եւ թէ՛ շահաւէտ: Հիւսուած քաղործութիւնը եւ ասեղնագործութիւնը տարածուած է եղել հայ ընտանիքներում, արուեստի

գործեր են ստեղծուել, նմուշները մեր թանգարաններում տեսանելի: Անկասկած հայ մայրը զոհողութիւններով է կեանք ապրում նուիրուած ընտանեկան կազմին, բայց այստեղ Ամերիկայում կարծես մոռացուած է այս ձեռագործութեան արուեստը, որը պարապ ժամանակի մտերիմ ընկերն է եւ շնորհքների ցուցադրումը, ժամանակին նաեւ ոմանց համար եկամտաբեր աշխատանքի աղբիւր էր: Ժամանակը արժեւորող այդ սիրելի տատիկը ինձանից շուտ իջաւ, նրանից յետոյ՝ ես:

**Director of Fellowship Ministry Position**  
 "St. Gregory Armenian Church of Pasadena is looking for applicants for a full-time position as Director of Fellowship Ministry. It requires organizing committees and teams of volunteers to plan, develop and execute parish activities. For more information, please call the parish office at 626-449-1523."



ՄԱՅԱԶԴ



ՄԱՆՈՒԿ ՍԷՖԷՐԵԱՆ  
1936-2016

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր ամուսնոջն, հօր, եղբոր եւ հարազատին ՄԱՆՈՒԿ ՍԷՖԷՐԵԱՆի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 22 Յունիս, 2016ի կէսօրէ ետք ժամը 3:00ին Լոս Անճելոսի U.S.C. հիւանդանոցին մէջ, սրտի կաթուածի պատճառով:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 2 Յունիս, 2016ին, Շիքակոյի Evenstonի St. James Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Էլմաս Սէֆէրեան
- Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Պարպարա Սէֆէրեան եւ զաւակները
- Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Պահա եւ Արշալոյս Տէպիշ եւ զաւակները
- Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Մարիա Պետրոսեան եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Վինսէնթ եւ Մելինէ Գարթապիանո
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Նուէր Սէֆէրեան եւ զաւակները
- Քոյրը՝ Այրի Տիկ. Թագուհի ճորճեան եւ զաւակները
- Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Վերգին Գոճաւագեան եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Սոնիկ Գասարճեան եւ զաւակները
- Այրի Տիկ. Լորա Սէֆէրեան եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Նուարդ Ղազարեան եւ զաւակները
- Այրի Տիկ. Ալիս Այվագեան եւ զաւակները
- Այրի Տիկ. Ժազլին Կարապետեան եւ զաւակները
- Եւ համայն Սէֆէրեան, Մելիտոնեան, Մուճուզեան, Չէօրէքճեան, Բարսեղեան, Տանիէլ, Տէմիրճեան, Մուրատեան, Գասարճեան, Թահան, Պուլղուրճեան ընտանիքները եւ հարազատները:

ՅԱՄԱԿՅԱԿԱՆ

ՄԱՐԻՃԱՆ ՄՈՒՂԱԼԵԱՆԻ մահուն տխուր առիթով (մահացած Պէյրութ), «Մասիս» շաբաթաթերթը եւ մեր շրջանակը, իրենց խորագրաց վշտակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն եւ մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկին Ռուբէն Մուղալեանին:

\*\*\*

Նոյն տխուր առիթով, «Կայծ» երիտասարդական միութիւնը իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ «Կայծի» պատասխանատուներէն Ընկ. Ռուբէն Մուղալեանին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԱՐԱԾԱՆԻ ԱՓԻՆ

Շաբուկապատէջ 16-էն

գալ, շարունակելու Աստղիկին նուիրուած Վարդավառի տօնախմբութիւնը: Կանչում թմբկահարներին ու փողահարներին թմբուկ զարկէին, ծիրանափողեր հնչէին, քրմուհիների դասը Արմինայի Տիր աստուծոյ բնութեան սքանչանքին ձօնուած տաղերի երգերը ասէին: Արքաները, թագաւորները, իրենց տիկնանց եւ աշխարհական մարդկանց հետ բացատ գալիս: Առանց դասի խորութեան՝ բազում բոլորակ շարքեր կազմում, նրանց եզրերին՝ որդան կարմիր հագուստներով, կրակավառ թաշկինակներ վեր պահած թագուհիներն էին: Զարկում էին թմբուկները, հնչում էին նուագարանները, քրմուհիները որոտաձայն երգերով ընկերակցում նրանց: Թագուհիներն էին փերիների նման ճախրել, նրանց վեր պարզած թաշկինակներն էին գեփիւռի հետ օրօրուէլ հրդեհուէլ էր բացատը, պարի ելած մարդկանց էլեւէջներով ալիքուէլ էր բացատը,

դողում էր բացատը: Եւ յանկարծ, վահագնը Աստղիկին ու Նար Մովինարին յաղթ բազուկներով վեր պահած, մտել բացատ: Միհր աստուածը, երկնակամարի կապոյտին բազմած ժպտում էր, լոյս էր վարարում պարողների վրայ: Սաստկանում են թմբուկների զարկերը, ահագնանում են նուագարանների հնչիւնները, նրանց էլեւէջների խինդից պարի ելած արմինները՝ աւելի ուժգին էին զարկում գետինը, բացատն էր իրենց հետ օրօրում, Արածանի ջրերն էին զարկում իրար, փշրում, լոյսի հեղեղ վառում Արմինա երկրում: Եփրատ գետ հասած Արածանի ջրերը, արմինների ողջոյնն էին տանում հարաւի ցեղակիցներին: Ո՞վ դու արարչական Արմին-Հայ, եթէ երկիր վերադարձած արմինների հետ չէիր հասել Արածանի փերիին Վարդավառ տօնախմբելու, քու հանգրուանած երկրում տօնախմբի՛ր այն, Աստղիկ ու Նար Մովինարի իմաստութեան լոյսի պատուները հոսի՛ր զաւակներիդ սրտերին, որ

նախնիներիդ Արա աստուծոյ կրակի ու լոյսի բոցերով վառուեն նրանց սրտերը: Մանչերիդ հետ գնա՛ Միհրի արեւի տաճար, նրա առաջին լոյսի շողերով ցօղի՛ր նրանց աշուկները, թեւերիդ վրայ նրանց պահած բարձրացիր՝ մեհեան, ատուղանի Արա աստուծոյ կրակի լոյսը ցանիր նրանց դէմքերին, որ այնտեղ վառուէր հին աստուածներիդ ոգեղէն հուրը: Ո՞վ Արմին-Հայ մարդ, չե՞ս հաւատում, մի պահ ակներդ գոցիր, պատուիր երեւակայութեանդ պատանները, քեզ էլ տեսնելու ես նախնիներիդ Վարդավառին նրանց հետ պարի ելած, հաւատա՛ արարչական քու ցեղիդ ոգու կրակին: Փլոււմ են պարերի կլոր շարքերը, արքաներ, թագաւորներ, իշխաններ, թագուհիներ, աշխարհական մարդիկ ողջագուրում, ժպտալին համբոյրներ շարում իրարու քրտնաթոր, արեւած կարմիր երեսներին, բարի Վարդավառ մաղթում Աստղիկին, վահագնին, իսկ Նար Մովինարին՝ ջրի արարման յաւերժութիւն: Վարդավառ էր, կարգն էր այդպէս: Արմինների շէնքերի մարդիկ բացատը լցնում իրենց հետ բերած կթոցներով լի մրգերով, կեղրոնում շարում գինիով լեցուն սափորներ: Վարդավառ էր, նրա արթնած իմաստութեամբ ու աստուածների խմիչք գինիով պիտի արբենային: Արջառներ են գոհաբերում Աստղիկի ու Նար Մովինարի առաջ, արիւն հեղում նրանց ճակատներին: Վարդավառ: Լեռնաշխարհի լանջերին վառուող ծաղկունքի, նրա հովիտներում արեւշող կարմիր վարդերի, սիրոյ ու գեղեցկութեան աստուածուհի՛ Աստղիկի եւ Նար Մովինար աստուածուհու ջրերի արարման փառաբանման Վարդավառեան տօնախմբութիւններ էին: Արմին քերթողներ, ծաղիկ, սիրոյ, լոյսի, կենարար ջրին նուիրուած տաղեր են յօրինել, երգեր հիւսել, որոնց հէքիաթային արարումների սքանչանքից արմինների սրտերին սարսուռի դող իջել: Վարդավառ: Վառուող արեւաբոյր վարդերին, կենարար ջրերի օրհնութեանը, պտղաբերութեանը, արգասաւորութեանը նուիրաբերուած տօնախմբութիւններ էին: Արեւի լոյսից ու երկնքից իջած ջրերից պայթած ծիածանի հազար գոյների ծաղիկներ ու վարդեր էին նուիրում իրար, իրենց հրաբորբ սիրոյ երգիչներին, որ բնութեան հրաշափառ հէքիաթը իջէն նրանց սրտերին: Միտոյ խայտանքով աղանիներ էին երկիրք թոցրել, որ նրանց սիրոյ ճախրանքով արբենային, նրանց կտուցներին ծաղիկներ դրել, որ տանէին իրենց աստուածների տիեզերական տաճարներ: Թագուհիներին թեւանցուկ արած արքաներ, թագաւորներ, իշխաններ, նրանց հետ բազում շինականներ, վարդերի ու լեռների լանջերի ծաղկունքի փունջեր վեր պահած՝ մօտենում Աստղիկին ու Նար Մովինարին: Ծաղկունք էր հոսել նրանց իրաններին, Աշտիշատի աստուածները կարծել էին, որ արեւ աստուած Միհրը եկել ու նրանց վրայ հազար գոյների ծիածան հանդերձ կապել: Մեհեանի քուրմերը հաւատացել էին, որ Աստղիկ ու Մովինար ծաղկունքից էին բուսել: Բազմախումբ շինականները, բոլորին, բոլորին կանչել էին բացատ, իրենց մարաններում հասունացած կարմիր կրակ գինի լցրել նրանց թասերին, առանց դասի խորութեան այն զարկել իրարու, ողջութեան կենաց մաղթել,

գինի-գինի ըմպել, արբեցել, գինի շաղ տուել իրար վրայ, գինի ցօղել Աստղիկի ու Մովինարի վրայ, որոնց իրաններից կարմիր կրակ էր շիթ-շիթ հոսում: Մովինարից խնդրել էին առաւ ջուր հոսել իրենց Սրբազան Լեռնաշխարհի հանդեր, Աստղիկին խնդրել, արգասաւորութիւն, պտղաբերութիւն լինէր այնտեղ: Գինուց ու Վարդավառի ջրերի արթնած ոգուց արբեցած երկիր եկած Արմին կարաւանի արորդիները՝ թասերը վեր բարձրացրած աստուածներին յարատեւութիւն մաղթել, ծնրադրել արքաներին, նրանց ծիրանի պարեգօտները մօտեցրել ճակատներին, խնդրել իրենց տիրոջութեանը ապաստան շնորհել, գնացել Աստղիկի ու Նար Մովինարի հետ գինու թասեր զարկել, անէացած նայել, նայել նրանց լոյստու դէմքերին, նրանց յաւերժութեանը կենաց ասել, ապշել, որ Արմինա աշխարհի արեւորդիները ինչպէ՞ս էին իրենց աստուածներին մարդացրել: Աստղիկն էր բացատ ելել, բոլորը-բոլորը կլոր շարքերով խմբուէլ էին նրա շուրջը, ծիրանի փողերը բնութեան հեւքի մեղեդիներ էին հնչել: Աստղիկը, արեւահոլ վարսերը ետին հոսած, մշուշոտ հանդերձ իրանին՝ մենապարի ելել: Հովիկների նման մեղմիկ հոսում էր իրանը, բացատով անցած գեփիւռի թովջանքից Տուշպուէա ծովակի ալեակների նման փրփրում, Միհր աստուծոյ լոյսի շողերից հալում մշուշոտ հագուստը, լուսնի անուշ դէմքով սպիտակ իրանն էր արեւազալի լոյսի նման փայլում: Նար Մովինարն էր սափորը ուսին մօտենում Աստղիկին՝ ջուր հոսում իրանին, կանչում պարմանապարմանուհիներին զալ Աստղիկի իրանից շիթերով հոսած ջուրը ըմպել, որ արգասաւորութիւն լինէր: Բոլորին-բոլորին նորէն տանում Արածանի, կանչում մտնել ջրեր, ափերով, թասերով ջուր ցանել իրար վրայ: Պարմանները՝ պարմանուհիների իրաններից հոսած ջուրն են անյազ ըմպել, ճողբել Արածանի ջրերը, անցել միւս ափ՝ արգասաւորութեան հրավառութիւն տօնախմբել: Այս բոլորը որ գրեցի երեւակայութեան արդիւնքն էր, թէ՛ իրապէս կարող էր նախնիների տօնախմբութիւն եղած լինէր... կարո՞ղ էր: Հաւատա՛, որ «աստուած» բառը որեւէ ինքնութեան արտայայտութիւն չէ, «Աստաշտ» կրակ իմաստ ունէր, որ շնորհուէր էր կրակի խորհուրդը նշանաւորող «Արա» հայոց իմաստուն Մեծ-Ին: Արմին ԱՐ-ի մարդիկ իրենց մեծերին այնքան էին սիրել, որ նրանց «կրակ» իմաստով աստուածացրել, նրանց մեծարել, շնորհել բնութեան հրաշքի որեւէ երեւոյթ: Ափոստ, որ փլեցին այն, դաւեցին արեւորդի արի մարդկանց ցեղին... փլուեց նաեւ Արմա-Արմին մարդկանց դրախտիկ երկիրը: Վանքում, աշխարհի մեղքերի քաւութեան համար աղօթող նոր հաւատքի սպասաւոր, ճակատին Տիր աստուծոյ եօթ գոյնի ծիածան կապած Արմին-Հայ հրաշք բանաստեղծ՝ Նարեկի սրտում պայթել էր նաեւ նախնիների աստուածների իմաստութեան խորհուրդը, Վարդավառի տօնին նուիրել էր իր հոգու խորանում վառուող կարօտի լոյսը: Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփեմից: Ի վեր ի վերայ վարսից ծաւալէր ծաղիկ ծովային:



### Ռոյ Քոչսոնը Քրաժարական Տուեց

Ֆուտբոլի Անգլիայի հաւաքականի գլխավոր մարզիչ Ռոյ Քոչսոնը Ֆրանսիայում ընթացող Եւրոպայի առաջնութեան 1/8 եզրափակիչում իսլանդացիներէ կրած 1:2 հաշուով սենսացիոն պարտութիւնից յետոյ հրաժարական է տուել:



«Իհարկէ, հիասթափուած եմ: Անընդունելի է, որ Անգլիան այսքան շուտ է լքում պայքարը, եւ դրանում կայ իմ մեղքը: Այդ պատճառով ես հեռանում եմ Անգլիայի հաւաքականից: Հաճոյքով կը մնայի եւս 2 տարի, բայց ես պրագմատիկ եմ, իսկ ֆուտբոլում կարեւոր է արդիւնքը: Մենք չհասանք դրան: Ես չհասայ դրան: Խաղացողները կատարեցին այն ամէնը, ինչ ես ասել էի»,- մարզիչի խօսքը մէջբերում է Daily Mail-ը:

68-ամեայ Քոչսոնը 2012-ից է աշխատում Անգլիայի հաւաքականում: Առաջին անգամ Եւրոպայի առաջնութեանը մասնակցող Իսլանդիան դարձաւ քառորդ եզրափակիչի վերջին մասնակիցը եւ կիսաեզրափակիչի ուղեգրի համար կը պայքարի Ֆրանսիայի հաւաքականի հետ: Եւրո-2016-ի քառորդ եզրափակիչի միւս զոյգերն են՝ Գերմանիա - Իտալիա, Ուելս - Բելգիա եւ Լեհաստան - Պորտուգալիա: Քառորդ եզրափակիչը կը մեկնարկի Յունիսի 30-ին:

### Մեսիից Յետոյ Արգենտինայի Թիմից Ստադիր Է Զեռանալ Եւս Վեց Խաղացող



Ամերիկայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում Չիլիին յետխաղեայ 11 մետրանոցներով պարտուելուց յետոյ Արգենտինայի հաւաքականից հեռանալու մասին յայտարարեց «Բարսելոնայի» յարձակուող Լիոնել Մեսին: Նրա օրինակին հետեւել մտադիր են նաեւ Խավյէր Մասկերանոն եւ Սերխիո Ագուերոն:

32-ամեայ Մասկերանոն 2003 թուականից Արգենտինայի հաւաքականում անցկացրել է 129 հանդիպում, խփել է երեք գոլ: 28-ամեայ Ագուերոն 76 խաղում խփել է 33 գոլ:

Հաւաքականում կարիերան աւարտել մտադիր են նաեւ Գոնսալո Իգուանինը, Էսկելիել Լակասին, Լուկաս Բիլիան եւ Անիել Դի Մարիան, հաղորդում է ESPN-ը:

Արգենտինան պարտուած է արդէն երեք անընդմէջ եզրափակիչներում: 2014թ. աշխարհի առաջնութեան եզրափակիչում Գերմանիային պարտուելուց յետոյ թիմը պարտուել էր նաեւ 2015թ. Ամերիկայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում՝ դարձեալ Չիլիին:

### Ռոնալդուն Երկարաձգել Է Պայմանագիրը «Ռէալի» Զետ

Պորտուգալիայի հաւաքականի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն երկարաձգել է պայմանագիրը Մադրիդի «Ռէալի» հետ, հաղորդում է Marca-ն: 31-ամեայ ֆուտբոլիստի նոր պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2020 թուականը: Նախորդ պայմանագիրը մինչեւ 2018 թուականն էր:



Ռոնալդուի աշխատավարձը չի փոխուել: Նա կը շարունակի ստանալ տարեկան 21 միլիոն եւրո (հարկերի վճարումից յետոյ): Նոր պայմանագրի մասին պաշտօնական յայտարարութիւնը կը լինի Եւրո-2016-ից յետոյ: Սպասուած է, որ Ռոնալդուն Արքայական ակումբում էլ կ'աւարտի ֆուտբոլիստի կարիերան:

### Զենրիխ Միխարեանը «Մանչեսթր Եունայթեդից» Կը Ստանայ 12 Միլիոն Եւրո



Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականի եւ Դորմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Միխարեանն անգլիական «Մանչեսթր Եունայթեդի» հետ կը կնքի չորս տարուայ պայմանագիր: 27-ամեայ ֆուտբոլիստի տարեկան աշխատավարձը կը լինի 12 միլիոն եւրո:

Ժողէ Մոուրինյոյի գլխավորած ակումբը հայ ֆուտբոլիստի տրանսֆերի համար «Բորուսիային» կը վճարի 40 միլիոն եւրո: Սպասուած է, որ տեղափոխութեան մասին պաշտօնական յայտարարութիւն կը լինի արդէն այս շաբաթ:

### Ռիո-2016. Հայաստանը Ստացաւ Եւս Երկու Օլիմպիական Ուղեգիր

Ռիո-2016 31-րդ ամառային Օլիմպիական խաղերում Հայաստանի օլիմպիական թիմը կը համալրուի նաեւ 2 լողորդով: Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ասաց լողի Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչ Միսակ Գաբրիէլեանը:



«Միջազգային օլիմպիական կոմիտէից արդէն ստացել ենք Ռիո-2016-ի մասնակցութեան երկու ուղեգիր հաւաքականի առաջատար լողորդների անուններով՝ Վահան Միխարեանի եւ Մոնիկա Վասիլեանի: Շատ ուրախ եմ, որ լողորդները եւս հնարաւորութիւն ստացան մասնակցել Օլիմպիական խաղերին:

Դեռեւս Օլիմպիական խաղերի նախապատրաստական փուլը չենք սկսել: Այժմ նախապատրաստուած ենք Ռիոյում կայանալիք վերջին վարկանիշային մրցաշարին, որին կը մասնակցի Վահան Միխարեանը: Տեսնենք Վահանն ինչ կ'անի վարկանիշային մրցաշարում, դրանից յետոյ նոր կ'որոշենք, թէ ինչ ծրագրով են լողորդները մեկնարկելու օլիմպիական մարզումային փուլը: Իսկ սպիտակ քարտով ուղեգրերն արդէն ունենք, ինչի համար իսկապէս անչափ ուրախ եմ»,- ասաց Միսակ Գաբրիէլեանը:

Այսպիսով՝ Ռիո-2016-ի Հայաստանը կը մասնակցի 31 օլիմպիականներով: Օլիմպիական նորմատիվները լրացնելու պայքարը դեռեւս շարունակում են հայ աթլետները: Աթլետիկայի օլիմպիական նորմատիվները լրացնելու մրցաշարերը կը շարունակուեն մինչեւ Յուլիսի 21-ը: Օլիմպիական ուղեգրերի համար Յուլիսի 3-ին վենեսուելայում պրոֆեսիոնալ բռնցքամարտիկների համար նախատեսուած միակ վարկանիշային մրցաշարում կը պայքարեն նաեւ բռնցքամարտիկներ Յովհաննէս Բաչկովը եւ ամերիկաբնակ Գաբրիէլ Տոլմաջեանը:

Յիշեցնենք, որ մինչեւ այս Հայաստանը Ռիոյի օլիմպիական ուղեգրեր է նուաճել 7 մարզաձեւից 29 մարզիկ. յունահունական ըմբշամարտ՝ 4 ուղեգիր, ազատ ոճ՝ 4 ուղեգիր, բռնցքամարտ՝ 4, ծանրամարտ՝ 7 (տղամարդիկ՝ 5, կանայք՝ 2), մարմնամարզութիւն՝ 3, աթլետիկա՝ 5, ձիւղօ՝ 1, հրաձգութիւն՝ 1 (սպիտակ քարտով):

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**